

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՐԱԿԱՆ ԿԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ՋԻՆԿԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԵՐԱՄԻՇՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Հողվածներում ամփոփված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի տեսակետներին:

ISBN 978-92-9235-886-0



Տպագրվել է «ԱՍՈՂԻԿ» տպարանում

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

Այս հրատարակության մեջ գետեղված հոդվածները թեմատիկորեն միմյանց հետ կապված են Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների մասին ԵԱՀԿ վարքագծի կանոնագրով, որը անվտանգության համաշխարհային մարտահրավերները լուծելու ԵԱՀԿ հիմնական մեխանիզմներից մեկն է: Քննարկված լինելով Անվտանգության ոլորտում համագործակցության ֆորումի ժամանակ և ընդունված լինելով Բուդապեշտի 1994թ. գազաթափողովում՝ այն դեռևս հանդիսանում էզակի փաստաթուղթ, որի նպատակն է կարգավորել զինված ուժերի դերը ժողովրդավարական հասարակություններում: Կանոնագիրքը շեշտում և ամրապնդում է Հելսինկյան եզրափակիչ ակտի հիմնական սկզբունքները՝ մասնակից պետությունների համար մշակելով «խաղի կանոնները», որոնք հիմնականում վերաբերում են ուժի չկիրառմանը: Սակայն կանոնագիրքը ավելի առաջ է գնում Հելսինկյան եզրափակիչ ակտի տրամաբանությունից՝ սահմանելով ռազմաքաղաքական ասպեկտների կարևոր նորմեր և «վարքագծային չափանիշներ»՝ ներպետական մակարդակով:

Չինված ուժերում ժողովրդավարական վերահսկողության տեսանկյունից՝ VII և VIII բաժինները հստակորեն նկարագրում են իրենց զինված ուժերում, այդ թվում՝ ռազմական, ռազմականացված և անվտանգության ուժերում, հետախուզական ծառայություններում և ոստիկանությունում քաղաքացիական վերահսկողության իրականացման համապարփակ մեխանիզմ մշակելու մասնակից պետությունների պարտավորությունները: Առանց արդյունավետ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության և անվտանգության ոլորտի ինստիտուտների կառավարման՝ չի լինի էական առաջընթաց ընդհանուր անվտանգության մասով, ինչը բացասական ազդեցություն կունենա նաև տնտեսական և մարդկային հարթությունների անվտանգության վրա: Ուստի զինված ուժերի ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողությունը, ինչը տրամաբանորեն ենթադրում է ինչպես սովորական զինված ուժերի, այնպես էլ ներքին անվտանգության ծառայությունների ներառում հստակ սահմանված սահմանադրական և իրավական դաշտում, ներկայումս ընդունվում է որպես հակամարտության կանխարգելման և վստահության ձևավորման միջազգային կարևոր գործիք:

Հայաստանի Հանրապետությունը, ինչպես նաև ԵԱՀԿ բոլոր անդամ պետությունները լիարժեք պարտավորություն են ստանձնել իրականացնելու կանոնագիրքը և ԵԱՀԿ երևանյան գրասենյակը համապատասխան մարմիններին տրամադրում է համակողմանի աջակցություն՝ ընդհանուր անվտանգության ոլորտի բարեփոխումների համար:

Այս հրատարակությունը մեր գրասենյակի և ՀՀ Պաշտպանության նախարարության, մասնավորապես Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների կենտրոնի միջև սերտ համագործակցության արդյունքն է: Հուսով եմ, որ այս հրատարակության մեջ գետեղված հոդվածները, որոնք նվիրված են կանոնագրի պատմությանը, կանոնագրի դրույթների իրականացման գործում Հայաստանի և միջազգային փորձին, գործնականում հետաքրքրության կարժամանան քաղաքացիական հասարակության, դասախոսների և քաղաքականություն ձևավորողների շրջանում:

*ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար
Դեսպան Սերգեյ Կասպինո*

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը Հայաստանում ժողովրդավարական արժեհամակարգերի ու հաստատությունների կայացմանը և տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատմանն աջակցելու չափումներում իր առաքելությունն իրականացնում է պետական ու հասարակական կառույցների հետ բազմապլան համագործակցության միջոցով:

Այդպիսի համագործակցության արգասիք է նաև ներկայացվող ժողովածուն: Այն իրողությունն դարձավ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Դրաստամատ Կանսայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի կազմակերպական ու գիտական համատեղ աշխատանքի շնորհիվ:

Համոզված եմ, որ ժողովրդաիշխանության սկզբունքի և մարդու իրավունքների գերակայության դիրքերից Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողության և հարակից պրոբլեմների բավականին արժեքավոր գիտավերլուծական նյութ և գործնական առաջարկություններ պարունակող սույն ժողովածուն ռեալ ներբերում կունենա ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կառուցողական համագործակցության մեջ:

Հ. Ս. ԶՈԹԱՆՋՅԱՆ

Գեներալ-մայոր

*Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության
Դրաստամատ Կանսայանի անվան ազգային ռազմավարական
հետազոտությունների ինստիտուտի պետ –
պաշտպանության նախարարի խորհրդական,
քաղաքական գիտությունների դոկտոր*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Վարքականոնի բանակցություններ. Լեհաստանի մոտեցումը (1996 թ.)	7
Վարքականոնի քաղաքական համատեքստը. ներածություն	7
Վարքականոնում ընդգրկված կոնկրետ պարտավորությունները և դրանց սկզբնաղբյուրները.....	10
Վարքականոնի բանակցություններից քաղած դասերը	12
Վարքականոնի ապագան.....	13
Պաշտպանական ոլորտի կառավարման նկատմամբ հսկողության և վերահսկողության համակարգը Հայաստանի հանարապետությունում	14
1. Թափանցիկությունը և հաշվետու լինելը՝ որպես պաշտպանական ոլորտի կառավարման նկատմամբ արդյունավետ վերահսկողության նախապայման, ու դրանց սահմանադրական կարգավորումը.....	15
1.1. Թափանցիկությունը և հաշվետու լինելը, դրանց դերն ու նշանակությունը	15
1.1.1. Թափանցիկությունը	15
1.1.2. Հասարակությանը հաշվետու լինելը	20
1.2. Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը՝ որպես օրինականության ապահովման միջոց, և դրա իրավական ամրագրումը ՀՀ օրենսդրության մեջ	24
2. Պաշտպանական ոլորտում հսկողության մարմինները՝ որպես օրինականության ապահովման միջոց	29
2.1 ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանությունը՝ որպես օրինականության ապահովման միջոց	29
2.2. ՀՀ զինվորական դատախազությունը՝ որպես օրինականության ապահովման միջոց	34
2.3. Պաշտպանական ոլորտի կառավարման նկատմամբ հսկողության ներկազմակերպական համակարգը.....	34
3. Պաշտպանական ոլորտի կառավարման նկատմամբ վերահսկողության համակարգը.....	36
3.1. ՀՀ Ազգային ժողովը՝ որպես ժողովրդավարական վերահսկողության մարմին.....	36
3.2. ՀՀ վերահսկիչ պալատը՝ որպես ժողովրդավարական վերահսկողության մարմին.....	40
3.3. ՀՀ դատական համակարգը՝ որպես ժողովրդավարական վերահսկողությունը ապահովող մարմին	41
3.4. Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը՝ որպես ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմ	42
3.5. Հասարակական վերահսկողությունը՝ որպես ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմ.....	44
Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը Ամերիկայի Միացյալ Նահանգներում և դրա տարածումը հետկոմունիստական տարածաշրջանում.....	47
Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն ԱՄՆ-ում	51
Ձինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ներդրում հետկոմունիստական տարածաշրջանում սառը պատերազմից հետո	56
ՀՀ պաշտպանական ոլորտի կառավարման կատարելագործման որոշ հարցեր.....	62
ՀՀ պաշտպանական ոլորտի ֆինանսական վերահսկողությունը՝ որպես ժողովրդավարական վերահսկողության բաղկացուցիչ մաս.....	70

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը՝ որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության կառուցակարգ	74
Քաղաքացիական հատուկ ծառայությունը՝ որպես զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության միջոց.....	84
Ձինվորական ծառայության կարգի դեմ ուղղած հանցագործությունների համար նախատեսված քրեական պատասխանատվության պրոբլեմները ՀՀ-ում	93

ՎԱՐՔԱԿԱՆՈՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԼԵՅԱՍՏԱՆԻ ՄՈՏԵՑՈՒՄԸ (1996 թ.)

ԱԳԱՄԿՈՔԵՐԱՅԿԻ¹

Պարզաբանում ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից

Թեպետ այս հոդվածի հրապարակումից հետո անցել է 15 տարի, սակայն դրանում ընդգրկված բազմաթիվ գաղափարներ ու դիտարկումներ շարունակում են մնալ հրատապ: Անցյալ դարի իննսունականների կեսերին ԵԱՀԿ-ում շարունակվում էին 21-րդ դարի Եվրոպայի անվտանգության մոդելի ստեղծման աշխատանքները: Այս հոդվածի պարունակությունը և բովանդակությունը արժե կարդալ ԵԱՀԿ-ում «Կորֆուի գործընթաց» կոչվող ընթացիկ քննարկումների շրջանակում:

Գրասենյակն իր երախտագիտությունն է հայտնում հեղինակին՝ արտատպման բույլավորության համար:

Գրծեզորժ Միխայլիկ
Ռազմաքաղաքական բաժնի ղեկավար
2009-2011

Վարքականոնի քաղաքական համատեքստը. ներածություն

Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ վարքականոնը պարունակում է անվտանգության բնագավառում պատասխանատու և համագործակցային վարքագծի մի շարք սկզբունքներ, դրույթներ, կանոններ ու կարգեր: Վարքականոնում ներառված պարտավորությունները վերաբերում են միմյանց հանդեպ պետությունների և իրենց բնակչության հանդեպ կառավարությունների ունեցած պատասխանատվություններին: Վարքականոնի բուն գաղափարը ծագել է Հելսինկյան խորհրդաժողովից հետո՝ 1992 թվականին կայացած հանդիպման ժամանակ, և ընդգրկվել այնտեղ ստեղծված ԵԱՀԿ-ի Անվտանգության համագործակցության ֆորումի մանդատում: Կախված տեսանկյուններից՝ այս գաղափարի ծագման վերաբերյալ բացատրությունները կարող են տարբեր լինել: Նախ, կքննարկվի Վարքականոնի քաղաքական համատեքստը:

ԵՄ տեսանկյունից՝ Վարքականոնը չափազանց կարևոր էր և հանդիսանում էր արտաքին և անվտանգության ընդհանուր քաղաքականության առաջին համապարփակ արտահայտությունը: Այսպիսով, Վարքականոնը դիտարկվում էր որպես եվրոպական անվտանգությանը և առաջին հերթին՝ դրա ռազմաքաղաքական ասպեկտներին առնչվող կանոնների շարքին: Այն միտված էր արտացոլելու ԵՄ-ի դերը եվրոպական անվտանգության համակարգում և այդ համակարգի ըմբռնման համար: Հավանաբար այս քաղաքական և ինչ-որ չափով ազդեցիկ շարժառիթների պատճառով է, որ ԵՄ պետություններն այնքան շատ են կարևորում Վարքականոնի նախագիծը, որ գրեթե անհ-

¹ Նախկինում եղել է Լեհաստանի դեսպանը ԵԱՀԿ-ում և այլ միջազգային կազմակերպություններում՝ Վիեննայում, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի օգնականը և արտաքին գործերի նախարարության անվտանգության քաղաքականության ղեկարարամենտի գլխավոր տնօրենը՝ Վարչավայում: Ներկայումս ԵԱՀԿ հակամարտությունների, կանխարգելման կենտրոնի տնօրենն է:

նար է նրանց համոզել փոխել դրա մասերից որևէ մեկը: Հետևաբար, թեպետ ակներևաբար դա չէր միակ պատճառը, սակայն ԵՄ-ի հետ փոխզիջումային ուղղվածություն ունեցող բանակցությունների ժամանակը հասունացավ միայն բանակցությունների ամենավերջին փուլում: Կարող ենք ավելացնել, որ այդ ժամանակ ներքին խորհրդատվությունների մեխանիզմները նոր էին ձևավորվում ԵՄ-ում, մի փաստ, որը ամենևին չէր հեշտացնում բանակցությունը:

Սկզբից եթե Վարքականոնը կարևոր էր ԱՄՆ-ի համար այնքանով, որքանով որ այն դիտարկվում էր որպես անվտանգության բնագավառի նոր կամ բարելավված վարքագծի ներդրման հնարավորություն՝ առանց կրկնելու կամ վերահաստատելու արդեն իսկ գոյություն ունեցող սկզբունքները և պարտավորությունները: Բանակցությունների ընթացքում ԱՄՆ ամենամեծ մտահոգությունը կարծես թե այն էր, թե ինչպես ստեղծել մի նշանակալից փաստաթուղթ, որը չէր նվազեցնի ՆԱՏՕ-ի և ԱՄՆ-ի դերը՝ Եվրոպայի հետ առնչվող հարցերում: Ի հակադրություն եվրոպական «համապարփակ» մոտեցման՝ ԱՄՆ մոտեցումը Վարքականոնի վերաբերյալ, այսպիսով, ավելի շուտ «ընտրողական» էր: ԵՄ որոշ պետություններ, իրոք, փնտրում էին համաեվրոպական անվտանգության հիմք, մինչդեռ ԱՄՆ-ին հիմնականում հետաքրքրում էր ԵԱՀԿ-ի գործող ողջ օրենսդրության (acquis) բարելավումը: ԱՄՆ և ԵՄ տեսակետների տարբերությունը կարելի է դիտարկել որպես Վարքականոնի բնույթի վերաբերյալ քաղաքական բանավեճերի առաջին փուլ: Այս բանավեճի երկրորդ փուլը, որը թերևս ամենահայտնին է, կազմված էր Վարքականոնի հայեցակարգերի այսպես կոչված «ընդարձակ» (որը պաշտպանում էին Հունգարիան և Ավստրիան) և «նեղ» (պաշտպանում էին մնացած գրեթե բոլոր պետությունները) հայեցակարգային քննարկումներից: Նեղ մոտեցումը ուշադրություն էր դարձնում անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտներին՝ հիմնական շեշտը դնելով այնպիսի տարրերի վրա, ինչպիսիք են ժողովրդավարական հսկողությունը և զինված ուժերի օգտագործումը: Ընդարձակ մոտեցման բևեռում մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների և տնտեսության, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանության ԵԱՀԿ²-ի համապարփակ հայեցակարգերի կոնկրետ ըմբռնումն էր: Ավելին, մի շարք պատվիրակությունների համար ընդարձակ մոտեցումն առաջարկում էր անվտանգության ապահովության բարդ համակարգ, և թեպետ բանավեճի առարկան մրցակցող գաղափարներ էին, այնուամենայնիվ, փաստացի ըմբռնման աստիճանն այն էր, որ որոշ տարրեր կազմում են զինված ուժերի ժողովրդավարական հսկողության և զինված ուժերի օգտագործման հարցերի պատասխանների հիմքը. բոլոր առաջարկություններում որոշ ուշադրություն էր դարձվում մարդու իրավունքներին և անվտանգության ապահովությանն առնչվող հարցերին: Կարծիքները տարբերվում էին Վարքականոնի հիմնական հարցերի առումով, և շեշտադրումների, մանրամասների, համատեքստի մակարդակը և գործառնական ազդեցությունը համապատասխանում էին տարբեր տարրերին: Կար նաև Վարքականոնի նախագծի թուրքական տարբերակ: Բացի որոշակի պարտավորություններից, որոնք առաջարկելը հստակորեն կապված էր անվտանգության մարտահրավերների (ինչպիսիք են՝ ահաբեկչության հետ առնչվողները) հետ կապված թուրքական ընկալման առանձնահատկության հետ, այն ակնհայտորեն նախատեսված էր նաև որպես ԵՄ նախագծի քաղաքական հակակշիռ: Քաղաքական բանավեճի հաջորդ, բայց ոչ նվազ կարևոր փուլը կապված էր Վարքականոնի լեհական նախագծի հետ: Հարկ է հիշել, որ Լեհաստանն առաջին պետությունն էր, որ Վիեննայում ներկայացրեց Վարքականոնի իր սեփական առաջարկությունը: Ըստ էության, դրանում փորձ էր արվել մշակել ուժի չկիրառմանն առնչվող սկզբունք՝ այդ սկզբունքից բխող մի շարք կոնկրետ միջոցների ստեղծման միջոցով, և վերաբերում էր անվտանգության համապարփակ հասկացությանը: Վարքականոնի հարցում Լեհաստանի հետաքրքրությունը կապված էր Արևմտյան

² 1996 թվականից հետո նախկին կոնֆերանսը (ԵԱՀԿ) դարձավ կազմակերպություն (ԵԱՀԿ):

Եվրոպայի անվտանգության կառույցներին միանալու ջանքերի հետ: Վարքականոնը դիտարկվում էր նաև որպես մի միջոց, որը Ռուսաստանին համոզելու էր, որ կարող են լինել բազմաթիվ գործիքներ՝ եվրոպական անվտանգությունը ապահովելու համար: Վարքականոնի վերջնական տարբերակը՝ հիմնված ԱՄՆ-ի կողմից փաստաթղթի շրջանակի վերաբերյալ արված առաջարկության վրա, ներկայացվեց բուրասպեշտյան գազաթափողովի նախապատրաստական աշխատանքի ժամանակ և փոփոխվեց Լեհաստանի կողմից՝ մի փոքր ընդլայնելով դրա շրջանակը, ընդգրկելով այնպիսի խիստ անհրաժեշտ, բայց ընտրված հարցեր, որոնցից է գինված ուժերի ժողովրդավարական հսկողությունը: Լեհական գաղափարը, ԵՄ մոտեցման համապատասխան, պետք է այդ ընտրված հարցերը համադրեր պատշաճ, այսինքն՝ ավելի ընդարձակ, անվտանգության համատեքստում:

Իրականում Վարքականոնի և դրա մասին կային հիմնական հայեցակարգեր և գաղափարներ, որոնց արդյունքում ներկայացվեցին նախնական չորս առաջարկություններ՝ Լեհաստանի, ԵՄ-ի (աջակցում էին նաև որոշ պետություններ), Թուրքիայի և Ավստրիայի ու Հունգարիայի կողմից: Վերջնական տարբերակում ներկայացված ընդհանուր հայտարարը անվտանգության բնագավառի վարքագծի նոր կանոններ մշակելու ցանկությունն էր՝ հաշվի առնելով նաև դրան առնչվող ԵԱՀԿ բոլոր նախկին պարտավորությունները:

Ինչպես լինում է սովորաբար, գրեթե երկու տարի տևած բանակցությունների վերջնական արդյունքը իրենից ներկայացնում էր տարբեր ծայրահեղ տեսակետների փոխզիջում: Այդ հակասող տեսակետները, սակայն, վերաբերում էին Վարքականոնի շրջանակին ու գործունեության ոլորտին և ավելի քիչ՝ դրա հիմնական հայեցակարգին, որը չէր վիճարկվում: Օրինակ՝ Վարքականոնում անվտանգությանն առնչվող ԵԱՀԿ բոլոր հիմնարար պարտավորություններն ընդգրկելու և վերաձևակերպելու կամ ազգային փոքրամասնությունների, տնտեսական համագործակցության և բնապահպանական հարցերի վերաբերյալ ընդարձակ դրույթներ ընդգրկելու փորձերը հաջողության չհասան: Փոխզիջումային միակ տարբերակը անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտներին վերաբերող մի շարք կանոններն էին, որոնք հաջողությամբ տեղ էին գտել անվտանգության համապարփակ ու համագործակցային հասկացություններին վերաբերող պարտավորությունների ավելի լայն համատեքստում:

Փաստաթղթի բանակցությունների պատմությունը վկայում է այն մասին, որ ԵԱՀԿ պետությունները կարևորում են դրա հիմնական հայեցակարգը, և, հետևաբար, նրանք ջանում են Վարքականոնի շրջանակը ձևավորել համաձայն իրենց տարբեր, անհատական անվտանգության գերակայությունների և սպառնալիքի ընկալման:

Առաջին, անհրաժեշտ էր իմաստալից կերպով դիմակայել անվտանգության այն նոր մարտահրավերները և ռիսկերը, որոնք փոխարինել էին սառը պատերազմի հին ռիսկերին և հակամարտության դարաշրջանին: Երկրեւո աշխարհի և գլոբալ ռազմական հակամարտության ռիսկի պայմաններում լարվածության բոլոր հնարավոր աղբյուրները, եթե դրանք գլոբալ չէին, անտեսվում կամ մնում էին ստվերում: Դրանք տեսանելի և պոտենցիալ ապակայունացնող դարձան միայն ԵԱՀԿ-ի դարաշրջանի ժողովրդավարական փոփոխություններից, նախկին Խորհրդային Միության փլուզումից և նոր պետություններ առաջանալուց հետո:

Երկրորդ, ԵԱՀԿ-ին անհրաժեշտ էր ժողովել իր բոլոր նախկին ձեռքբերումները անվտանգության ավելի լայն դաշտում՝ կառույցը նոր հանգամանքներին և պահանջներին ավելի լավ հարմարեցնելու և համապատասխանեցնելու համար: Այս տեսանկյունից, Վարքականոնի հիմքում ընկած հայեցակարգը կարելի է դիտարկել որպես մի փորձ, որը ոչ թե վերանայում է ԵԱՀԿ-ի անվտանգությանն առնչվող պարտավորությունները, այլ ընդհակառակը՝ փորձում է վերահաստատել դրանց ամբողջականությունը նոր հանգամանքներում և, միևնույն ժամանակ, զարգացնել դրանք՝ արձարձելով սպառնալիքների և անկայունությունների նոր աղբյուրները: Ավելի պատկերավոր ար-

տահայտվելու դեպքում, ԵԱՀԿ-ի առնչությամբ դա նրա ուժերը նոր ռազմավարություններին համապատասխան վերախմբավորելու ու վերակառուցելու և նոր «սպառնալիքի ընկալումներին» արձագանքելու մի փորձ էր:

Երրորդ, մեկ այլ հիմնական ենթադրություն կապված էր ԵԱՀԿ ընտանիքի նոր, նորանկախ և նոր ժողովրդավարական պետությունների խնդիրները և կարիքները հաշվի առնելու ու արձագանքելու անհրաժեշտության հետ: Այստեղ է, որ տեսնում ենք այն պատճառները, որոնցից ելնելով՝ Վարքականոնում նման մեծ տեղ է հատկացվել այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ անվտանգության համագործակցային և համապարփակ բնույթը, դրա անբաժանելիությունը, զինված ուժերի ժողովրդավարական հսկողությունը և դրանց իրական օգտագործմանը վերաբերող սկզբունքները:

Զինված ուժերի ժողովրդավարական հսկողությանը և օգտագործմանը վերաբերող Վարքականոնի դրույթները նույնպես պետք է դիտարկել որպես մի փորձ, որը նպաստում է նոր, նորանկախ կամ ժողովրդավարական պետությունների ժողովրդավարական զարգացմանը և դրանով իսկ՝ կայունությանը և կանխատեսելիությանը:

Այսպիսով, Վարքականոնի հայեցակարգի հիմքում ընկած են երեք հիմնական ենթադրություններ: Դա ոչ թե պարզապես անվտանգությանն առնչվող ԵԱՀԿ մեկ այլ փաստաթուղթ է, այլ հնարավոր հիմք՝ ԵԱՀԿ ապագա ջանքերի համար, որոնք ուղղված են մասնակից պետությունների միջև անվտանգության շահերի և պատասխանատվությունների ընդհանրության ստեղծմանը: Այդ առումով, դա կապվում է ԵԱՀԿ-ի՝ 21-րդ դարի Եվրոպայի անվտանգության մոդելի ընթացիկ աշխատանքի հետ: Վարքականոնը արտացոլում է ոչ միայն մինչ այժմ ձեռք բերված նվաճումները, այլ նաև պարունակում է ուղեցույցներ՝ անվտանգության ավելի լայն ոլորտի ապագա զարգացումների համար՝ գերծ մնալով կրկնություններից և հռչակագրային բնույթի ձևակերպումներից: Իրականում դրանում պարունակվող պարտավորությունների շարքը ապահովում է ավելի մեծ անվտանգություն մասնակից բոլոր պետությունների համար և հանդիսանում է հակամարտության կանխարգելման, ինչպես նաև ուժի չկիրառման սկզբունքի օգտագործման արդյունավետ գործիք:

Վարքականոնում ընդգրկված կոնկրետ պարտավորությունները և դրանց սկզբնաղբյուրները

Վարքականոնի *նախաբանը* և *առաջին բաժինը* ներկայացնում են անվտանգության մի ընդարձակ համատեքստ, որում դիտարկվում են Վարքականոնում ընդգրկված բոլոր պարտավորությունները: Վարքականոնի այս բաժնում մասնակից պետությունները պարտավորվում են չամբասանել իրենց անվտանգությունը այլ պետությունների անվտանգության հաշվին: Շեշտելով անվտանգության նկատմամբ համագործակցային մոտեցման կարևորությունը՝ նրանք ընդգծում են ԵԱՀԿ առանցքային դերը այդ կապակցությամբ ու փոխլրացնող և փոխադարձաբար միմյանց ամբաստանող հաստատությունների շարունակական զարգացման անհրաժեշտությունը: Պետությունները հայտարարում են նաև միասնաբար հանդես գալու իրենց պատրաստակամության մասին՝ դրանցից որևէ մեկի առջև անվտանգության մարտահրավեր ծառանալու դեպքում: «Անվտանգության համատեքստը» վերցրվել էր ԵՄ նախագծից, և կարելի է դիտարկել որպես ԵԱՀԿ անվտանգության ռազմավարության հաստատում: Այստեղ արտացոլված է նաև «համերաշխության» լեհական գաղափարը, թեպետ հստակորեն փոփոխված ձևով՝ ԵԱՀԿ բոլոր պետությունների պատկերացումներ բավարարելու համար:

Երկրորդ բաժինը, որը բավականին հակիրճ է, քանի որ բաղկացած է ընդամենը մեկ կետից, ընդգրկում է ահաբեկչությանը չաջակցելու և ահաբեկչությունը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու միջոցառումներ կատարելու պարտավորություններ: Դա ընդգրկվեց Թուրքիայի պնդմամբ, և վերջնական համաձայնեցումը ձեռք բերվեց թուրքական պատվիրակության ջանքերի շնորհիվ:

Երրորդ բաժնում հիշատակված են ԵԱՀԿ հիմնարար սկզբունքները, այսինքն՝ Հելսինկյան եզրափակիչ ակտի սկզբունքները, և վերահաստատված է դրանց արդիականության շարունակականությունը մեր օրերում: Այն վերաբերում և զարգացնում է հատկապես դրանցից մեկը, որը առաջնային արժեք ունի ցանկացած պետության անվտանգության համար, մասնավորապես՝ ցանկացած պետության տարածքային ամբողջության կամ քաղաքական անկախության դեմ սպառնալիքի կամ ուժի կիրառումից ձեռնպահ մնալու պարտավորությունը: Ինչպես արդեն նշվել է, Վարքականոնի բանակցության ժամանակ Լեհաստանի հիմնական մտահոգությունը ուժի չկիրառման վերաբերյալ սկզբունքն էր: Ավելի հաճախ ֆրանսիական ու գերմանական պատվիրակություններն էին պնդում վկայակոչել ԵԱՀԿ այն բոլոր հիմնարար սկզբունքները, որոնք ընդգրկվելու էին Վարքականոնում:

Չորրորդ բաժինը մեկտեղում է դրույթներ անվտանգության և ինքնապաշտպանության այն պայմանագրերի վերաբերյալ, որոնք իրավունք ունեն կնքելու պետությունները: Այն ընդգծում է միջազգային կազմակերպություններին, ներառյալ միջազգային դաշինքներին միանալու կամ չմիանալու ցանկացած պետության իրավունքը, ինչպես նաև, որ ցանկացած պետություն իրավունք ունի փոխելու իր կարգավիճակը այդ առումով: Սա ամենակարևոր բաժինն էր նորաստեղծ կամ նոր ժողովրդավարական պետությունների համար, և ամենադժվար խնդիրը այստեղ Ռուսաստանի Դաշնության համար ընդունելի ձևակերպումներ գտնելն էր: Ակնհայտորեն, առավել հաճախ քննարկվող թեման ՆԱՏՕ-ի ընդլայնման հնարավորությունն էր:

Հինգերորդ բաժինը պարտավորեցնում է մասնակից պետություններին շարունակել իրենց զինված ուժերի հսկողության ջանքերը, և այն ներառվեց հիմնականում ֆրանսիացիների դիրքորոշման շնորհիվ:

Վեցերորդ բաժինն արժարժում է հակամարտության հանգեցնող տարբեր բնույթի լարվածությունները և ԵԱՀԿ պարտավորությունները հակամարտության կանխարգելման ոլորտում: Այս բաժնում կարող ենք գտնել ուղեցույց՝ զինված հակամարտության դեպքում ԵԱՀԿ մասնակից պետություններին կողմից ակնկալվող քայլերի մասին: Սրանց համաձայն և որոշ չափով այդ պարտավորությունների վրա հիմնվելով են ԵԱՀԿ պետություններն ընդհանուր ջանքեր ձեռնարկում Չեչնիայի ընթացիկ դեպքերի կապակցությամբ, որն իրականում կարող է որակվել որպես ներքին զինված հակամարտություն: Վարքականոնի շուրջ բանակցությունների հենց սկզբից առկա էր այն ընդհանուր ըմբռնումը, որ փաստաթղթում պետք է արտացոլվեն ԵԱՀԿ հակամարտությունների կանխարգելման աշխատանքները:

Յոթերորդ բաժինն ընդգրկում է դրույթներ՝ զինված ուժերի ժողովրդավարական հսկողության վերաբերյալ: Չինված ուժերի ժողովրդավարական հսկողությունը դիտարկվում է որպես պետության ներքին կայունության, իր սեփական քաղաքացիների և այլ պետությունների նկատմամբ պատասխանատու վարքագծի մի միջոց և որպես պետության գործողությունների կանխատեսելիության բարձրացմանն ուղղված մի գործիք: Այս բաժինը հավասարապես կարևոր է թե՛ կայացած ժողովրդավարությունների համար, որոնք ձգտում են շեշտել իրենց նվաճումներն այս ոլորտում և մյուսներին փոխանցել հաջողությամբ փորձված չափորոշիչները, թե՛ նորաստեղծների համար, որոնք ձգտում են շեշտել իրենց պատրաստականությունը՝ այդ հայեցակարգը գործնականում կիրառելու համար:

Ութերորդ բաժինն առաջարկում է մի շարք ուղեցույցներ՝ զինված ուժերի իրական կիրառման և դրանց ներքին կազմակերպման վերաբերյալ: Դրանում պարունակվող պարտավորությունները իրականացում են թե՛ ռազմական և թե՛ քաղաքացիական իշխանությունները: Այս բաժնի դրույթներից մեկը վերաբերում է ներքին անվտանգության գործառույթներ իրականացնելիս զինված ուժերի կառավարման կանոններին և ընդգրկվել է հիմնականում ԵՄ-ի պնդմամբ: Այս դրույթի հիման վրա

էր, որ ԵԱՀԿ որոշ պետություններ խստորեն քննադատեցին Ռուսաստանի իշխանություններին՝ Չեչնիայում ոչ համաչափ և բույլատրելի մակարդակը գերազանցող զինված ուժի կիրառման համար: Այս բաժնի վերջին դրույթը մասնակից պետություններին պարտավորեցնում է չօգտագործել զինված ուժերը, եթե անձինք՝ կա՛ն որպես անհատներ, կա՛ն որպես խմբերի ներկայացուցիչներ, իրականացնում են մարդու և քաղաքացիական իրենց իրավունքները խաղաղ ու օրինական ճանապարհով, չզրկել նրանց իրենց ազգային, կրոնական, մշակութային, լեզվական կամ էթնիկական ինքնությունից: Այս դրույթի հիմքում ընկած գաղափարը պարզ է. զինված ուժերին չպետք է վերապահել կամ տալ մարդկանց իրավունքների սահմանափակմանն ուղղված ոստիկանական բնույթի գործառույթներ: Դա հստակորեն կապված է նաև ազգային փոքրամասնությունների հետ խնդիրներ ունեցող պետությունների կողմից անվտանգության սպառնալիքների ընկալման ազգային առանձնահատկությունների հետ: Ինչպես արդեն նշվել է, բանակցությունների ժամանակ առկա էր լայնորեն տարածված կոնսենսուս՝ այս դրույթները Վարքականում ընդգրկելու անհրաժեշտության հարցում:

Հաջորդ՝ *իններորդ բաժինը* կազմված է մեկ, բայց կարևոր դրույթից: Այնտեղ նշվում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն պատասխանատվություն է կրում Վարքականոնի կենսագործման համար, և կարելի է օգտագործել գործող ԵԱՀԿ մարմինները, մեխանիզմները և կառույցները՝ Վարքականոնի լիարժեք կենսագործումն ապահովելու նպատակով: Բանակցությունների ժամանակ մասնակիցների ընդհանուր տեսակետն այն էր, որ Վարքականոնը չպետք է դառնա ԵԱՀԿ ևս մեկ «պարտավորություն», դժբախտաբար այդ բառի ամենատարածված իմաստով՝ կարևոր, բայց չպահպանվող:

Վերջին՝ *տասներորդ բաժինը* վկայակոչում է Վարքականոնի քաղաքականապես պարտավորեցնող բնույթը: Այս պարտավորեցնող բնույթը ամրապնդելու համար մասնակից պետությունները համաձայնեցին նաև, որ իրենց համապատասխան ներքին փաստաթղթերում և ընթացակարգերում կամ, հնարավորության դեպքում, իրավական գործիքներում կփորձեն ապահովել Վարքականոնի պարտավորությունների արտացոլումը: Այս բաժինը ներկայացնում է այն, ինչ մնաց տարբեր առաջարկություններից, ներառյալ Լեհաստանի կողմից՝ Վարքականոնը իրավաբանորեն պարտավորեցնող ուժ ունեցող փաստաթուղթ դարձնելու համար:

Վարքականոնի բանակցություններից քաղած դասերը

Այն ամենից, ինչ նշվեց մինչ այժմ, ակնհայտ է, որ բանակցությունների ողջ ընթացքում ամենատարօրինակ երևույթն այն էր, որ Ռուսաստանը չունեք Վարքականոնի վերաբերյալ համապարփակ առաջարկություն: Ռուսաստանի Դաշնության պատվիրակությունը ակտիվ էր բանակցություններում, բայց ավելի շուտ եվրոպական անվտանգության վերաբերյալ իր հիմնական տեսակետները պաշտպանելու առումով և ավելի քիչ ակտիվ՝ Վարքականոնի բովանդակության մշակման առումով: Հավանաբար դա պայմանավորված էր նրանով, որ այդ ժամանակ Ռուսաստանը մտահոգված էր անվտանգության ավելի մոտալուտ հարցերով և հստակորեն ձևակերպված ռուսաստանյան անվտանգության ռազմավարության բացակայությամբ: Բանակցությունների որոշակի փուլում Վարքականոնի շրջանակի և կառուցվածքի վերաբերյալ լեհ-ռուսական բանակցային ընդհանուր առաջարկությունը դիտարկվեց, գոնե ոչ պաշտոնապես, որպես փաստաթղթի բանակցության հարցում Ռուսաստանի հետաքրքրության ապացույց, որը ավելի վաղ հարցականի տակ էր առնվել: Ավելի հավանական է, սակայն, որ Վարքականոնի փաստացի ընդունումը նպաստեց Ռուսաստանի հաջորդ նախաձեռնությանը՝ կապված 21-րդ դարի Եվրոպայի անվտանգության մոդելի զարգացման հետ:

Ընդհանուր առմամբ, Վարքականոցի բանակցության դասերը կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

- Վարքականոցն ընդունում է ԵԱՀԿ-ի՝ Եվրոպայում նոր ռազմաքաղաքական իրականություններին հարմարվելու անխուսափելի փուլը:
- Վարքականոցի բանակցությունը առաջին հնարավորությունն էր փորձարկելու ԵՄ ունակությունը եվրոպական անվտանգության հարցում ընդհանուր դիրքորոշում ցուցաբերելու և անվտանգության հարցերով զբաղվելու դրա կարողությունը, որը համեմատելի կլիներ եվրոպական անվտանգության մեջ ՆԱՏՕ-ի ներգրավվածությանը:
- Նոր առանձին ազգերի անվտանգության մարտահրավերները բարդացնում էին բանակցությունները, բայց միևնույն ժամանակ նպաստում ԵԱՀԿ յուրաքանչյուր և բոլոր պետությունների համար Վարքականոցի կարևորությանը:
- Առաջին անգամ էր, որ ԵԱՀԿ-ն փորձեց դասակարգել պետության վարքագծի կանոնները՝ անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտի ոլորտում: Այդ փորձի արդյունքն այն էր, որ Վարքականոցը կարող է ապագայում ծառայել որպես ավելի լայն, նույնիսկ իրավական ուժ ունեցող պայմանավորվածությունների հիմք:

Վարքականոցի ապագան

Վարքականոցի ընդունումից հետո ընկած կարճ ժամանակահատվածը թույլ չի տալիս խոր վերլուծություն կատարել այն մասին, թե ինչպես է այն աշխատում կամ ինչպես է ազդում ամբողջ ԵԱՀԿ-ի և դրա առանձին տարածաշրջանների ռազմական իրավիճակի վրա: Այնուամենայնիվ, հարկ է շեշտել, որ Վարքականոցի պարտավորությունների ծավալը, գործունեության ոլորտը, համապատասխանությունը և բնույթը դրա իրականացումը և հետագա զարգացումը դարձնում են, ակնհայտորեն, միջազգային շարունակական ուշադրության խնդրո առարկա: Ի վերջո, Վարքականոցի հետագա զարգացումը նույնիսկ ավելի հիմնավորված է դառնում 21-րդ դարի Եվրոպայի անվտանգության մոդելի ստեղծման՝ ԵԱՀԿ-ի շարունակական ջանքերի համատեքստում: Ավելին, Վարքականոցը հանդիսանում է ներկա եվրոպական անվտանգության համակարգի նորմատիվ հիմքը: Այն անհնարին է անտեսել եվրոպական անվտանգության համակարգի մշակման գործընթացի ժամանակ:

**ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
Հիմնական մշակող՝ ՎԻՐԱԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

1. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՅԱՇՎԵՏՈՒ ԼԻՆԵԼԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ, ՈՒ ԴՐԱՆՑ ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

1.1. Թափանցիկությունը և հաշվետու լինելը, դրանց դերն ու նշանակությունը

Ժողովրդավարական պետությունում պետական մարմինները ձգտում են հանրային կառավարումն իրականացնել հնարավորինս բաց և թափանցիկ կերպով: Այդ ձգտումը պայմանավորված է մի կողմից պետության քաղաքացիների պահանջատիրությամբ, իսկ մյուս կողմից՝ հանրային կառավարման համակարգի նկատմամբ քաղաքացիների վստահությունը և աջակցությունն ունենալու անհրաժեշտության գիտակցմամբ: Այս երկու գործոնները նկատի ունենալով՝ հանրային կառավարման տեսությունը ներկայումս առաջնային է համարում թափանցիկության և հաշվետու լինելու սկզբունքների ամրագրումն ու լայնորեն կիրառումը, այդ թվում՝ պաշտպանական ոլորտի կառավարման համակարգում:

Պարզաբանենք թափանցիկության և հաշվետու լինելու սկզբունքների էությունը և ցույց տանք դրանց դերը պաշտպանական ոլորտի կառավարման համակարգում:

1.1.1. Թափանցիկությունը

Թափանցիկություն ասելով ընդունված է հասկանալ մի իրավիճակ, երբ քաղաքացին, հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության այլ ինստիտուտներ կարող են իրենց անհրաժեշտ տեղեկույթն ստանալ անմիջապես այն տնօրինող պետական մարմնից՝ առանց որևէ այլ միջոցի դիմելու³: Դա շատ կարևոր է հանրային կառավարման, այդ թվում նաև՝ պաշտպանական ոլորտի կառավարման, արդյունավետության ապահովման համար:

➤ **Թափանցիկության միջոցով մեծանում է հասարակության վստահությունը հանրային կառավարման մարմինների նկատմամբ:**

Փորձը ցույց է տալիս, որ հասարակության անվստահությունը հիմնականում ձևավորվում է տեղեկության բացակայության պայմաններում: Որոշակի դեպքերի վերաբերյալ ստանալով կցկտուր տեղեկություններ՝ քաղաքացիներն սկսում են յուրովի դատողություններ անել, որոնք միշտ չէ, որ համապատասխանում են իրականությանը: Իրավիճակն ավելի է բարդանում, երբ որոշ ՁԼՄ-ներ, օգտվելով պաշտոնական տեղեկույթ չլինելու հանգամանքից, փորձում են սեմսացիոն բնույթի նյութեր «հայթայթել» և առանց պատշաճ մասնագիտական վերլուծության ենթարկելու հրապարակել՝ դրանով իսկ նապատակ ունենալով բարձրացնել իրենց վարկանիշը: Հասարակությունն էլ, իր հերթին, ցանկանում է լիովին իրազեկված լինել այն ամենի մասին, ինչ կատարվում է երկրում: Ուստի իր՝ «տեղեկացված լինելու» բնական ձգտումը չբավարարելու պարագայում, մասամբ նաև դրանից «չարացած», մարդն ավելի շատ հակված է լինում հավատալու վարկաբեկիչ բնույթի կամ, ավելի մեղմ ասած, մտացածին վարկածներին: Հաճախ նման իրավիճակների առաջացման պատճառը պետական մարմիններն են, որոնք, տարբեր պատճառաբանություններով ուղղակի խուսափելով տեղեկույթ տրամադրելուց, ապատեղեկատվական հրապարակումների առիթներ են ստեղծում:

➤ **Թափանցիկությունը նպաստում է զինված ուժերում մարդու իրավունքների ոտնահարման և պաշտպանական ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության մեծացմանը:**

³ Տե՛ս «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն», Երևան, 2005, էջ 335:

Ասվածը շատ ավելի կարևորվում է մարդու իրավունքների ոտնահարման և կոռուպցիայի դեմ «վաղ իրազեկման» սկզբունքով պայքարի մեխանիզմ ստեղծելու տեսանկյունից: Հասարակությունն ավելի շատ շահագրգռված է կանխարգելիչ մեխանիզմներ ստեղծելու, քան արդեն կատարված հանցագործությունների մասին տեղեկացված լինելու: Այդպիսի մեխանիզմների ստեղծումն անկասկած դրական ազդեցություն կունենա զինված ուժերում իրավախախտումների կանխարգելման վրա:

Թափանցիկությունը սերտորեն փոխկապակցված է մարդու՝ տեղեկատվություն ստանալու ազատության հետ: Այս իմաստով անձի՝ տեղեկատվություն ստանալու իրավունքին համապատասխանում է հանրային կառավարման թափանցիկության սկզբունքը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան նախատեսում է, որ տեղեկատվություն ստանալու ազատությունը որոշ դեպքերում ենթակա է սահմանափակման, եթե այն շոշափում է այլոց իրավունքները և ազատությունները, հասարակական անվտանգությունը և նման այլ արժեքներ: Մյուս բոլոր տեսակի տեղեկություններն անձի առաջին իսկ պահանջի դեպքում պետք է տրամադրվեն: Հետևաբար, տեղեկատվություն ստանալու ազատությունը գործում է այն ժամանակ, երբ նախաձեռնողը անձն է:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե պետական մարմիններն այստեղ որևէ պարտականություն չունեն հասարակության առջև: Մինչդեռ հենց պետական մարմիններն են, որ պետք է շահագրգռված լինեն ոլորտը հնարավորինս մատչելի և թափանցիկ դարձնելու հարցում, որպեսզի արժանանան հասարակության վստահությանը: Դա արվում է մամուլի հաղորդագրությունների, պարբերական զեկույցների միջոցով, որոնք էլ պետք է հնարավորինս ընդգրկուն տեղեկույթ պարունակեն պաշտպանական ոլորտում տիրող վիճակի մասին:

Մեր օրերում զինված ուժերի կառավարման ոլորտում թափանցիկության ապահովման պրոբլեմը դուրս է եկել ազգային մակարդակից՝ դառնալով միջազգային հանրության մտահոգության առարկա: Այսօր միջազգային հանրությունը քաջ գիտակցում է, որ զինված ուժերի կառավարման ոլորտում ոչ թափանցիկ գործելաոճը կարող է հանգեցնել պետության ռազմականացմանը, ինչն էլ նոր աղետների և արհավիրքների պատճառ կդառնա:

Զինված ուժերի կառավարման ոլորտում թափանցիկության ապահովման անհրաժեշտության մասին խոսվում է ԵԱՀԿ «Անվտանգության ռազմաքաղաքական կողմերին առնչվող վարքականոնում», որը իրավացիորեն համարվում է անվտանգության ոլորտին վերաբերող համապարփակ փաստաթղթերից մեկը: Մասնավորապես՝ նշված փաստաթղթի քսաներկուերորդ կետում սահմանվում է. «Յուրաքանչյուր մասնակից պետություն, իր ազգային անվտանգության պահանջմունքներին համապատասխան, կկատարի ռազմական ծախսերի սահմանափակում և կապահովի իր զինված ուժերին վերաբերող տեղեկատվության թափանցիկությունը և հանրամատչելիությունը»⁴:

Առհասարակ, զինված ուժերի գործունեության վերաբերյալ հասարակության համար հետաքրքրություն ներկայացնող տեղեկությունները կարելի է բաժանել երկու խմբի.

ա/ պաշտպանական ծախսերի վերաբերյալ տեղեկություններ,

բ/ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության իրավիճակին վերաբերող տեղեկություններ:

Պաշտպանական ծախսերին վերաբերող տեղեկությունների հրապարակայնությունը և այդ ոլորտում թափանցիկությունը ունեն երկու կարևոր կողմ:

⁴ Տե՛ս «ԵԱՀԿ անվտանգության ոլորտի ռազմաքաղաքական ասպեկտի վարքագծի կանոններ»:

Մի կողմից, այդ եղանակով հասարակության յուրաքանչյուր անդամ կարող է վերահսկել, թե որքանով արդյունավետ են ծախսվում հանրային միջոցները: Փորձը ցույց է տալիս, որ որքան հրապարակային կերպով է իրականացվում գնումների գործընթացը, այնքան ավելի է մեծանում վերահսկողության արդյունավետությունը: Ընդ որում, կոռուպցիոն դրսևորումները բացառելու նպատակով անհրաժեշտ է ապահովել գնումների ամբողջ գործընթացի թափանցիկությունը:

Մյուս կողմից, պաշտպանական ծախսերի թափանցիկությունը հնարավորություն է տալիս ժամանակին կանխել պետության ռազմականացման փորձերը, ինչը մեծ կարևորություն ունի միջազգային անվտանգության ապահովման տեսանկյունից: Այդ պրոբլեմին վերաբերող՝ «Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին» պայմանագրով սահմանվում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն իրավունք ունի որոշակի տեսակների սպառազինություն ունենալու միայն պայմանագրով սահմանված քվոտաների շրջանակներում:

Պաշտպանական կարիքների համար բյուջետային հատկացումների թափանցիկությունը այս առումով շատ կարևոր նշանակություն ունի:

Հայաստանի Հանրապետությունը մի շարք քայլեր է ձեռնարկում զինված ուժերի կառավարման ոլորտի թափանցիկությունն ապահովելու նպատակով: Դրանք ամփոփ կերպով արտացոլված են *«Հանրային իրազեկման հայեցակարգում»*⁵: Ըստ Հայեցակարգի՝ ոլորտի թափանցիկության բարձրացումը առավել հզոր, մարտունակ և միջազգայնորեն ճանաչված զինված ուժեր ունենալու գրավականներից մեկն է: Հայեցակարգով սահմանվում է նաև, որ բանակաշինության և զինված ուժերում առկա վիճակի մասին հասարակության տեղեկացվածությունը բավարար հիմք կդառնա զինվորական կարգապահության ապահովման պատրվակով անհատի իրավունքների խախտումները բացառելու համար: Բացի այդ, զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության լծակների կիրառումն առավել կանխատեսելի կդարձնի պետության անվտանգությանն ու պաշտպանությանը կոչված կառույցի ներուժի օգտագործումն ըստ նշանակության՝ իր հերթին բացառելով դրա ներքաշումն անցանկալի հետևանքներով հղի գործընթացների մեջ:

Հայեցակարգի առաջնահերթություններից է *գորամասային օդակի հանրային իրազեկման մասնագետ-սպանների վերապատրաստումը հասարակության հետ կապերի ապահովման նպատակով*, քանի որ քաղաքացիների մեծ մասը չփնջում է զինված ուժերի հենց այդ օդակի հետ: Օրինակ՝ քաղաքացիները և լրատվամիջոցները գորամասում տեղի ունեցած պատահարի մասին իրազեկված լինելու որևէ այլ եղանակ չունեն, քան պաշտպանության նախարարությանը դիմելը: Չորամասին դիմելու դեպքում գորամասի իրավասուները, իրենց գործողությունները պատճառաբանելով զինվորական կարգապահության պահպանման անհրաժեշտությամբ կամ համապատասխան հրամանի բացակայությամբ, քաղաքացիներից կամ լրատվամիջոցներից պահանջում են նախ ստանալ նախարարության թույլտվությունը: Այդ պատճառով շատ հաճախ սահմանափակվում է հանրության՝ արագ իրազեկված լինելու հնարավորությունը: Հետևաբար, անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր գորամաս ունենա հասարակության հետ կապերի գծով պատասխանատու անձ:

Մեր կարծիքով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ նրա առաքելությունը հենց քաղաքացիների հետ շփումներ իրականացնելն է, որոշ չափով անկախ ու անկաշկանդ գործելու համար այդ պատասխանատուն պետք է քաղաքացիական անձ լինի և չընդգրկվի զինվորական ենթակարգության մեջ: Հաշվի առնելով նաև այն, որ «առանց նախարարության թույլտվության չգործելու սկզբունքը» զինվորականի հոգեբանության տարրերից մեկն է, կարծում ենք, որ այդ քաղաքացիական անձը չպետք է լինի ծառայությունից արձակված զինվորական: Ակնհայտ է, որ ծառայություն-

⁵ Հաստատվել է ՀՀ պաշտպանության նախարարի կողմից 2007թ. նոյեմբերի 13-ին, տե՛ս www.mil.am.

նից արձակված զինվորականը դեռ երկար ժամանակ չի ձերբազատվում «զինվորական կարգապահություն և հրամանի անվերապահ կատարում» թելադրող հոգեբանությունից: Այդ պատճառով անհրաժեշտ ենք համարում, որ հասարակության հետ կապեր ապահովող պաշտոնյան լինի ոչ թե «զինվորական կրթություն ունեցող վերապատրաստված սպա», ինչպես նախատեսված է Հայեցակարգում, այլ «լրագրողական կրթություն ունեցող քաղաքացիական անձ»:

ՀՀ-ում գործում են նաև պաշտպանական ծախսերի թափանցիկության ապահովման որոշակի մեխանիզմներ, որոնք, սակայն, բավարար չեն: Մասնավորապես՝ պաշտպանական կարիքների համար բոլոր գնումները կազմակերպվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Նշված օրենքը հնարավորություն է տալիս կազմակերպելու ինչպես հրապարակային, այնպես էլ ոչ հրապարակային գնումներ: Վերջինս վերաբերում է պետական և ծառայողական գաղտնիք պարունակող գնումների կազմակերպմանը, ինչը բացառում է այդ գործընթացի թափանցիկության ապահովումը, քանի որ «գաղտնիության ռեժիմ» և «թափանցիկություն» հասկացություններն անհամատեղելի են:

Պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը միակ պետությունը չէ, որը կարիք ունի պետական և ծառայողական գաղտնիք պարունակող գնումներ կատարելու: Սակայն մի շարք պետությունների փորձը ցույց է տալիս, որ մյուս դեպքերում գնումը կատարվում է մեկ աղբյուրից: Մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում պատկերը մի փոքր այլ է: Այսպես՝ յուրաքանչյուր տարի հաստատվող պետական բյուջեի մասին օրենքով պաշտպանական կարիքների համար կատարվող հատկացումները դասակարգվում են որպես պետական և ծառայողական գաղտնիք պարունակողներ: Անկասկած, կոռուպցիոն ռիսկերի բացառման նպատակով նպատակահարմար չէ պաշտպանական կարիքների համար բոլոր գնումները կատարել բացառապես մեկ անձից: Նման իրավիճակից ելք գտնելու համար սահմանված է գնումների իրականացման հատուկ ձև՝ փակ մրցույթ: Փակ մրցույթի մասնակիցների ընտրության նպատակով ՀՀ պաշտպանության նախարարության ինտերնետային կայքէջում տեղադրվում է հայտարարություն՝ փակ մրցույթին մասնակցելու իրավունք ունեցող անձանց որոշելու համար: Մրցույթին մասնակցելու համար ցանկացողները «Գնումների մասին» ՀՀ օրենքի հինգերորդ հոդվածով նախատեսված փաստաթղթերը նախապես ներկայացնում են ՀՀ պաշտպանության նախարարություն: Դրանից հետո միայն, ստանալով որակավորում, մասնակիցները ստորագրում են պետական և ծառայողական գաղտնիքի չհրապարակման մասին պարտավորագիր և ստանում են մրցույթին մասնակցելու հրավեր: Գնումների հետագա ամբողջ ընթացքը մնում է գաղտնի, և դրա մասին որևէ տեղեկություն հնարավոր չէ ստանալ:

Պետք է նշել, սակայն, որ պաշտպանական կարիքների համար կատարվող գնումների կազմակերպման նպատակով հրապարակվող հայտարարությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք ապրանքների գնումը գաղտնիության ռեժիմի շրջանակներում կազմակերպելը շատ լուրջ հիմնավորման կարիք ունի:

Հետևապես, կարող ենք ասել, որ Հայաստանի Հանրապետությունում պաշտպանական կարիքների համար բյուջետային հատկացումների թափանցիկության հարցը լուծված չէ:

Պաշտպանական ոլորտում թափանցիկության հետ մեկտեղ ոչ պակաս կարևոր է նաև անկախ և մասնագիտացված լրատվամիջոցների դերը: Այս դեպքում հանրային կառավարման ոլորտի թափանցիկությունը և մասնագիտացված լրատվամիջոցների հրապարակումները կլրացնեն միմյանց: Իրապես, դժվար է պատկերացնել թափանցիկության սկզբունքի արդյունավետ կիրառումն առանց անկախ և մասնագիտացված լրատվամիջոցների, քանի որ քաղաքացիների մեծ մասը ոչ միշտ է հեշտությամբ ըմբռնում պաշտոնական տեղեկատվությունը, քանի որ այն ավելի շատ ուղղված է լինում այդ ոլորտում մասնագիտացած անձանց: Լրատվամիջոցների դերը պաշտոնական, ինչպես նաև առհասարակ ոլորտում տիրող իրավիճակի մասին տեղեկատվությունը հանրա-

մատչելի ձևով հասարակության յուրաքանչյուր անդամին հասցնելն է՝ անհրաժեշտության դեպքում կատարելով համապատասխան վերլուծություններ և եզրահանգումներ: Հենց սա է մասնագիտացված լրատվամիջոցների առաքելությունը: Հակառակ պարագայում, հանրային կառավարման մարմինների մատուցած տեղեկատվությունը շատ դեպքերում կա՛մ ընդհանրապես չի հասնի, կա՛մ մատչելի ձևով չի հասնի սպառողին:

Անհրաժեշտ է նշել նաև, որ թափանցիկության սկզբունքի կիրառումը և անկախ ու մասնագիտացված լրատվամիջոցների գործունեությունը փոխկապակցված են: Ինչպես որ թափանցիկության սկզբունքի կիրառումն արդյունավետ չի լինի, եթե չլինեն անկախ ու մասնագիտացված լրատվամիջոցներ, այնպես էլ վերջիններիս գործունեությունը չի կարող արդյունավետ լինել առանց թափանցիկության սկզբունքի:

Մասնագիտացված ու անկախ լրատվամիջոցների առկայության պարագայում շատ կարևոր են մամուլի հաղորդագրությունները, որոնք հնարավորինս ամբողջությամբ պետք է արտացոլեն ոլորտում տիրող իրավիճակը:

Պաշտպանության ոլորտում մասնագիտացված լրատվամիջոցներ գործում են տարբեր պետություններում: Դրանցից են, մասնավորապես, ռուսական «Независимое военное обозрение», «Ежедневный журнал» ինտերնետային կայքէջերի համապատասխան բաժինները, բրիտանական «Jane's Defence» պարբերականը և այլն:

ԵԱՀԿ «Անվտանգության ռազմաքաղաքական կողմերին առնչվող վարքականոնի» կիրառմանը վերաբերող ամենամյա հարցաշարի պատասխանում ՀՀ պատվիրակությունը նշել է, որ հասարակության իրազեկումը իրականացվում է ՀՀ ՊՆ լրատվական ծառայության, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի, «Զինուժ» հաղորդման, «Հայ զինվոր» շաբաթաթերթի, ինչպես նաև մամուլի ասուլիսների միջոցով⁶: Այս հարցաշարում ընդամենը ներկայացվում են ոլորտի թափանցիկությունն ապահովելուն ուղղված պետական մարմինների միջոցառումներն ու միջոցները: Ըստ Հայեցակարգի՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը պարտավորվել է լուսաբանել ոլորտում տիրող իրավիճակը, սակայն մինչ օրս այդ լուսաբանումն իրականացվում է միակողմանիորեն. հիմնականում ներկայացվում են ՀՀ ՊՆ պաշտոնյաների այցերը, ելույթները, այլ պաշտոնական միջոցառումներ, դրանց վերաբերյալ մամուլի հաղորդագրություններ: Ակնհայտ է, որ ոլորտի լիակատար լուսաբանման համար անհրաժեշտ է դրա կառավարման լիազոր մարմնից անկախ լրատվամիջոց, որն անաչառորեն կներկայացնի ոլորտում տիրող իրավիճակը՝ անդրադառնալով թե՛ դրական և թե՛ բացասական կողմերին:

Հարկ է նշել՝ կա նաև տեղեկատվության մի շերտ, որը պակաս հետաքրքրություն չի ներկայացնում հասարակության համար, թեև ՀՀ պաշտպանության նախարարությունն այդ մասին որևէ տեղեկություն չի հրապարակում: Մասնավորապես, այսօր որևէ տեղ չենք կարող տեղեկություն գտնել կարգապահական տույժի ենթարկված զինծառայողների մասին (ներառյալ՝ շարքայիններին կարգապահական մեկուսարաններում պահելու մասով): Մինչդեռ այդ տեղեկությունն անհրաժեշտ է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանվածության վիճակի արդյունավետ վերահսկողություն իրականացնելու և անհրաժեշտության դեպքում մեղավորներին պատժելու համար:

Հայեցակարգը սահմանում է նաև, որ անհրաժեշտ է սոցիոլոգիական հարցումներ կատարել հասարակության տրամադրությունները և զինված ուժերից նրա ակնկալիքները պարզելու համար: Այդ նպատակի իրականացման համար կարելի է ՀՀ ՊՆ ինտերնետային կայքէջում կազմակերպել

⁶ St' u Information Exchange on the code of conduct on politico-military aspects of security, Republic of Armenia, Year 2008.

ֆորումներ, որոնք ևս հնարավորություն կտան պարզելու հասարակությանը հուզող թեմաները և քննարկելու ու ճշտելու դրանց վերաբերյալ հասարակության դիրքորոշումները:

Այս ամենում, անկասկած, շատ մեծ է հասարակության ներգրավվածության նշանակությունը: Հասարակությունը չպետք է լինի գուտ պասիվ սպառող, այլ պետք է ակտիվորեն ներգրավված լինի պաշտպանական ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման գործում՝ միաժամանակ իրականացնելով նաև դրա կանոնակարգված ընթացքի նկատմամբ արդյունավետ վերահսկողություն:

Այսպիսով՝ վերը շարադրվածի հիման վրա կարող ենք անել հետևյալ եզրակացությունները.

- *անհրաժեշտ է ունենալ անկախ ու մասնագիտացված լրատվամիջոց, որը կգրադվի պաշտպանական ոլորտի բազմակողմանի և օբյեկտիվ լուսաբանմամբ, ինչպես նաև ոլորտում տեղի ունեցող գործընթացների մասնագիտական վերլուծությամբ,*
- *հասարակության և զինված ուժերի միջև փոխհարաբերությունների ապահովման նպատակով անհրաժեշտ է գորամասերում ունենալ հասարակության հետ կապեր ապահովող քաղաքացիական պաշտոնատար անձ, որը կունենա լրագրողական կրթություն,*
- *անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել մամուլի հաղորդագրություններին, ապահովել դրանց միջոցով հասարակությանը հնարավորինս ընդգրկում տեղեկատվության տրամադրումը,*
- *անհրաժեշտ է վերանայել պաշտպանական ծախսերի համար բյուջետային հատկացումների գաղտնիության հիմնավորվածության չափանիշները,*
- *անհրաժեշտ է լուսաբանել կարգապահական պատասխանատվության ենթարկված անձանց մասին տեղեկատվությունը,*
- *անհրաժեշտ է ոլորտում տեղի ունեցող կոռուպցիոն դրսևորումների, մարդու իրավունքների ոտնահարման դեպքերի, ինչպես նաև դրանց դեմ ձեռնարկվող միջոցների վերաբերյալ տեղեկույթը տարածել պետական մարմնի նախաձեռնությամբ՝ նրա պաշտոնական «խտորվակներով»: Այդպիսի մեխանիզմների ներդրումը կնպաստի մարդու իրավունքների ոտնահարման և կոռուպցիոն դրսևորումների դեմ պայքարի գործընթացի նկատմամբ հանրային վերահսկողության իրականացմանը: Որպես օրինակներ կարելի է նշել զինծառայողների նկատմամբ կիրառված կարգապահական տույժերի մասին տեղեկույթի հրապարակումը և գնումներ կատարելու գործընթացի հնարավորինս թափանցիկ կազմակերպումը:*

1.1.2. Հասարակությանը հաշվետու լինելը

Հաշվետու լինելը կառավարման սկզբունքներից մեկն է: Ընդհանուր առմամբ, այն ենթադրում է այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են պետական մարմինների և պաշտոնատար անձանց պատասխանատվությունը, անհրաժեշտության դեպքում նրանց մեղադրանք ներկայացնելը և այլն: Ժողովրդավարական հասարակությունում թափանցիկությունը և հաշվետու լինելը հանրային կառավարման օրինականության ապահովման միջոցներ են: Հենց հաշվետու լինելու սկզբունքն է, որ հնարավորություն է ընձեռում թափանցիկության սկզբունքի գործադրմամբ բացահայտված բացասական հետևանքների համար պատասխանատվության ենթարկելու մեղավորներին:

Հաշվետու լինելու սկզբունքը բխում է ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածների նորմերից: Այսպես, ՀՀ Սահմանադրության երկրորդ հոդվածը սահմանում է, որ իշխանությունը, որը պատկանում է ժողովրդին, իրականացվում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Հինգերորդ հոդվածը սահմանում է, որ պետական իշ-

խանութիւնն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, որոնք էլ ժողովրդի կամքի արտացոլման ձևերն են: Այս հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրենց վերապահված լիազորություններն իրականացնելիս պարտավոր են միշտ նկատի ունենալ, որ իրենք այդ իշխանությունն իրականացնում են ժողովրդի անունից, և ժողովուրդը ցանկացած պահի կարող է իրենցից պահանջել այս կամ այն գործողության հիմնավորումը: Պաշտոնատար անձինք միշտ էլ պարտավոր են գիտակցել, որ իրենց վերապահված լիազորությունները ինքնանպատակ չեն, և իրենցից ցանկացած պահի կարող են հաշվետվություն պահանջել այն մարդիկ, «որոնց համար» իրենք աշխատում են:

Ասվածը հատկապես կարևորվում է զինված ուժերի պարագայում: Ձինված ուժերի՝ քաղաքական իշխանությանը հաշվետու լինելու և զինված ուժերի նկատմամբ արդյունավետ վերահսկողության անհրաժեշտության մասին խոսել են դեռ հին ժամանակներից: Մասնավորապես, Ժան Ժակ Ռուսոն գտնում էր, որ զինվորականների համար անհասկանալի է քաղաքական գործիչների գործելաճոր: Նրանք ատում են քաղաքական գործիչներին, որովհետև նրանց համարում են անհամարձակ վախկոտներ: Մինչդեռ քաղաքական գործիչների զսպվածությունը և հավասարակշռվածությունն է, որ հաճախ հնարավորություն է տալիս խուսափելու խոշոր պատերազմներից: Ասվածից կարելի է ենթադրել, որ եթե զինված ուժերի կիրառման մասին որոշում ընդունելու լիազորությունը վերապահվեր զինվորական ղեկավարությանը, ցանկացած, նույնիսկ մանր վեճը կարող էր վերաճել լուրջ և խոշորամասշտաբ հակամարտության: Ուստի անհրաժեշտ է, որ զինված ուժերն ամբողջությամբ հաշվետու լինեն քաղաքական իշխանություններին:

Քաղաքական իշխանություններին հաշվետու լինելու սկզբունքի մասին դրույթներ է պարունակում նաև ԵԱՀԿ «Անվտանգության ռազմաքաղաքական կողմերին առնչվող վարքականոնը», որի քսանհինգերորդ մասը սահմանում է. «Մասնակից պետությունները չեն պահպանի կամ չեն աջակցի այնպիսի ուժերին, որոնք հաշվետու չեն սահմանադրական եղանակով ստեղծված իշխանություններին կամ չեն հսկվում նրանց կողմից»:

Սակայն, այնուամենայնիվ, հնարավոր են իրավիճակներ, որոնցում պետությունը պարզապես ի վիճակի չի լինի հսկողություն իրականացնել իր տարածքում գործող զինված կազմավորումների նկատմամբ: Անկասկած, այդպիսի կազմավորումների գոյությունը սպառնում է ամբողջ միջազգային հանրության անվտանգությանը: Այդ պատճառով Կանոնները սահմանում է նաև դրույթ, որի համաձայն նման իրավիճակներում տվյալ մասնակից պետությունը պետք է խորհրդակցի մյուս մասնակից պետությունների հետ:

Քաղաքական իշխանություններին հաշվետու լինելու տեսանկյունից կարևորվում է նաև այն հանգամանքը, որ ՀՀ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը, որ կանգնած է զինվորական ենթակարգության գագաթին, Հանրապետության Նախագահն է: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնը ևս համարվում է քաղաքական պաշտոն, և այն կարող է զբաղեցնել բացառապես քաղաքացիական անձ, անհրաժեշտ է նշել, որ պաշտպանության նախարարի դերը հստակ չէ զինված ուժերի հրամանատարական շղթայում: Մասնավորապես, «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ զինված ուժերի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հանրապետության Նախագահը: Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ զինված ուժերի կառավարումն իրականացնում է զինված ուժերի շտաբի պետը: Դրա հետ մեկտեղ, նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ զինված ուժերի անմիջական ղեկավարումն իրականացնում է պաշտպանության նախարարը, որը կազմակերպում

և վերահսկում է զինված ուժերի ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի մեջ մտնող այլ մարմինների և կազմակերպությունների գործունեությունը:

Մինչ շարադրվածի վերլուծությանն անցնելը նշենք, որ կառավարման տեսությանը առհասարակ հայտնի չեն «ընդհանուր» և «անմիջական» ղեկավարում հասկացությունները: Ղեկավարումը որևէ ոլորտում գործունեության քաղաքականության որոշումն է, և այն չի կարող անմիջական կամ ընդհանուր լինել միայն այն պարզ պատճառով, որ քաղաքականությունը չի կարող որոշվել ընդհանուր կամ անմիջական կերպով: Կառավարումը ոլորտը կարգավորող օրենքների և ղեկավարման գործընթացում ընդունված որոշումների հիման վրա՝ դրանց կատարմանն ուղղված գործունեությունն է: Ուստի անհասկանալի է մնում, թե ինչ է «զինված ուժերի անմիջական կամ ընդհանուր ղեկավարումը»:

Չնայած այն հանգամանքին, որ օրենքը փորձել է մեկնաբանել «անմիջական ղեկավարում» հասկացությունը՝ այն սահմանելով որպես զինված ուժերի ու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի մեջ մտնող այլ մարմինների և կազմակերպությունների գործունեության կազմակերպում և վերահսկում, պետք է նշել, որ կազմակերպումը կառավարման ֆունկցիա է: Բացի այդ, պաշտպանության նախարարը մասնակցում է ոչ թե զինված ուժերի գործունեության, այլ պաշտպանական ոլորտի կազմակերպմանը, այսինքն՝ նա մասնակցում է ոչ թե զինված ուժերի, այլ պաշտպանական ոլորտի կառավարմանը: Ինչ վերաբերում է վերահսկողությանը, ապա այն առհասարակ դուրս է զինված ուժերի և պաշտպանական ոլորտի կառավարումից: Պաշտպանության նախարարը չի կարող իրականացնել պաշտպանական ոլորտի, առավել ևս՝ զինված ուժերի վերահսկողություն միայն այն պարզ պատճառով, որ նա պաշտպանական ոլորտի կառավարման մարմին է: Իսկ կառավարողը չի կարող միաժամանակ վերահսկող լինել: Նա կարող է լինել միայն հսկողություն իրականացնող:

Բացի այդ, պաշտպանության նախարարը՝ որպես կառավարության անդամ, չի կարող լինել զինված ուժերի անմիջական ղեկավար, քանի որ նրա լիազորությունները պետք է բխեն կառավարության լիազորություններից, մինչդեռ կառավարությանը զինված ուժերի ղեկավարման լիազորություն վերապահված չէ:

Եզրափակելով՝ կարող ենք հանգել այն եզրակացությանը, որ պաշտպանության նախարարը միայն մասնակցում է պաշտպանական ոլորտի կառավարմանը, այլ ոչ՝ զինված ուժերի ղեկավարմանը: Լինելով նաև պաշտպանական ոլորտի կառավարման մարմին՝ պաշտպանության նախարարը կարող է միաժամանակ իրականացնել ոլորտի կառավարման հսկողություն:

Հաշվետու լինելը կարևորվում է նաև գնումների ոլորտում: Բյուջետային հատկացումները, որոնց միջոցով իրականացվում են գնումները, ձևավորվում են հիմնականում քաղաքացիների վճարած հարկերից, տուրքերից և այլ պարտադիր վճարներից: Քաղաքացիներն այդ գումարները վճարում են պետության առջև դրված խնդիրների լուծման ապահովման նպատակով: Այդ խնդիրների լուծումը, ի վերջո, պետք է ուղղված լինի քաղաքացու բնականոն կենսագործունեության ապահովմանը: Հետևաբար քաղաքացիներն էլ իրավունք ունեն իմանալու, թե ինչպես են ծախսվել իրենց գումարները: Այդ պատճառով բյուջետային հատկացումների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը կարևոր է: Իհարկե, ասվածը չի կարող բացարձակ լինել: Միշտ էլ կլինեն այնպիսի ծախսեր, որոնք ազգային անվտանգության շահերի պաշտպանության նպատակով պետք է գաղտնի մնան: Սակայն այս հիմքը չպետք է ընդհանրական դարձնել և բոլոր պաշտպանական ծախսերը գաղտնիացնել:

Նաև գնումների ոլորտում հաշվետու լինելու սկզբունքի ապահովման նպատակով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է, որ եթե ՀՀ Սահմանադրությամբ և/կամ օրենքներով այլ բան նախատեսված չէ, ապա տեղեկատվություն տնօրինողը

տարին առնվազն մեկ անգամ հրապարակում է իր գործունեությանն առնչվող տեղեկատվություն, որը մասնավորապես վերաբերում է նաև տեղեկատվությունը տնօրինողի բյուջեին:

Բացի բյուջետային հատկացումների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումից՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը սահմանում է նաև, որ տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է առնվազն տարեկան մեկ անգամ հրապարակել գրավոր հարցումների ձևերի և դրանք լրացնելու վերաբերյալ խորհրդատվական ցուցումների, հաստիքացուցակների, շրջակա միջավայրի վրա ներգործության, ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալների, այդ թվում՝ մերժման հիմքերի մասին տեղեկություններ:

Անդրադառնալով զինված ուժերում հաշվետու լինելու սկզբունքի պահպանմանը՝ նշենք, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը երբևէ համակարգված եղանակով չի հրապարակել այդօրինակ տեղեկություններ: Իհարկե, որոշակի տեղեկություն, մասնավորապես՝ ՀՀ զինված ուժերի կառուցվածքի, ՀՀ ՊՆ պաշտոնատար անձանց, բյուջեի մասին, հնարավոր է ստանալ ՀՀ պաշտպանության նախարարության էլեկտրոնային կայքէջից, սակայն այսօր ոչ մի քաղաքացի որևէ տեղ չի կարող գտնել, օրինակ, հաստիքացուցակների, ազատ աշխատատեղերի, ստացված հարցումների վերաբերյալ վիճակագրական և ամփոփ տվյալների մասին տեղեկությ: Խոսքը վերաբերում է զինծառայողների, այլ ոչ քաղաքացիական հատուկ ծառայողների կողմից զբաղեցման ենթակա պաշտոններին, քանի որ վերջիններս զբաղեցվում են մրցութային կարգով, որի մասին հրապարակվում է հայտարարություն: Ջինձառայողների կողմից զբաղեցման ենթակա թափուր պաշտոնների մասին տեղեկությունների հրապարակումը ևս կարևորվում է նրանով, որ զինծառայողը, ցանկություն ունենալով տեղափոխվել իր ծառայության վայրից, պետք է իմանա, թե որտեղ և ինչ թափուր հաստիքներ կան: Մինչդեռ այսօր նման տեղեկություն զինծառայողներն ստանում են «անձնական կապերի» միջոցով:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղեկատվության տեսակներից մի քանիսը, հատկապես ստացված հարցումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը, չափազանց անհրաժեշտ են ոլորտում ժողովրդավարական վերահսկողություն իրականացնելու համար: Ավելին՝ հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները՝ առավել ընդունելի կլինեն, եթե ՀՀ պաշտպանության նախարարը ՀՀ Ազգային ժողովում հանդես գար տարեկան զեկույցով՝ ներկայացնելով զինված ուժերում մարդու իրավունքների ոտնահարման դեպքերի և այդ ուղղությամբ ձեռնարկված քայլերի, ոլորտում իրականացվող բարեփոխումների, զինծառայողների սոցիալական ապահովմանն ուղղված միջոցառումների, պետական բյուջեի միջոցների ծախսմանն ուղղությունների և այլ կարևոր հարցերի վերաբերյալ հաշվետվություն: Նման զեկույցների հրապարակումը (բացառությամբ պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններից) առավել արդյունավետ կդարձնեն վերահսկողության իրականացումն այս ոլորտում:

1.2. **Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը՝ որպես օրինականության ապահովման միջոց, և դրա իրավական ամրագրումը ՀՀ օրենսդրության մեջ**

Թե՛ թափանցիկությունը, թե՛ հաշվետու լինելը անհրաժեշտ նախադրյալներ են զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության համար⁷: Ժողովրդավարական վերահսկողությունը, լինելով զինված ուժերում օրինականության ապահովման միջոց, ըստ էության տարբերվում է վարչական հսկողությունից և պետական վերահսկողությունից:

Վարչական հսկողությունը հանրային կառավարման մի մասն է և կոչված է ապահովելու կառավարման իրականացումը: Այդ է պատճառը, որ հսկողություն իրականացնող մարմինները գործում են հանրային կառավարման մարմնի համակարգում: Մինչդեռ վերահսկողությունը դուրս է պետական կառավարման կոնկրետ մարմնի համակարգից, և այն իրականացնում են անկախ մարմինները:

Պետական վերահսկողությունը, որն իրականացվում էր հիմնականում նախկին Խորհրդային Միության տիպի պետություններում, տարբերվում էր ժողովրդավարական վերահսկողությունից այն հանգամանքով, որ վերահսկողությունն իրականացնում էին կուսակցական մարմինները, և որևէ ժողովրդավարական տարրի մասնակցությունը բացառված էր: Ձևական առումով այն իրականացվում էր հասարակության լայն շերտերի ներգրավմամբ, սակայն ամեն ինչ ի վերջո նպատակաուղղված էր ստուգելու՝ արդյոք կատարվո՞ւմ է կուսակցական կամքը, թե՛ ոչ:

Խորհրդային Միության փլուզումից հետո հետխորհրդային պետությունները, բռնելով ժողովրդավարացման ուղին, կանգնեցին նաև զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմ ստեղծելու հրամայականի առջև: Պետք է նշել, որ Խորհրդային պետությունում ևս գոյություն ունեին զինված ուժերի վերահսկողության համակարգ, որը բավականին արդյունավետ էր գործում: Վերահսկողության սուբյեկտը կոմունիստական կուսակցությունն էր, որն ապահովում էր զինված ուժերի կողմից կուսակցության կամքի կատարումը: Այդ վերահսկողությունը բնութթով քաղաքացիական էր, սակայն պարզ է, որ ժողովրդավարական վերահսկողության մասին խոսք անգամ լինել չէր կարող, քանի որ կոմունիստական ռեժիմը և թափանցիկության ու հասարակությանը հաշվետու լինելու սկզբունքները անհամատեղելի էին:

Այդ համակարգի փլուզումից հետո, փաստորեն, բախվեցինք հետևյալ վիճակին. վերացավ նախկին խորհրդային հասարակարգի բաղկացուցիչ մաս կազմող կուսակցական ամբողջական վերահսկողությունը, մինչդեռ չապահովվեց նոր ստեղծված ժողովրդավարական վերահսկողության ինստիտուտների արդյունավետ գործունեությունը: Ընդ որում, խնդիրը բարդանում է նրանով, որ որոշակի օրենքների ընդունմամբ կամ որոշակի ինստիտուտների ստեղծմամբ հնարավոր չէ հարցին լուծում տալ: Դա հնարավոր է ապահովել ինչպես օրենսդրական միջոցառումների, այնպես էլ առանձին, կոնկրետ գործողությունների համալիր գործադրման միջոցով:

Ընդհանուր առմամբ, կարող ենք ասել, որ նախկին սոցիալիստական ճամբարի բոլոր պետություններում առկա են գրեթե նույնաբնույթ դժվարություններ. զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության կայացմանը խոչընդոտում են.

⁷ Այս առումով դժվար է համաձայնել Վենետիկի հանձնաժողովի՝ «Ձինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության նախնական զեկույցում» տեղ գտած այն մտքի հետ, թե զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը նպատակ ունի հասնելու առավելագույն թափանցիկության: Հենց թափանցիկության ու հաշվետու լինելու սկզբունքների ամրագրումն ու հետևողական կիրառումն է, որ բավարար պայմաններ է ստեղծում զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության համար:

- չհիմնավորված գաղտնիության ռեժիմը,
- պաշտպանական գործընթացների պատշաճ լուսարանում և մասնագիտական վերլուծություն չլինելու հանգամանքը,
- քաղաքական կամք չլինելու հանգամանքը,
- քաղաքացիական հասարակության ինստիտուտների (հասարակական կազմակերպություններ, ՉԼՄ-ներ) ոչ ակտիվ ներգրավվածությունը զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության գործում,
- իրավատեր հասարակության բացակայությունը,
- բնակչության իրավագիտակցության ցածր մակարդակը:

Կարող ենք վստահորեն ասել, որ գրեթե բոլոր հետխորհրդային երկրներում ժողովրդավարական վերահսկողության արդյունավետ համակարգի ստեղծումը նախ և առաջ պայմանավորվում է վերը հիշատակված հարցերի լուծմամբ:

Չմանրամասնելով այլ պետություններում տեղի ունեցող գործընթացները՝ պարզապես մեր դիտարկումների հիման վրա արձանագրենք, որ հետխորհրդային պետությունների շարքում զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության առումով նշանակալի առաջընթաց է գրանցել Ուկրաինան: 2003 թվականին Ուկրաինայի Գերագույն ռադան ընդունել է *«Իրավապահ մարմինների և ռազմական կառույցի նկատմամբ ժողովրդավարական, քաղաքացիական վերահսկողության մասին»* օրենք, որով փորձ է արվում համակարգված եղանակով կարգավորելու ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության հարաբերությունները:

Նման օրենքի ընդունման փորձ երկու անգամ արվել է նաև Ռուսաստանի Դաշնությունում, սակայն օրինագծի թերությունների առկայության, չհիմնավորված շատ դրույթների, ինչպես նաև Դաշնային ժողովի ու Դաշնային կառավարության բացասական վերաբերմունքի պատճառով այդ օրինագծի ընդունման գործընթացը կասեցվել է:

Հայաստանի Հանրապետությունում այսօր գոյություն չունի զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության հարաբերությունները կարգավորող միասնական ակտ: Այդ պատճառով դեռևս հստակ կերպով չի ձևավորվել զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության միօրինակ ընկալումը, պարզ չէ, թե որ մարմինները պետք է ընդգրկված լինեն այդ գործում, ինչպես պետք է դա իրականացվի և այլն:

Հայաստանի Հանրապետությունում զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության համակարգի ստեղծումն անցել է զարգացման որոշակի ուղի: Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ ժողովրդավարական վերահսկողությանը վերաբերող առաջին նորմերին կարելի է հանդիպել դեռևս 1996 թվականին ընդունված «Ներքին ծառայության կանոնադրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքում, որի 81-րդ հոդվածը մասնավորապես սահմանում է, որ հրամանատարը պարտավոր է կատարելագործել իր անձնական մասնագիտական պատրաստությունը և զորամասի ղեկավարման մեթոդները՝ իրեն տրված իրավունքների սահմաններում գործելով ինքնուրույնաբար, պետական իշխանության և կառավարման մարմինների, հասարակական միավորումների, ձեռնարկությունների և կոլեկտիվների, պատերազմի և զինված ուժերի վետերանների հետ սերտ կապի միջոցով, ինչպես նաև ամեն կերպ ամրապնդել միանձնյա ղեկավարությունը՝ հենվելով սպայական ժողովի, զորամասի հասարակական կազմակերպությունների վրա, նրանց հետ միասին անձնակազմի ջանքերն ուղղելով առաջադրված խնդիրներն ակտիվ ու ստեղծագործաբար լուծելուն: Կանոնագրքի մի շարք այլ դրույթներ հրամանատարներին պարտավորեցնում են զորամասը ղեկավարելիս հաշվի առնել հասարակական կազմակերպությունների կարծիքը, ապահովել զինծառայողների շփումն իրենց ընտանիքի անդամների և հասարակական կազմակերպությունների հետ և այլն: Չնայած նախատեսված լինելու փաստին՝ հրամանատարները երբևէ չեն կատարել այս դրույթների պահանջները, քանի որ դրանք ուղակիորեն հակասում են զորամասի կառավարման վերաբերյալ ի-

րենց պատկերացումներին: Բացի այդ, քաղաքացիական-ժողովրդավարական տեսանկյունից «ՀՀ - ՋՈՒ կարգապահական կանոնադրությունը» ընդամենը նախատեսում է պետական մարմինների կամ հրամանատարի գործողությունները դատական կարգով բողոքարկելու զինծառայողի իրավունքը, որի մասին նշվում է Կանոնադրության հինգերորդ գլխում: Սակայն նշված կանոնադրությունը չի նախատեսում այդ իրավունքի իրացման մեխանիզմ կամ այն ապահովող դրույթներ: Այդ մասին է վկայում զինվորի կողմից հրամանատարի գործողությունների բողոքարկման նպատակով զինծառայողին արձակում կամ արձակուրդ չտրամադրելու հանգամանքը: Նման դեպքում զինվորի կողմից այդ նպատակով գորամասի տարածքից հեռանալը կորակվի որպես գորամասի տարածքը ինքնակամ թողնել, ինչը արդեն իսկ կարգապահական զանցանք է:

Բացի նշվածներից՝ ժողովրդավարական վերահսկողության տարրեր կարելի է համարել նաև այն, որ պառլամենտն է հաստատում բյուջեն, պառլամենտն է վավերացնում ռազմական համագործակցության բնույթի միջազգային պայմանագրերը և այլն:

Չինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողություն սահմանելու առաջին լուրջ քայլը պաշտպանության նախարարի պաշտոնը քաղաքական պաշտոն համարելն էր, ինչի համաձայն՝ պաշտպանության նախարար նշանակվեց արդեն քաղաքացիական անձ:

Այս ուղղությամբ հաջորդ կարևոր քայլը ՀՀ Սահմանադրության 8.2-րդ հոդվածի ընդունումն էր, համաձայն որի՝ զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական* վերահսկողության ներքո: Այս դրույթը թերևս պետք է հիմք դառնա պետությունում զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության ողջ մեխանիզմի կառուցման համար:

2008 թվականին ընդունված «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով ամրագրվեց, որ զինված ուժերի գործունեության հիմնական սկզբունքներից է զինված ուժերի գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքը:

Ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության վերաբերյալ նորմեր պարունակում են նաև մի շարք այլ իրավական ակտեր, ինչպիսիք են՝ ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգը, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը և այլն:

Այնուամենայնիվ, զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողություն սահմանելու տեսանկյունից այսօր հատկապես վիճահարույց է ՀՀ կառավարության 1996 թվականի օգոստոսի 12-ի թիվ 247 որոշմամբ հաստատված ՀՀ ՋՈՒ կարգապահական կանոնադրության նորմերի կիրառելիության հարցը: Պրոբլեմն այն է, որ նշված ակտի 54-րդ կետի համաձայն զինվորներին տրվող տույժերի շարքում նշվում է նաև *կարգապահական մեկուսարանում (հատուպուլախտում) մեկուսացնելը և պահելը*՝ մինչև տասը օր, իսկ պայմանագրով զինվորական ծառայության ընդունված զինվորներին՝ մինչև յոթ օր ժամկետով: Տույժը կիրառվում է գորամասի հրամանատարի հրամանով: Նշված դրույթը հակասում է Սահմանադրության մի շարք հոդվածների:

➤ **ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք:** Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է ազատությունից զրկում նախատեսել միայն Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում:

Այդ դեպքերի վերլուծությունից պարզ է դառնում, որ ազատությունից զրկումը՝ որպես պատիժ, կարող է կիրառել միայն դատարանը:

* Ինչպես արդեն նշվեց, Սահմանադրությունում միայն *քաղաքացիական վերահսկողություն* տերմինի օգտագործումն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ քաղաքացիական վերահսկողությունը առանց ժողովրդավարական վերահսկողության թերի է:

Պետք նշել, որ նմանատիպ դեպքերին վերաբերող գործեր կան նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական դատարանի պրակտիկայում: Մասնավորապես, *Էնգելը և այլք ընդդեմ Նիդեռլանդների* գործով դիմողներ Էնգելը, Վան դեր Վիելը, Յան դե Վիտը, Յոհաննես Դոնը և Վիլիելմ Շուլը պնդում էին, որ կարգապահական պատիժը և իրենց նկատմամբ կիրառված հարկադրական միջոցը հակասում են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետին:

Այդ գործով վճռում նշվում է, որ Կոնվենցիայի նախապատրաստման և ընդունման ժամանակ մասնակից պետությունների մեծ մասն իր զինված ուժերի համակարգում ուներ համապատասխան զինվորական կարգապահական գումարտակներ, որտեղ զինծառայողների որոշ իրավունքներ և ազատություններ կարող էին սահմանափակվել, ինչը չէր կարող կիրառվել քաղաքացիական անձանց նկատմամբ: Հետևաբար, այդպիսի համակարգի առկայությունն ինքնըստիմյացան չէր հակասում նրանց պարտավորություններին:

Քննության առարկա գործով Դատարանը ձևակերպեց հետևյալ դիրքորոշումը.

- *զինվորական կարգապահությունը, այդուհանդերձ, 5-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման ոլորտից դուրս չէ:* Խնդիրը ոչ միայն այն է, որ այդ տեքստը պետք է դիտվի Կոնվենցիայի 1-ին և 14-րդ հոդվածների լույսի ներքո, այլև այն, որ դրանում նշված ազատությունից զրկելու դեպքերի ցանկն սպառնիչ է: Հետևաբար, կարգապահական պատիժը կամ միջոցը կարող է հանդիսանալ 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

- Որոշելու համար, թե արդյոք որևէ մեկը 5-րդ հոդվածի իմաստով «զրկվել է ազատությունից», մեկնակետ պետք է հանդիսանա կոնկրետ իրադրությունը: Զինվորական ծառայությունն այն տեսքով, որը գոյություն ունի մասնակից պետություններում, ոչ մի դեպքում չի հանդիսանում Կոնվենցիայի իմաստով ազատությունից զրկում, և այդ հատուկ նշված է 4-րդ հոդվածի 3.բ) կետում: Զինծառայողների տեղաշարժի ազատության իրավունքի բավականին լայն սահմանափակումները պայմանավորված են զինվորական ծառայության հատուկ պահանջներով. դրան ուղեկցող մյուս սահմանափակումները չեն ընկնում 5-րդ հոդվածի գործողության ներքո:

- Յուրաքանչյուր մասնակից պետություն լիազորված է սահմանելու զինվորական կարգապահության իր սեփական համակարգը և այդ հարցում օգտվում է հայեցողական ազատությունից: Շրջանակները, որոնցից մասնակից պետությունը չի կարող դուրս գալ, ինչպես այդ պահանջում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածը, միատեսակ չեն զինծառայողների և քաղաքացիական անձանց համար: Կարգապահական պատիժը կամ միջոցը, որոնք կարող են դիտվել որպես ազատությունից զրկում, քաղաքացիական անձի նկատմամբ կիրառելու դեպքում կարող են չունենալ նույն բնույթը, ինչն ունեն զինծառայողի նկատմամբ կիրառելիս: Այդուհանդերձ, վերջին դեպքում նույնպես 5-րդ - հոդվածը կարող է կիրառվել, երբ դրանք ընդունում են սահմանափակումների ձև, որոնք ակնհայտորեն շեղվում են մասնակից պետություններում զինված ուժերի սովորական կենսապայմաններից: Դատարանի մոտեցմամբ, որպեսզի որոշվի, թե արդյոք դա իսկապես այդպես է, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել գործոնների մի ամբողջ շարքի, ինչպիսիք են տվյալ պատժի կամ կարգապահական միջոցի բնույթը, երկարատևությունը, հետևանքները և ազատագրկման եղանակը:

Ասվածի լույսով միանշանակ հաստատվում է, որ միայն դատարանը կարող է անձի նկատմամբ ազատագրկման ձևով պատիժ նշանակել ու կիրառել, ինչը ՀՀ ՁՈՒ կարգապահական կանոնադրությունում պահպանված չէ:

Այս հակասությունից խուսափելու նպատակով ՀՀ-ն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիային միանալիս կատարել է հետևյալ բովանդակությամբ վերապահում.

5-րդ հոդվածի դրույթները չեն ազդի ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրության գործողության վրա, որը հաստատվել է ՀՀ կառավարության որոշմամբ, և որի համաձայն զինվորների, սերժանտների ձեռքակալումը և կարգապահական մեկուսացումը վերապահվում է սպաներին:

➤ *2007 թվականի սահմանադրական բարեփոխումներով ՀՀ Սահմանադրության մեջ նախատեսվեց նոր՝ 83.5-րդ հոդվածը, որի համաձայն «բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում ... ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը»:* Մինչդեռ ՀՀ ՁՈՒ կարգապահական կանոնադրությունը հաստատվել է ՀՀ կառավարության որոշմամբ:

Սահմանադրական բարեփոխումներից հետո, երբ Կոնվենցիայի 5-րդ հոդվածը, որի համաձայն պատասխանատվության միջոցների սահմանումը հնարավոր է բացառապես օրենքով, ամբողջությամբ արտացոլվեց Սահմանադրությունում, զինվորական կարգապահության պահպանման հարաբերությունները օրենքով կանոնակարգելը դարձավ հրատապ խնդիր: Այդ նպատակով ՀՀ պաշտպանության նախարարությունը ներկայումս մշակել և շրջանառության մեջ է դրել ՀՀ զինված ուժերի կարգապահական ոլորտը կանոնակարգող օրենքի նախագիծ:

➤ *Ձորամասի հրամանատարի կողմից անձի ազատությունը սահմանափակելը հակասում է ՀՀ Սահմանադրության երկրորդ հոդվածին, համաձայն որի՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Որևէ կասկած չկա, որ անձին ազատությունից զրկելը պետական իշխանության իրականացման ձև է, ուստի այն պետք է իրականացվի միայն Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:*

Իհարկե, միայն կարգապահական նոր կանոնադրություն ընդունելով չի լուծվի ժողովրդավարական վերահսկողություն իրականացնելու համար իրավական բազայի ապահովման խնդիրը: Փոփոխություններ են պահանջվում բազմաթիվ այլ օրենքներում ևս, որոնք թերևս անմիջական կապ չունեն մարդու իրավունքների ոտնահարման հետ: Այդպիսիք են, մասնավորապես, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը, դատավարական օրենսգրքերը և այլն: Ստացվում է, որ ժողովրդավարական վերահսկողությունը պետք է կարգավորվի մի շարք իրավական ակտերում գուցա հեռաբար բարեփոխումներ կատարելու միջոցով: Մեր կարծիքով՝ անընդունելի է այս հարցի առնչությամբ առանձին օրենքի ընդունումը, քանի որ այն պարունակելու է տարբեր ոլորտներ կարգավորող տարբեր բնույթի՝ ինչպես նյութական, այնպես էլ ընթացակարգային նորմեր:

Եզրակացություններ և առաջարկություններ

Ուսումնասիրելով ՀՀ-ում զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության իրավական կարգավորումը՝ կարող ենք ասել, որ ոլորտը դեռևս պատշաճ կանոնակարգման ենթարկված չէ: Համապատասխան օրինագծերի մշակումը և ընդունումը դեռ առջևում են: Սակայն մշակվող օրինագծերի միջև հնարավոր հակասությունների բացառման, ինչպես նաև ոլորտի կարգավորման ընդհանուր սկզբունքների նախանշման նպատակով անհրաժեշտ ենք համարում, որ ՀՀ Ազգային ժողովն ընդունի ժողովրդավարական վերահսկողության հայեցակարգ: Այդ հայեցակարգում նախ պետք է արտացոլվի «ժողովրդավարական վերահսկողություն» հասկացությունը, նախանշվեն այն սկզբունքները, որոնք պետք է դրվեն մշակվող ամբողջ նորմատիվ բազայի հիմքում: Ընդ որում, այս հարցում անթույլատրելի է եվրոպական պետությունների փորձի «պատճենումը»: Մշակման ընթացքում անհրաժեշտ է ուսումնասիրել այլ պետությունների փորձը, սակայն դրանց ուղղակի տեղայնացումը ընդունելի չէ: Անհրաժեշտ է դրանցում հաշվի առնել նաև մեր իրականությունում ձևավորված և գործող առանձնահատկությունները: Հակառակ պարագայում, այդ նորմերի գործողության արդյունավետությունը կասկածի տակ կդրվի:

2. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ

Մեծ տեղ տալով պետական կառավարման ոլորտում օրինականության ապահովման միջոցներին՝ տեսությունը կարևորում է նաև դրա ապահովման միջոցների վերաբերյալ հարցերը:

Ընդունված է առանձնացնել օրինականության ապահովման երկու եղանակ՝ հսկողությունը և վերահսկողությունը:

Հսկողությունը կառավարման ֆունկցիաներից մեկն է և իրականացվում է կառավարման գործընթացում: Որպես կանոն՝ այդպիսի ֆունկցիաներով օժտված են լինում կառավարման մարմնի համակարգում ստեղծվող մարմինները:

Վերահսկողությունը, ի տարբերություն հսկողության, կառավարման գործընթացում չի իրականացվում և հանրային կառավարման փուլ չէ: Այն իրականացնում են հատուկ վերահսկողական լիազորություններով օժտված մարմինները, որոնք լիովին անկախ են պետական մյուս մարմիններից: Բացի այդ, համընդհանրացման գործընթացների բերումով վերջին ժամանակներում վերահսկողությունը ընդունված է բաժանել ներքին և արտաքին վերահսկողության: Արտաքին վերահսկողությունն իրականացնում են միջազգային կազմակերպությունները: Դրա վառ օրինակ են Եվրոպայի խորհրդի կառույցները, ԵԱՀԿ-ն, ՄԱԿ-ը և այլն, որոնք մի շարք միջազգային փաստաթղթերի շրջանակներում ակտիվորեն ներգրավվում են պետության ներսում օրինականության ապահովման հիմնախնդիրների լուծման գործում: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ պետությունն ինքն է համաձայնություն տալիս այդ վերահսկողության համակարգերին միանալու վերաբերյալ: Դա բխում է պետության՝ համաշխարհային գործընթացներում ներգրավված լինելու շահերից: Պարզ է, որ որքան բաց և թափանցիկ է պետությունը միջազգային հանրության համար, այդքան բարձր է նրա միջազգային վարկանիշը:

Ասվածը նկատի ունենալով՝ հետագայում կփորձենք վերլուծել պաշտպանական ոլորտում օրինականության ապահովման հսկողական և վերահսկողական մեխանիզմները:

2.1. ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանությունը՝ որպես օրինականության ապահովման միջոց

Ամենաընդհանուր կերպով ռազմական ոստիկանությունը կարելի է բնութագրել որպես մի կառույց, որի առաջնային խնդիրը զինված ուժերում իրավապահպան ֆունկցիայի իրականացումն է: Այդպիսի կառույցներ ստեղծվեցին հիմնականում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ հատկապես ակտուալ էին զինված ուժերում օրինականության և կարգապահության ապահովման հարցերը:

Խորհրդային Միությունը հետևողականորեն ժխտում էր ռազմական ոստիկանություն ունենալու գաղափարը: Դրա պատճառն այն թեզն էր, որ հանցագործությունը անհամատեղելի է կոմունիստական ուտոպիայի հետ: Այնուամենայնիվ, ԽՍՀՄ զինված ուժերում լուրջ ուշադրություն էր դարձվում հանցավորության դեմ պայքարի և իրավապահ ֆունկցիայի իրականացման հարցերին: Ակնհայտ է, որ Խորհրդային Միության մեծ հսկայական երկրում նպատակահարմար չէր զինված ուժերում օրինականության ապահովման խնդիրը դնել միայն ընդհանուր իրավապահպան ֆունկցիա իրականացնող այնպիսի մարմինների վրա, ինչպիսիք էին ներքին գործերի նախարարությունը, դատախազությունը և այլն: Այդ պատճառով նախատեսվեցին մի շարք մարմիններ (պարեկային ծառայություն, ճանապարհային ծառայություն և այլն), որոնք ըստ էության իրականացնում էին ռազմական ոստիկանության գործառնություններ:

Ընդհանուր առմամբ, տարբեր պետություններում ռազմական ոստիկանության լիազորությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրա առջև դրված են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են կայազորներում կարգապահության ապահովումը, օբյեկտների պահպանությունը, զինված ուժերում կատարված հանցագործությունների քննությունը, հակասահաբեկչական գործողությունների կատարումը, քաղաքացիական բնակչության հուզումների լիկվիդացումը (ԱՄՆ, Ֆրանսիա, Ավստրալիա), ռազմական ավտոտրանսպորտի գնությունը, ռազմական օբյեկտներում քննչական և հետախուզական միջոցառումների իրականացումը (Մեծ Բրիտանիա, Իտալիա): Կարելի է նշել, որ դրանք այնպիսի լիազորություններ են, որոնք չեն բխում զինված ուժերի գործառնություններից, սակայն կարող են որոշակիորեն առնչվել զինված ուժերի գործունեության հետ: Պետք է նշել նաև, որ առավել արդյունավետ է այդպիսի լիազորություններն իրականացնել հարաբերականորեն անկախ և ինքնուրույն ստորաբաժանման միջոցով:

Ռուսաստանի Դաշնությունում մինչ 2010 թ մնան կառույց չէր գործում, չնայած. նախատեսվում էր նույն թվականի գարնանը պաշտպանության նախարարության համակարգում ստեղծել ռազմական ոստիկանություն:

Հայաստանի Հանրապետությունում ռազմական ոստիկանությունը ստեղծվել է 1992 թ. մայիսին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով: Մինչև 2007 թվականի՝ ռազմական ոստիկանության կարգավիճակը սահմանող օրենքի ընդունումը այդ կառույցը, ըստ էության, չի ունեցել հստակ կարգավիճակ: Այն գործում էր պաշտպանության նախարարության վարչության կարգավիճակով:

Այսօր Հայաստանի Հանրապետության ռազմական ոստիկանության կարգավիճակը սահմանված է «Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենքով: Համաձայն այդ օրենքի՝ ռազմական ոստիկանությունն ապահովում է.

- 1) *հետաքննության իրականացումը զինված ուժերում զինվորական հանցագործությունների գործերով, որոնք կատարվել են զորամասի տարածքում կամ վերագրվում են ժամկետային ծառայության զինծառայողներին,*
- 2) *զինծառայողների կողմից նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունների նախականիսումը, կանխումը և խափանումը,*
- 3) *լիազոր մարմնին ամրագրված պետական գույքի պահպանությունը,*
- 4) *զինված ուժերի տրանսպորտային միջոցների նպատակային շահագործումը և անվտանգ երթևեկությունը:*

«Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենքը սահմանում է նաև, որ ռազմական ոստիկանությունը, իր առջև դրված խնդիրներին համապատասխան, աջակցում է զինված ուժերում օրինականության և կարգապահության ամրապնդմանը, զորամասերում և զինվորական կառավարման մարմիններում անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի ուսումնասիրմանը և իրավագիտակցության բարձրացմանը:

Ռազմական ոստիկանության կանոնադրությունը հաստատվել է 2008 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 1554-Ն որոշմամբ: Համաձայն այդ իրավական ակտի՝ ռազմական ոստիկանությունը համարվում է պաշտպանության նախարարության աշխատակազմից դուրս առանձնացված ստորաբաժանում: ՀՀ կառավարության մեկ այլ՝ 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 884-Ն որոշմամբ հաստատվել են նաև ռազմական ոստիկանության կառուցվածքը և անձնակազմի թվաքանակը: Ընդ որում, անձնակազմի թվաքանակը համարվել է գաղտնի:

Ռազմական ոստիկանության դերի և առհասարակ գոյության նպատակահարմարության մասին միասնական տեսակետ դեռևս գոյություն չունի: Ոմանք այն համարում են այսպես կոչված «կույրադիքային կառույց», որը, ըստ էության, չունի իր բնորոշ լիազորությունները. դրանք իրականում պետք է տրվեն այս կամ այն պետական մարմնին: Այդ դիրքորոշումը հիմնականում պատճա-

ռաբանվում է նրանով, որ ռազմական ոստիկանության առջև դրված խնդիրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ չկան այնպիսի պրոբլեմներ, որոնք հնարավոր է լուծել բացառապես ռազմական ոստիկանության միջոցով:

Այնուամենայնիվ, կփորձենք Հայաստանի Հանրապետության պայմաններում ռազմական ոստիկանության դերի վերաբերյալ եզրակացություններ և առաջարկություններ անել «Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենքով վերջինիս վերապահված լիազորությունների ուսումնասիրությունից հետո:

➤ **Հետաքննության իրականացումը՝ որպես ռազմական ոստիկանության լիազորություն**

Համաձայն «Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենքի՝ ռազմական ոստիկանությունը հետաքննություն է իրականացնում զինված ուժերում զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, որոնք կատարվել են զորամասի տարածքում կամ վերագրվում են ժամկետային ծառայության զինծառայողներին: Այս առումով հետաքրքրական է հիշատակել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի երկրորդ մասը, համաձայն որի՝ հետաքննության մարմին են համարվում նաև զորամասերի, զորամիավորումների հրամանատարները և զինվորական հիմնարկների պետերը՝ զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև այն արարքների վերաբերյալ գործերով, որոնք կատարվել են զորամասի տարածքում կամ վերագրվում են ժամկետային ծառայության զինծառայողներին: Միևնույն ժամանակ, նույն հոդվածը սահմանում է, որ հետաքննության մարմին է նաև ռազմական ոստիկանությունը՝ օրենքով իր իրավասությանը հանձնված գործերով: Սակայն ռազմական ոստիկանությանը օրենքով վերապահված իրավասության շրջանակը հստակ չի սահմանվում, ինչը գործնականում կարող է հանգեցնել իրավասությունների կոլիզիայի:

Այս առումով միանշանակ հարց է ծագում՝ ո՞ր դեպքերում են հետաքննություն իրականացնում զորամասի հրամանատարները, ո՞ր դեպքերում՝ ռազմական ոստիկանության աշխատակիցները: Նշենք նաև, որ հետաքննության իրականացումը հաճախ պահանջում է մի քանի անձանց ներգրավում, օպերատիվ-հետախուզական աշխատանքի իրականացում, ինչը զորամասի հրամանատարը չի կարող ապահովել: Բնականաբար, նա ի վիճակի չի լինի օպերատիվ-հետախուզական աշխատանքի իրականացման համար ներգրավել այլ զինծառայողների, քանի որ նրանք չունեն համապատասխան գիտելիքներ և հմտություններ: Այս առումով, բնականաբար, ավելի նպատակահարմար է հետաքննության լիազորությունը վերապահել մասնագիտացված կառույցի, որը հենց ստեղծված է հետաքննություն իրականացնելու համար: Միևնույն ժամանակ, անհասկանալի է զինվորական գործերով հետաքննությունը որպես առանձին կատեգորիա առանձնացնելու հանգամանքը: Մեր կարծիքով՝ առավել նպատակահարմար կլիներ այս գործերով հետաքննության իրականացումը ևս վերապահել ոստիկանությանը և չառանձնացնել որպես առանձին կատեգորիա: Ասվածը հատկապես կարևորվում է այն առումով, որ երբեմն կարող են հակասություններ առաջանալ պրակտիկայում: Մասնավորապես՝ միայն այն հանգամանքը, որ հանցագործությունը կատարել է ժամկետային զինծառայողը, չի բացառում այդ հանցագործության մեջ քաղաքացիական անձանց մասնակցությունը: Այս պարագայում, փաստորեն, քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, քրեական գործից պետք է անջատվի այն մասը, որը վերաբերում է քաղաքացիական անձանց, և այն առանձնացվի ինքնուրույն վարույթում: «Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը թերևս փորձել է լուծել այս խնդիրը՝ ամրագրելով նորմ, համաձայն որի՝ ռազմական ոստիկանությունը զորամասերի, զինվորական այլ կազմակերպությունների տարածքներից դուրս զինծառայողների մասնակցությամբ կատարված հանցագործությունների հետ կապված հետաքննությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ համատեղ:

Ինչևիցե, չենք կարծում, որ սա կարող է բխել գործի քննության շահերից: Այդ պատճառով կարծում ենք, որ ռազմական ուստիկանության կողմից հետաքննության գործառնությունների իրականացումը նպատակահարմար չէ Հայաստանի Հանրապետության պայմաններում: Այն նպատակաուղղված է զինված ուժերում հանցավորության դեմ պայքարին, ինչը, թերևս, առավել արդյունավետ կարող են իրականացնել ոչ զինվորական կառույցները՝ նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ օրենքը հստակ չի տարանջատում հետաքննություն իրականացնող երկու այնպիսի սուբյեկտներին, ինչպիսիք են հրամանատարը և ռազմական ուստիկանությունը:

➤ ***Ջինժառայողների կողմից նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունների նախականիտումը, կանխումը և խափանումը՝ որպես ռազմական ուստիկանության լիազորություն:***

Ռազմական ուստիկանության առջև դրված խնդիրներից հաջորդը զինժառայողների կողմից նախապատրաստվող կամ կատարվող հանցագործությունների նախականիտումը, կանխումը և խափանումն է: Սա ևս հանցավորության դեմ պայքարի լիազորություն է, որ իրականացնում են իրավապահ մարմինները: Ռազմական ուստիկանության կողմից այս խնդրի իրականացումը ևս - կարող է որոշակի բարդություններ առաջացնել պրակտիկայում, քանի որ այդ գործընթացում զինվորականների հետ միասին կարող են ներգրավված լինել նաև քաղաքացիական անձինք, ինչն արդեն անհնար կդարձնի ռազմական ուստիկանության կողմից այդ անձանց նկատմամբ որևէ վարույթի իրականացումը: Բացի այդ, օրենքում՝ զինժառայողների կողմից նախապատրաստվող հանցագործությունների կանխումը նվիրված հողվածում, նշվում է ռազմական ուստիկանության լիազորությունների իրականացումը նաև այն ժամանակ, երբ զինժառայողը կատարել է վարչական իրավախախտում: Այնուհայտ է, որ սա չի բխում ո՛չ «Ռազմական ուստիկանության մասին» ՀՀ օրենքով սահմանված խնդիրներից, ո՛չ էլ նշված հողվածի անվանումից:

Բացի այդ, ռազմական ուստիկանությանը ըստ էության վերապահվում են իրավապահ մարմինների գործառնություններ: Սակայն դա խնդրահարույց է, քանի որ զինված ուժերի կազմում գործող ստորաբաժանմանը, փաստորեն, վերապահվել են իրավապահ մարմնի լիազորություններ, ինչը, կարծում ենք, չի կարող նպատակահարմար համարվել: Մեր կարծիքով՝ ռազմական ուստիկանությունը պետք է օժտվեր ոչ թե իրավապահ, այլ ընդհանուր հսկողական գործառնություններով:

➤ ***Լիազոր մարմնին ամրագրված պետական գույքի պահպանությունը՝ որպես ռազմական ուստիկանության լիազորություն***

Համաձայն «Ռազմական ուստիկանության մասին» ՀՀ օրենքի՝ լիազոր մարմնին ամրագրված պետական գույքի պահպանությունը ռազմական ուստիկանության խնդիրներից է: Այսպես, համաձայն այդ օրենքի 9-րդ հողվածի՝ լիազոր մարմնին ամրագրված պետական գույքի պահպանությունն ապահովելիս ռազմական ուստիկանությունն օրենքով սահմանված կարգով և դեպքերում ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ զինժառայողների կողմից լիազոր մարմնին ամրագրված պետական գույքի դեմ ուղղված հակաիրավական գործողությունները խափանելու և վերացնելու ուղղությամբ, վերահսկողություն է իրականացնում լիազոր մարմնին ամրացված պետական գույքի նպատակային օգտագործման նկատմամբ, հայտնաբերված թերությունների վերացման նպատակով գույքի պահպանության համար պատասխանատու պաշտոնատար անձանց տալիս է պարտադիր կատարման հանձնարարականներ:

Եթե անդրադառնանք ռազմական ուստիկանության այնպիսի լիազորությանը, ինչպիսին զինժառայողների կողմից լիազոր մարմնին ամրագրված պետական գույքի դեմ ուղղված հակաիրավական գործողությունները խափանելու կամ վերացնելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկումն է, ապա պետք է նշենք, որ նմանօրինակ միջոցառումների իրականացումը գործառնությունների հրամանատարների խնդիրն է, և վերջիններս դա կարող են կատարել ավելի արդյունավետորեն: Կասկածից դուրս է, որ կանխումը և խափանումը պահանջում են իրավիճակին օպերա-

տիվ արձագանքում: Այս առումով, իրոք, գորամասի հրամանատարը կարող է ավելի արդյունավետ արձագանքել, քան ռազմական ոստիկանության ծառայողը:

Ինչ վերաբերում է ռազմական ոստիկանության կողմից գույքի նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացմանը, ինչպես նաև՝ հայտնաբերված թերությունների վերացման նպատակով գույքի պահպանության համար պատասխանատու անձանց պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ տալուն, ապա դրանք հարիր են ռազմական ոստիկանության կողմից իրականացվող վերահսկողական լիազորություններին:

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում զինված ուժերի տրանսպորտային միջոցների նպատակային օգտագործումը և անվտանգ երթևեկությունը ապահովելու լիազորությունը: Այդ նպատակով ռազմական ոստիկանությունն իրականացնում է զինված ուժերի տրանսպորտային միջոցների գրանցում և հաշվառում, ինչպես նաև կազմակերպում և անցկացնում է զինված ուժերի տրանսպորտային միջոցների, դրանց կցորդների պետական տեխնիկական զննություն:

Զինված ուժերի տրանսպորտային միջոցները վարող անձանց կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության համար սպառնալիք ստեղծելու կամ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու դեպքում ռազմական ոստիկանությունն իրավունք ունի կանգնեցնելու զինված ուժերի տրանսպորտային միջոցները, ստուգելու երթևեկելու իրավունք վերապահող և փոխադրվող բեռի փաստաթղթերը և կազմելու արձանագրություններ, արգելելու զինված ուժերի տեխնիկայես անսարք և երթևեկության անվտանգությանն սպառնացող տրանսպորտային միջոցների շահագործումը, զննելու զինված ուժերի տրանսպորտային միջոցները և փոխադրվող բեռը, արգելանքի վերցնելու զինված ուժերի՝ հետախուզման մեջ գտնվող և հայտնաբերված տրանսպորտային միջոցները, մեկուսացնելու զինված ուժերի տրանսպորտային միջոցներն անսթափ վիճակում վարող, ինչպես նաև զինված ուժերի տրանսպորտային միջոց վարելու կամ դրանից օգտվելու իրավունքը հաստատող փաստաթղթեր չունեցող անձանց՝ արգելանքի տակ վերցնելով տրանսպորտային միջոցը՝ բեռների առկայության դեպքում ապահովելով դրանց պահպանումը:

Պետք է նշել, սակայն, որ այնպիսի լիազորությունների իրականացումը, ինչպիսիք են զինված ուժերին պատկանող տրանսպորտային միջոցների վարողների կողմից ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքում արձանագրության կազմումը, մեր կարծիքով, աննպատակահարմար է, քանի որ այդ լիազորությունն ավելի արդյունավետ կիրականացնի ճանապարհային ոստիկանությունը: Բացի այդ, անհասկանալի է, թե ինչ իրավաբանական հետևանքներ է առաջացնելու արձանագրության կազմումը: Արդյո՞ք դրան հաջորդելու է տուգանքի վճարումը իրավախախտում կատարած անձի կողմից, ինչը ենթադրվում է նման դեպքերում:

Մեր կարծիքով՝ օրենքը չի սահմանել այնպիսի լիազորություններ, ինչպիսիք են զինված ուժերի տեխնիկայի ուղեկցումը, նրանց անվտանգ երթևեկության կազմակերպումը և ճանապարհային երթևեկության կազմակերպումը ռազմական դրության ժամանակ այն վայրերում, որտեղով պետք է անցնի ռազմական տեխնիկան:

Ռազմական ոստիկանության մասին խոսելիս չենք կարող չանդրադառնալ նաև ռազմական ոստիկանության մի այնպիսի լիազորության, ինչպիսին է կարգապահական խախտումների, մասնավորապես՝ դասալքության և համազգեստի կրման կանոնների խախտման դեպքում զինծառայողներին բերման ենթարկելը: Համազգեստի կրման կանոնների խախտումը առաջացնում է կարգապահական պատասխանատվություն և չի պարունակում հանցակազմի տարրեր: Ինչ վերաբերում է դասալքությանը, ապա այն միշտ չէ, որ հանցակազմի տարրեր է պարունակում: Մինչդեռ մեր օրերում բազմաթիվ են դեպքերը, երբ համազգեստի կրման կանոնների խախտում թույլ տված զինծառայողը բերման է ենթարկվում ռազմական ոստիկանության բաժին: «Ռազմական ոստիկանության մասին» ՀՀ օրենքով ռազմական ոստիկանության առջև դրված խնդիրների վերլուծություն

նը ցույց է տալիս, որ այս կառույցն օժտված չէ նման լիազորություններով: Եթե այս ամենին հավելենք նաև Սահմանադրության 5-րդ հոդվածը, համաձայն որի պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, ապա հարց է ծագում՝ ի վերջո, ինչի՞ հիման վրա է ռազմական ոստիկանությունն իրականացնում այդ գործառնությունը:

2.2. ՀՀ զինվորական դատախազությունը՝ որպես օրինականության ապահովման միջոց

Գատախազության կարգավիճակը և նրա առջև դրված խնդիրները սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ: Մասնավորապես՝ Սահմանադրության 103-րդ հոդվածը նշում է, որ դատախազությունը միասնական համակարգ է, որը ղեկավարում է գլխավոր դատախազը: Նկատի ունենալով սահմանադրական այս դրույթը՝ կարող ենք եզրակացնել, որ զինվորական դատախազությունը ևս դատախազության միասնական համակարգի բաղկացուցիչ մաս է, և նրա առջև դրված խնդիրները բխում են Սահմանադրության 103-րդ հոդվածից: Այսպես. զինված ուժերում օրինականության ապահովման նպատակով զինվորական դատախազությունը

ա/ հարուցում է քրեական հետապնդում,

բ/ հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ,

գ/ դատարանում պաշտպանում է մեղադրանքը,

դ/ պետական շահերի պաշտպանության հայց է հարուցում դատարան,

ե/ բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները,

զ/ հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ:

«Գատախազության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածը սահմանում է, որ զինված ուժերում զինվորական դատախազությունն իրականացնում է Սահմանադրության 103-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները:

Զինվորական դատախազության՝ որպես առանձին կառույցի նախատեսումը ևս բխում է զինված ուժերի նկատմամբ «առանձնահատուկ վերաբերմունքից»: Կարծում ենք՝ որևէ անհրաժեշտություն չկա զինված ուժերն առանձնացնելու հասարակական կյանքի մյուս ոլորտներից և դրա գործունեության որևէ կողմն ապահովելու համար ստեղծելու մի առանձին կառույց: Մասնավորապես, որևէ տարբերություն չկա զինված ուժերի գործունեության ոլորտում պետական շահերի պաշտպանության նպատակով հայց հարուցելու և հասարակական կյանքի այլ ոլորտներում պետական շահերի պաշտպանության նպատակով հայց հարուցելու միջև:

2.3. Պաշտպանական ոլորտի կառավարման նկատմամբ հսկողության ներկազմակերպական համակարգը

Բացի նշվածներից՝ պաշտպանության նախարարության համակարգում օրինականության ապահովման նկատմամբ հսկողություն են իրականացնում նաև նախարարության աշխատակազմում գործող երկու կառույցներ՝ վերահսկիչ վարչությունը և ֆինանսական տեսչությունը: Առաջինը հսկողություն է իրականացնում պաշտպանության նախարարի հրամանների կատարման, իսկ երկրորդը՝ պաշտպանության նախարարության համակարգում ֆինանսական միջոցների ծախսման նկատմամբ:

Այդ կառույցների գործունեությունն ըստ բնույթի ոչ թե վերահսկողություն, այլ զուտ ներկազմակերպական հսկողություն է, քանի որ դրանք գործում են կառավարման մարմնի համակարգում: Դրանց և արտաքին հսկողության մեխանիզմները, ըստ էության, փոխլրացնում են միմյանց:

Հարկ է նշել, որ նշված երկու ստորաբաժանումները սկզբնական շրջանում միայն ստուգումներ էին կատարում, այսինքն՝ իրականացնում էին *post factum*, այլ ոչ՝ *a priori* հսկողություն: Մասնավորապես՝ վերահսկիչ-վերստուգիչ հանձնաժողովը⁸ իրականացնում էր պլանային ստուգումներ գործառնաբերում՝ առկա խախտումները բացահայտելու, ՀՀ պաշտպանության նախարարի հրամանների կատարման ընթացքը վերահսկելու և այլ նպատակներով: Բացի այդ, վերահսկիչ-վերստուգիչ հանձնաժողովը երբեմն ներգրավվում էր նաև նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից իրենց առջև դրված հանձնարարությունները կատարելու փաստը ստուգելու աշխատանքներում: Այդպիսի պրակտիկան չէր կարող իրեն արդարացնել, քանի որ վերահսկողությունը կարող է արդյունավետ լինել բացառապես կառավարման մարմնից դուրս գործող անկախ մարմինների կողմից իրականացվելու պարագայում: Ակնհայտ է, որ կառավարման մարմինների կողմից վերահսկողություն իրականացնելու դեպքում միշտ էլ առկա է լինելու սուբյեկտիվ տարրը, ինչն էլ նվազարկելու է վերահսկողության իրականացման արդյունավետությունը:

Ֆինանսական տեսչության և վերահսկիչ վարչության տիպի ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը պայմանավորված է կառավարման գործընթացում օրինականության ապահովման նկատմամբ հսկողության որակով, ուստի դրանք պետք է ի սկզբանե ներգրավված լինեն կառավարման գործընթացում, որպեսզի կարողանան բացառել խախտումները մինչև դրանց կատարումը: Անհրաժեշտության դեպքում նրանց պետք է վերապահվի կառավարչական գործողության կատարումը չթույլատրելու լիազորություն, ինչը միանշանակորեն դրական կարող է ազդել կառավարման համակարգում օրինականության ապահովման վրա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պաշտպանության նախարարը՝ որպես կառավարման մարմին, պետք է իրականացնի նաև հսկողության գործառնույթ, որը կառավարման գործառնույթներից մեկն է, և որ վերահսկիչ վարչությունը և ֆինանսական տեսչությունը գործում են հենց նախարարի աշխատակազմում, կարող ենք ասել, որ այդ երկու կառույցներին է պատվիրակվել նախարարի հսկողական գործառնույթի իրականացումը: Նրանք պետք է «նախարարի անունից» իրականացնեն հսկողություն:

Վերջին շրջանում այդպիսի պրակտիկա կիրառվում է: Մասնավորապես՝ ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի վերահսկիչ վարչության ներկայացուցիչները ներգրավվում են ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար գնումների հանձնաժողովի կազմում: Բացի այդ, վերահսկիչ վարչությունը ներգրավվում է նաև քաղաքացիական հատուկ ծառայողների թափուր հաստիքների զբաղեցման համար անցկացվող մրցութային, ինչպես նաև ատեստավորման հանձնաժողովներում, ինչը գործնականում ապահովում է կառավարման գործընթացում օրինականության պահպանման, ինչպես նաև՝ պաշտպանության նախարարի՝ որպես կառավարման մարմնի հսկողական գործառնույթների իրականացումը:

Հետագայում պետք է կիրառվի նաև կառավարման գործընթացում որոշումների նախապատրաստման և իրականացման փուլում նշված երկու ստորաբաժանումներին ավելի գործնական լիազորությունների վերապահման պրակտիկա՝ դրանով իսկ ապահովելով պաշտպանության նախարարի հսկողական գործառնույթի առավել արդյունավետ իրականացումը:

⁸ Այդպես էր կոչվում վերահսկիչ վարչությունը մինչև ՀՀ պաշտպանության նախարարության նոր կանոնադրության հաստատումը:

3. ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Չինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունն իրականացնում են պետական մի շարք մարմիններ և քաղաքացիական հասարակության այնպիսի տարրերը, ինչպիսիք են հասարակական կազմակերպությունները, ազատ զանգվածային լրատվամիջոցները և այլն:

Անշուշտ, վերահսկողության համակարգի կենտրոնում խորհրդարանական վերահսկողությունն է, որն իրականացնողը ժողովրդավարական ճանապարհով ընտրված պառլամենտն է: Նման դերի վերապահումը վերջինիս պայմանավորված է այն պարզ հանգամանքով, որ լինելով պետության բարձրագույն ներկայացուցչական մարմին՝ հասարակության յուրատեսակ «ֆորում», խորհրդարանն առավել անաչառ ու ամբողջական կերպով կարող է իրականացնել զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը:

3.1. ՀՀ Ազգային ժողովը՝ որպես ժողովրդավարական վերահսկողության մարմին

2001 թ. նոյեմբերի 24-ին ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի 18-րդ նիստում ընդունվել է «Պետության ռազմական կառույցի խորհրդարանական վերահսկողության մասին» մոդելային օրենքը: Այդ օրենքով խորհրդարանական վերահսկողությունը սահմանվում է որպես քաղաքացիական-ժողովրդավարական վերահսկողության առանցքային տարր: Այն մեկնաբանվում է որպես վարչական միջոցների և իրավական նորմերի համակարգերի ստեղծմանն ու արդյունավետ կիրառմանն ուղղված գործունեություն, որ իրականացնում է խորհրդարանը՝ պետական իշխանության և քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ համագործակցությամբ: Այդ օրենքի նպատակն է՝ ապահովել զինված ուժերի արդյունավետ կառավարումը, նրանց քաղաքական և գաղափարական չեզոքությունը, ռազմական կառույցի կայացումը և առավելագույն թափանցիկությունը, լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների հետ դրա կառուցողական համագործակցությունը, զինծառայողների քաղաքացիական, սոցիալական իրավունքների պաշտպանությունը, այդ թվում՝ հասարակությանը զորացրված զինծառայողների ադապտացումը:

Մոդելային օրենքի համաձայն՝ խորհրդարանը ժողովրդավարական վերահսկողությունն իրականացնում է՝ 1. օրենքների ընդունման, 2. զինված ուժերի բյուջեի հաստատման, 3. դրա կատարման նկատմամբ հսկողության, 4. զինված ուժերի կառուցվածքի, թվակազմի հաստատման, 5. միջազգային պայմանագրերի վավերացման, դրանք չեղյալ հայտարարելու, ինչպես նաև պաշտպանական ոլորտին վերաբերող առանցքային հարցերի ուսումնասիրության իրականացման, 6. ռազմական և արտակարգ դրության հաստատման և չեղյալ հայտարարելու 7. զինված ուժերի օգտագործման հարցի օրենսդրական կարգավորման և մի շարք այլ «ակտերի» կատարման միջոցով:

Այժմ անդրադառնանք այն հարցին, թե որքանով է ՀՀ Ազգային ժողովը տիրապետում նման վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ գործառույթներ իրականացնելու լիազորությունների:

ՀՀ Սահմանադրության 80-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորներն իրավունք ունեն գրավոր և բանավոր հարցերով, իսկ խմբակցությունները և խմբերը՝ նաև հարցապնդումներով դիմելու կառավարությանը, որոնց կառավարությունը պատասխանում է շաբաթվա մեկ նիստի ընթացքում: Պատգամավորների հարցերի կապակցությամբ Ազգային ժողովը որոշումներ չի ընդունում: ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգի 105-րդ հոդվածին համապատասխան՝ Ազգային ժողովը

հարցապնդումների վերաբերյալ կարող է համապատասխան պետական կառավարման մարմնին առաջարկությամբ դիմելու որոշում ընդունել: Փաստորեն, Ազգային ժողովը նման եղանակով կարող է իրեն հուզող հարցերի վերաբերյալ տեղեկություններ ստանալ: Սակայն վերահսկողության այս ձևը արդյունավետ չէ, քանի որ մեր պառլամենտը չունի այն գործուն լծակը, որով կկարողանար հետամուտ լինել և ապահովել հարցապնդման մեջ նշված պրոբլեմների ճիշտ լուծումը: Վերահսկողության այս եղանակն առավել ազդեցիկ կլիներ, եթե նման դեպքերում խորհրդարանը կարողանար գործադիրի կողմից իր հարցապնդումներում արժարժված պրոբլեմների լուծման վերաբերյալ տալ քաղաքական գնահատական, ինչը միանշանակ մասն ազդեցություն կունենար գործադիրի աշխատանքի նկատմամբ հասարակության վերաբերմունքի վրա, կամ, եթե խորհրդարանը նման իրավիճակներում օժտված լիներ կառավարությանն անվստահություն հայտնելու իրավագրությանը, ինչը նախատեսված չէ մեր Սահմանադրությամբ:

Ինչ վերաբերում է զինված ուժերի օգտագործման ուղղությունների որոշմանը, ապա դրանք սահմանված են ՀՀ Նախագահի հրամանագրով հաստատված Ռ-ազմական դոկտրինով, ինչն ինքնին հակասում է զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության գործուն խորհրդարանի առանցքային դերին:

Բացի այդ, հաշվի առնելով, որ Ազգային ժողովն է հաստատում ռազմական կարիքների բավարարման համար նախատեսված բյուջեն, տրամաբանական է զինված ուժերի թվակազմի և գորակոչի ենթակա անձանց քանակի հաստատումը և վերապահել Ազգային ժողովին: Մինչդեռ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն ՀՀ կառավարությունը սահմանում է գործերի թվաքանակը, իսկ պաշտպանության նախարարը՝ գորակոչի ենթակա անձանց թվաքանակը: Միանգամայն հասկանալի է հաստիքացուցակների հաստատումը Կառավարությանը վերապահելը (կարելի է ենթադրել, որ դա արվել է համակարգի ճկունությունն ապահովելու նպատակով), մինչդեռ անհասկանալի է գործերի թվաքանակի հաստատումը Կառավարությանը, առավել ևս՝ գորակոչի ենթակա անձանց քանակի հաստատումը պաշտպանության նախարարին վերապահելը:

Բյուջետային գործընթացում ՀՀ Ազգային ժողովի դերը սահմանափակվում է միայն բյուջեն ընդունելով, դրանում փոփոխություններ կատարելով և դրա կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելով, որն էլ արտահայտվում է բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության հաստատմամբ: Սակայն այս պարագայում դուրս է մնում բյուջետային միջոցների նպատակային ծախսման նկատմամբ հսկողությունը: Որպես օրինակ կարելի է նշել, որ ՀՀ կառավարությունը բյուջետային հատկացումների հիման վրա ըստ հոդվածային դասակարգումների հաստատում է ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման ցանկը: Փաստորեն, Ազգային ժողովը, ըստ տնտեսագիտական դասակարգումների հաստատելով բյուջետային հոդվածներով հատկացվող գումարի չափը, այլևս ի վիճակի չի լինում հսկելու, թե ինչպես են ի վերջո ծախսվում այդ գումարները: *Հատկապես մտահոգիչ է ներքին հողվածային վերաբաշխումների և բյուջետային անվանացանկում փոփոխություններ կատարելու հետ կապված պրոբլեմը*, որի լուծումը ևս իրականացնում է ՀՀ կառավարությունը:

Խորհրդարանին բնորոշ՝ ժողովրդավարության սկզբունքներին համապատասխան դերն ապահովելու նպատակով անհրաժեշտ է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածում կատարել փոփոխություն, որը բյուջետային միջոցների ներքին վերաբաշխումներ կատարելու հնարավորություն կտա ոչ թե ՀՀ կառավարությանը, այլ Ազգային ժողովին: Բացի այդ, նմանատիպ փոփոխության անհրաժեշտություն կա մասն «Գնումների մասին» ՀՀ օրենքում, որտեղ նշվում է, որ գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցանկը, բյուջետային հատկացումներին համապատասխան, հաստատում է Կառավարությունը: Չնայած նշված

փոփոխությունը կհանգեցնի բյուջետային վերաբաշխումների օպերատիվության նվազման, սակայն միևնույն ժամանակ պետական կառավարման մարմիններին կստիպի ավելի լուրջ վերաբերվել իրենց տարեկան ապահովման ծրագրերը կազմելուն՝ հնարավորինս խուսափելով դրանցում հետագա փոփոխություններից:

Խոսելով հատկապես պաշտպանական ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության մասին՝ անդրադառնանք նաև այդ հարցերում խորհրդարանի մասնագիտացված կոմիտեի՝ *Պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի հարցերով մշտական հանձնաժողովի դերին և նրա գործառութային գործունեության առանձնահատկություններին*:

Աշխարհի գրեթե բոլոր խորհրդարաններն ունեն պաշտպանության և անվտանգության հարցերով մասնագիտացված մշտական հանձնաժողովներ: Դրանք հիմնականում զբաղվում են այնպիսի հարցերի շուրջ քննարկումներ անցկացնելով և եզրակացություններ տրամադրելով, ինչպիսիք են՝ Ռազմական դոկտրինը, անվտանգային ոլորտի երկարաժամկետ պլանավորումը, ռազմական համագործակցությունը այլ պետությունների կամ կառույցների հետ, խաղաղապահ գործողությունները, պաշտպանական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողությունը, զորակոչային քաղաքականությունը և այլն:

Այս ամենի հետ մեկտեղ խորհրդարանական հանձնաժողովները լայնորեն օգտվում են նաև գիտնականների, քաղաքացիական հասարակության ինստիտուտների ծառայություններից: Հենց վերջիններս են համապատասխան փորձագիտական և այլ բնույթի տեղեկատվություն տրամադրում հանձնաժողովներին, նրանց ուշադրությունը հրավիրում հասարակության մեջ առկա հիմնախնդիրների վրա: Որոշ պետություններում խորհրդարանական հանձնաժողովները (օրինակ՝ Բրիտանական Համայնքների պալատի մշտական կոմիտեները) լիազորված չեն ինքնուրույն փաստեր հավաքելու, մինչդեռ այլ պետություններում հանձնաժողովները (օրինակ՝ ԱՄՆ Կոնգրեսի հանձնաժողովները) ունեն արտաքին աղբյուրներից տեղեկություններ ստանալու գրեթե անսահմանափակ լիազորություններ: Որոշ պետություններում խորհրդարանական հանձնաժողովները (օրինակ՝ Կանադայի, Բելգիայի, Գերմանիայի, Իտալիայի և Թուրքիայի խորհրդարանական հանձնաժողովները) ունեն նորմաստեղծ գործունեության իրավունք՝ ընդունելով կամ առաջարկելով փոփոխություններ, մինչդեռ որոշ պետությունների հանձնաժողովները (օրինակ՝ Մեծ Բրիտանիայի, Հունգարիայի խորհրդարանական հանձնաժողովները) իրավասու են միայն վերահսկողություն իրականացնելու գործադիրի և բյուջետային հատկացումների նկատմամբ՝ առանց նորմաստեղծ հնարավորության: Որոշ երկրներում պաշտպանության հարցերով խորհրդարանական հանձնաժողովները պարտավոր են պաշտպանական ոլորտի վերաբերյալ զեկույցներ ներկայացնել խորհրդարանին: Ջեկույցներին կարող են հաջորդել քվեարկությունները, երբեմն նաև՝ վստահության քվեն:

Ուսումնասիրելով խորհրդարանական հանձնաժողովի լիազորությունները՝ կարող ենք ասել, որ այն պետք է կապող օղակ լինի պառլամենտի և պաշտպանական ոլորտի միջև:

ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածը նախատեսում է, որ մշտական հանձնաժողովները ստեղծվում են օրենսդրական ակտերի նախագծերի և այլ հարցերի նախնական քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողով եզրակացություններ ներկայացնելու համար: ՀՀ ԱԺ կանոնակարգի 21-րդ հոդվածի 4-րդ մասի գ) ենթակետի համաձայն՝ պաշտպանության, անվտանգության, արտակարգ իրավիճակների, ոստիկանության, ռազմաարդյունաբերական համալիրի, ռազմական ուսումնական հաստատությունների, զինվորական և ոստիկանական ծառայությունների ոլորտի հարցերի վերաբերյալ եզրակացություններ տալու համար գործում է ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովը:

Հանձնաժողովներին նման լիազորություն վերապահելը բխում է այն հանգամանքից, որ խորհրդարանը պետության բարձրագույն օրենսդիր և ներկայացուցչական մարմինն է: Թեև ըստ ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի՝ ՀՀ Ազգային ժողովն ուղղակիորեն չի սահմանվում որպես բարձրագույն ներկայացուցչական, այլ միայն որպես ՀՀ-ում օրենսդիր իշխանություն իրականացնող մարմին, այնուամենայնիվ, հանձնաժողովներին վերապահված են նաև այնպիսի լիազորություններ, որոնք բխում են ներկայացուցչական մարմնի կարգավիճակից: Այդպիսիք են, օրինակ, պատասխանատուից ոլորտում տիրող վիճակի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման պահանջի որոշումներ ընդունելու լիազորությունները: Այս ամենն իհարկե արվում է «այլ հարցերի վերաբերյալ քննարկումների» միջոցով:

Բացի մշտական հանձնաժողովներից՝ նախատեսվում է նաև ժամանակավոր հանձնաժողովների ստեղծման հնարավորություն, որոնք պետք է զբաղվեն կոնկրետ հարցերի ուսումնասիրությամբ: Սակայն պետք է նշել, որ պաշտպանական ոլորտում որոշակի հարցերի ուսումնասիրության համար նման հանձնաժողովներ երբևէ չեն ստեղծվել:

Հանձնաժողովի լիազորությունների պատշաճ իրականացումը պայմանավորված է նաև անհրաժեշտ իրավական, մասնագիտական, փորձագիտական և այլ բնույթի ռեսուրսների առկայությամբ:

Մշտական հանձնաժողովները, համաձայն կանոնակարգի, ունեն մեկ գործավար և երեք մասնագետ: Կանոնակարգի 23-րդ հոդվածի համաձայն՝ մշտական հանձնաժողովը կարող է իր կազմից ստեղծել ենթահանձնաժողովներ, ինչպես նաև ձևավորել աշխատանքային խմբեր՝ սահմանելով դրանց խնդիրները, գործունեության ժամկետներն ու կարգը, և ընտրել դրանց ղեկավարներին: Ինչ վերաբերում է աշխատանքային խմբին, ապա դրա կազմում կարող են ընդգրկվել պատգամավորը, ինչպես նաև հանձնաժողովի, խմբակցության, պատգամավորական խմբի փորձագետը, պատգամավորի օգնականը և այլ մասնագետներ: Այստեղ չի խոսվում այն մասին, թե ինչ խնդիրներ կարող են ունենալ ենթահանձնաժողովները և աշխատանքային խմբերը: Սակայն ելնելով այն հանգամանքից, որ դրանք ի վերջո «մանրամասնում» են մշտական հանձնաժողովների աշխատանքը, կարող ենք ենթադրել, որ դրանց ստեղծումը ևս պետք է օրենսդրական ակտերի նախագծերի և *այլ հարցերի* նախնական քննարկման ու դրանց վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացություններ ներկայացնելու նպատակ հետապնդի:

Ինչպես տեսնում ենք, մշտական հանձնաժողովը փաստորեն հնարավորություն չունի համագործակցելու հասարակական կազմակերպությունների հետ, ինչը թուլացնում է դրա դիրքերը պաշտպանական ոլորտում խորհրդարանական վերահսկողությունն ապահովելու տեսանկյունից: Սակայն այս բացը կարող է լրացնել ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի հանձնաժողովի և մի խումբ հասարակական կազմակերպությունների միջև փոխըմբռնման հուշագրի ստորագրումը, ինչի շնորհիվ այդ կառույցները կկարողանան համագործակցել պաշտպանական ոլորտում՝ խորհրդարանի վերահսկողությունն առավել համակողմանի դարձնելու և դրա արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով:

Պետք է նշել, որ ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի հանձնաժողովի և քաղաքացիական հասարակության տարրերի միջև համագործակցության նախադեպ արդեն կա: ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ 2009 թ. ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի հանձնաժողովում տեղի է ունեցել հանդիպում պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների և այդ հանձնաժողովի նախագահի միջև, որտեղ հանձնաժողովի նախագահը հասարակական կազմակերպություններին կոչ է արել ամեն կերպ համագործակցել հանձնաժողովի հետ և աջակցել վերջինիս իր գործունեության մեջ: Նման

հանդիպումները պարբերական են, ինչի շնորհիվ այս համագործակցությունը ձեռք է բերում հաստատութենական տարրեր: Կազմակերպությունները ներկայացնում են իրենց գործունեության հիմնական ուղղությունները, իրականացված ուսումնասիրությունների արդյունքները, հանձնաժողովի նախագահին հայտնում իրենց մտահագությունները, հանդես գալիս առաջարկություններով: Պաշտոնատեղի վերահսկողության լծակները առավելագույնս իրացնելու հարցում հանձնաժողովին մեծապես աջակցում է ԵԱՀԿ երևանյան գրասենյակը, ինչի հիմքը դրվել է 2008 թվականի հոկտեմբերի 17-ին Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի միջև կնքված համագործակցության հուշագրով: Հուշագրի շրջանակներում 2008 թվականի դեկտեմբերին նշված հանձնաժողովում ներկայացվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի հովանավորությամբ կազմված «Սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի իմպլեմենտացիային վերաբերող զեկույցը, որտեղ անկախ փորձագետները բարձրացրել են նշված օրենքի կիրառման հետ կապված մի շարք պրոբլեմներ: Կազմակերպվել են նաև աշխատանքային քննարկումներ զինվորական կանոնադրերի, անվտանգության մասնավոր կազմակերպությունների գործունեության և այլ թեմաներով:

3.2. Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատը՝ որպես ժողովրդավարական վերահսկողության մարմին

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի կարգավիճակը և հիմնական խնդիրները սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ: ՀՀ Սահմանադրության 83.4-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ վերահսկիչ պալատն անկախ մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ:

Ինչպես պարզ է դառնում վերահսկիչ պալատի կարգավիճակից, վերջինիս իրավասությունների շրջանակը պետական բյուջեով նախատեսված միջոցների ծախսման արդյունավետության և հանրային գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացումն է: Այս մարմինը, ի տարբերություն պաշտպանության համակարգում գործող հսկողական լիազորություններ իրականացնող այլ մարմինների, ինչպիսիք են՝ ռազմական ոստիկանությունը, ներկազմակերպական կառույցները, իրականացնում է այնպիսի վերահսկողություն, որը պետական կառավարման բաղկացուցիչ մաս չէ: Ակնհայտ է, որ հսկողությունը, որ իրականացնում են ռազմական ոստիկանությունը և ներկազմակերպական կառույցները, կառավարման բաղկացուցիչ մաս է և որոշակի չափով կաշկանդված է զուտ այն հանգամանքով, որ այդ հսկողական կառույցները գործում են միևնույն պետական կառավարման մարմնի կազմում:

Ի տարբերություն այդ կառույցների՝ վերահսկողության մարմինները չունեն գործադիր իշխանության մարմիններին բնորոշ գործադիր-կարգադրիչ լիազորություններ. դրանց միակ խնդիրը վերահսկողություն իրականացնելն է: Ըստ էության, վերահսկողության առարկան կարելի է բաժանել երկու մասի՝ պետական և համայնքային սեփականության (ներառյալ բյուջետային միջոցները) օգտագործման նկատմամբ վերահսկողություն և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացվող վերահսկողություն:

Սահմանադրության նշված նորմի հիման վրա 2006 թվականի դեկտեմբերի 25-ին ընդունվել է «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքը, որտեղ և մանրամասն նշվում են վերահսկիչ պալատի լիազորությունները: «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վերահսկիչ պալատը հանրային կառավարման ոլորտում, այդ թվում՝ զինված ուժերի կառավարման ոլորտում իրականացնում է հետևյալ գործառնությունները.

- բյուջետային ելքերի նկատմամբ վերահսկողության իրականացումը,
- պետական արտաբյուջետային միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողության իրականացումը: Ինչպես տեսնում ենք, վերահսկիչ պալատն իր լիազորություններով համարվում է պետական և համայնքային սեփականության, ներառյալ բյուջետային միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին: Այդ լիազորությունների շրջանակներում վերահսկիչ պալատը զինված ուժերի կառավարման բնագավառում իրավասու է ստուգումներ իրականացնելու գնումների գործընթացի, բյուջետային ելքերի իրականացման, ինչպես նաև արդեն իսկ ձեռք բերված գույքի նպատակային օգտագործման նկատմամբ:

Համաձայն ՀՀ Սահմանադրության և «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի՝ Վերահսկիչ պալատն իր գործունեության արդյունքների մասին տարեկան ոչ պակաս, քան մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում ՀՀ Ազգային ժողովին:

3.3. ՀՀ դատական համակարգը՝ որպես ժողովրդավարական վերահսկողության ապահովման մարմին

ՀՀ դատական համակարգը՝ որպես արդարադատության իրականացման համար պատասխանատու կառույց, ևս շատ մեծ դեր ունի զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունն ապահովելու գործում: Ձինձառայողներին վերաբերող հարցերը քննելու համար այսօր մասնագիտացված դատարաններ գոյություն չունեն: Դրանք քննում են ընդհանուր իրավասության դատարանները:

Դատարանների վերահսկողության առարկա պետք է լինի զինձառայողների նկատմամբ այնպիսի տույժերի կիրառումը, որոնք ուղեկցվում են նրանց իրավունքների սահմանափակմամբ*։ Բացի այդ, դատարանների միջոցով զինձառայողները պետք է հնարավորություն ունենան բողոքարկելու հրամանատարության այն գործողությունները, որոնք խախտում են իրենց իրավունքները: Սիևնույն ժամանակ պետք է ընդունել, որ այս մեխանիզմն այսօր էլ գոյություն ունի: Այսպես, ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք*: Հաշվի առնելով, որ Սահմանադրության նորմերը գործում են անմիջականորեն, կարող ենք վստահորեն ասել, որ այս նորմի կիրառման համար որևէ այլ ակտի ընդունում անհրաժեշտ չէ*։

Սակայն այս իրավունքի իրականացումը որոշակի խոչընդոտների է հանդիպում: Մասնավորապես՝ հարց է առաջանում, թե զինձառայողը, ում իրավունքները խախտվել են, ինչպես պետք է բողոքարկի հրամանատարության որոշումները: Նա չի կարող բացակայել զորամասից: Նման իրավունքի իրականացման ամենաչնչին կասկածի առկայության դեպքում հրամանատարը, բնականաբար, ամեն կերպ կխոչընդոտի դա: Բավական է միայն նշել, որ շարքային զինձառայողը կարող է բացակայել զորամասից միայն հրամանատարի թույլտվությամբ: Չենք խոսում այն մասին, որ դատարանը շատ դեպքերում բավականին հեռու է տեղակայված լինում զորամասից: Ուշագրավ է հատկապես այն հանգամանքը, որ քննչական մարմինները հնարավորինս մոտեցվել են զորամասերին, մինչդեռ մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում նման «մերձեցումը» անհրաժեշտ չի համարվել: Կասկածից դուրս է, որ ոչ մի զինձառայող հնարավորություն չի ունենա անցնելու տասնյակ կիլոմետրեր՝ դատարան դիմելու համար: *Մեր կարծիքով՝ իրավիճակը ավելի*

* Այդպիսիներին է կարգապահական մեկուսարանում մեկուսացնելը և պահելը, որի մասին խոսվել է վերևում:

* Նմանատիպ նորմ նախատեսվում է նաև ՀՀ ԶՈՒ կարգապահական կանոնադրությամբ:

բարենպաստ դարձնելու համար անհրաժեշտ է գործնականում սահմանել դատավորների հերթապահություն: Օրինակ՝ ամիսը մեկ անգամ դատավորները պետք է գործուղվեն գործասեր և այնտեղ հերթապահեն: Այս պայմաններում զինծառայողները, որոնք գտնում են, որ իրենց իրավունքները ոտնահարվել են, կարող են օրենքով սահմանված կարգով դիմել դատավորին, որն էլ օրենքով սահմանված կարգով համապատասխան վարույթ կհարուցի: Դրան պետք է նախորդի զինծառայողներին իրենց իրավունքների պաշտպանության եղանակների, ներառյալ դատական պաշտպանության իրավունքի վերաբերյալ իրազեկումը: Անհրաժեշտ է նաև զինծառայողին արձակում տրամադրել այն դեպքերում, երբ նա պատրաստվում է իր իրավունքների պաշտպանության նպատակով դիմելու դատարան, ինչպես նաև՝ համապատասխան պատասխանատվության խիստ միջոցներ կիրառել այն հրամանատարների նկատմամբ, որոնք կփորձեն խոչընդոտել այդ իրավունքի իրականացումը:

Բացի վերը շարադրվածից՝ անհրաժեշտ է նշել նաև, որ զինծառայության ոլորտում բողոքարկման իրավունքի իրականացումը մեծապես պայմանավորված է նաև ոլորտի առանձնահատկություններով: Այսպես, ռազմական կրթություն ստացած անձանց շրջանում անցկացված հարցումները ցույց են տալիս, որ հարցվածների մեծ մասի կարծիքով զինծառայողներն իրավունք չունեն հրամանատարության հրամանները բողոքարկելու դատական կարգով: Սա, իհարկե, բխում է այն մտայնությունից, թե «հրամանատարի խոսքը օրենք է», և այն չկատարելը կամ դրան առարկելը կհանգեցնի խիստ պատժի: Բացի այդ, միանշանակ չի ընդունվի նաև որևէ զինծառայողի կողմից իր դատական պաշտպանության իրավունքի իրականացումը: Մասնավորապես՝ հրամանատարությունը կարող է թշնամաբար ընդունել զինծառայողի այդ արարքը: Այս ամենի դեմ պայքարը, իհարկե, պետք է սկսվի հենց հանրակրթական և ռազմաուսումնական հաստատություններից: Հատկապես մեծ ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ ակնհայտ ապօրինի հրամանը կամ կարգադրությունը չկատարելն անձին ազատում է պատասխանատվությունից: Սակայն դրա համար զինծառայողը պետք է հստակ կարողանա տարբերակել, թե որն է ապօրինի հրամանը: Դրան ևս կարելի է հասնել դպրոցական և ռազմաուսումնական հաստատություններում համապատասխան կրթական ծրագրերի իրականացմամբ: Կարևոր է նշել, որ այդ կրթական ծրագրերը պետք է մշակեն և դասավանդեն *քաղաքացիական անձինք, որոնք ունեն համապատասխան քաղաքացիական կրթություն:*

3.4. Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը՝ որպես ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմ

Պաշտպանական ոլորտում մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը կարևորվում է հատկապես նրանով, որ զինվորական կարգապահությունը և գաղտնիության ռեժիմը բավականին «բարենպաստ» պայմաններ են ստեղծում մարդու իրավունքների ոտնահարման համար: Այս ոլորտում արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար շատ կարևոր է պետական և հասարակական վերահսկողությունը:

Անհատական գործընկերության գործողությունների ծրագրով նախատեսվում էր հիմնել զինվորական օմբուդսմենի ինստիտուտ: Քանի որ նման հնարավորություն ՀՀ Սահմանադրությունը չի ընձեռում, մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունում ստեղծվեց զինծառայողների և զինվորական հարցերով խորհրդականի պաշտոն, որը մարդու իրավունքների պաշտպանին օժանդակում է զինծառայողների իրավունքների պաշտպանության գործում:

Սակայն մինչ այդ էլ զինծառայողների իրավունքների պաշտպանությունը մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ուղղություններից մեկն էր:

Ընդհանուր առմամբ, մարդու իրավունքների պաշտպանն իրականացնում է հետևյալ գործառնությունները.

- *իրականացնում է մարդու իրավունքների պաշտպանության մշտական մոնիթորինգ,*
- *քննարկում է քաղաքացիներից ստացված անհատական բողոքները,*
- *քաղաքացիական հասարակության խոսնակն է,*
- *հրապարակում է զեկույցներ նաև զինված ուժերի համար արդի հիմնախնդիրների վերաբերյալ:*

Որպես վերջին կետին վերաբերող օրինակ՝ կարող է բերվել մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցը՝ «Մարդու իրավունքների պաշտպանությունը զինված ուժերում կարգապահական քաղաքականություն իրականացնելիս» խորագրով, որը 2009 թվականի մայիսին հրապարակել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ ստեղծված փորձագիտական խումբը:

Զեկույցում քննարկված հիմնական հարցերը ներառում են.

- *իրավական որոշակիության խնդիրը,*
- *կարգապահական տույժեր կիրառելիս տույժի տեսակը ընտրելու հիմնավորվածության բացակայությունը,*
- *իրավախախտումները չգրանցելը (ինքնիրավչություն),*
- *բողոքարկման մեխանիզմների անարդյունավետությունը,*
- *խոշտանգումների դատապարտումը,*
- *տեղեկատվության ազատությունը և գաղտնիության ռեժիմը բանակում⁹:*

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում գործում է զինծառայողների և քրեադատավարական իրավունքների վերականգնման խումբ, որը, համապատասխան ահազանգեր ստանալով, մեկնում է համապատասխան զորամասեր, տեղում ուսումնասիրում է իրավիճակը: Իր զեկույցում մարդու իրավունքների պաշտպանը առանձին գլխով ներկայացնում է նաև զինծառայողների իրավունքների ոտնահարման դեպքերը: Սակայն ասվածի լույսով անհասկանալի է մնում, թե ի վերջո ինչ յուրահատուկ դեր է խաղում խորհրդականը: Նա որևէ առանձնահատուկ լիազորություն չունի զինծառայողների իրավունքների պաշտպանության բուն գործընթացում, ոչ էլ առանձին զեկույցներ է հրապարակում:

Բացի այդ, որպես կանոն, մարդու իրավունքների պաշտպանն արձագանքում է այն ժամանակ, երբ համապատասխան ահազանգ կամ բողոք է ստանում, թեպետ Պաշտպանը հաճախակի այցելում է զորամասեր: Սակայն ակնհայտ է, որ շատ հանգամանքներից ելնելով (վախ, վարկաբեկում և այլն)՝ զինծառայողները նախընտրում են լռելյայն համակերպվել իրենց իրավունքների ոտնահարման փաստի հետ, քան դիմել որևէ կառույցի: Մասնավորապես՝ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում՝ զինծառայողների իրավունքներին վերաբերող մասերում, Պաշտպանը փաստում է, որ իր աշխատանքին էականորեն խոչընդոտում է զինծառայողների իրավագիտակցության ցածր մակարդակը: Որոշ շարքային զինծառայողներ, իսկ երբեմն նաև կրտսեր սպաներ, գաղափար անգամ չունեն իրենց իրավունքների մասին: Բացի այդ, նրանց մոտ ձևավորվել է արժեքային յուրահատուկ համակարգ, ըստ որի՝ իրավունքների պաշտպանությունը տարրա-

⁹ Տե՛ս «Արտահերթ զեկույց «Մարդու իրավունքների պաշտպանությունը ՀՀ զինված ուժերում կարգապահական քաղաքականություն իրականացնելիս» (ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան)», Երևան, 2009, <http://www.ombuds.am/main/am/10/31/0/4/>:

կան «մատնություն» է համարվում: Որոշ հրամանատարներ մարդու իրավունքներին վերաբերվում են որպես երկրորդական երևույթի՝ ոչ պատշաճ արտահայտություններով պիտակելով մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները: Պատահում են նաև դեպքեր, երբ սպայական անձնակազմին պատասխանատվության կանչելու դեպքում նրանք վկայակոչում են իրենց անցած մարտական ուղին և զինված ուժերում ծառայության բազմամյա փորձը՝ առանց հասկանալու, որ ոչինչ նրանց իրավունք չի տալիս խախտելու մարդու իրավունքները:

Այս մեխանիզմը փաստացիորեն արդյունավետ չէ: Չնայած 2008 թ. ընթացքում մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները սկսել են շրջայցեր կատարել գործառնասերում, այնուամենայնիվ, այդպիսի այցելությունները, մեր կարծիքով, չեն կարող արդյունավետ լինել: Դատելով մարդու իրավունքների պաշտպանի գեկույցներից՝ իրավունքների խախտումների դեպքերի մեծ մասը, որպես կանոն, բացահայտվում է ահազանգերի միջոցով:

Այս համակարգում առկա բացերը որոշ չափով կարող է լրացնել հասարակական վերահսկողության մեխանիզմը: Հասարակական կազմակերպություններն իրենց նախաձեռնությամբ պետք է շրջայցեր կազմակերպեն գործառնասերում և տեղում ստուգեն մարդու իրավունքների պաշտպանության վիճակը: Այդ նպատակով հարկ է ձևավորել առանձին հասարակական կառույց, որը պետք է ստեղծվի և գործի պաշտպանության համակարգից դուրս, օրինակ՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ներքին գործերի և ազգային անվտանգության հանձնաժողովին կից: Գործելով անկախ և անկաշկանդ՝ այդ կառույցը պետք է հանձնաժողովին ներկայացնի զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի վերաբերյալ իր դիտարկումների հիման վրա ձևավորած պատկերը:

3.5. Հասարակական վերահսկողությունը՝ որպես ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմ

Հասարակական վերահսկողության մեխանիզմը, որը ներառում է և՛ հասարակական կազմակերպությունները, և՛ զանգվածային լրատվամիջոցները, զինված ուժերի ժողովրդավարական վերահսկողության առավել ակտիվ օղակն է: Եթե մյուս բոլոր պետական մարմիններն իրենց աշխատանքը հիմնականում կազմակերպում են՝ հիմնվելով բողոքների և ահազանգերի վրա, ապա հասարակական վերահսկողությունն առավել նախաձեռնող է: Բազմաթիվ եվրոպական պետություններում խորհրդարաններն իրենց վերահսկողական գործունեությունը կազմակերպելիս օգտվում են հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների օգնությունից:

ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր ստեղծվել է հասարակական խորհուրդ, որը, ունենալով խորհրդակցական մարմնի դեր, նախարարին պետք է աջակցի հասարակության հետ հարաբերություններում՝ մասնավորապես նրա ուշադրությունը հրավիրելով ոլորտում առկա հիմնախնդիրների վրա: Մեր կարծիքով՝ այդպիսի խորհրդի ստեղծումը բոլորովին նպատակահարմար չէ, քանի որ նման մեխանիզմն արդյունավետ է լինում, երբ այն գործում է ոչ թե ոլորտը ղեկավարող անձին առընթեր, այլ նրանից լրիվ անկախ: Հակառակ դեպքում այն սպառնում է ձուլվել հենց այն կառույցների հետ, որոնց կոչված է վերահսկելու*:

Այսօր ՀՀ-ում ստեղծվել է մեկ այլ խորհրդակցական մարմին՝ Նախագահին կից հանրային խորհուրդը: Խորհրդի կանոնադրության վերլուծությունը ցույց է տալիս, որ այն Նախագահի ուշադրությունը պետք է հրավիրի իր գործունեության ոլորտում առկա հիմնախնդիրների վրա, ներ-

* Այս վտանգն իրականություն դառնալու լուրջ նախադրյալներ ունի նաև այն պատճառով, որ այդ խորհրդի նախագահին տրվել է ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդականի կարգավիճակ՝ նրան փաստորեն ներառելով ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում:

կայացնի քաղաքացիների շահերը պետական կառավարման մարմինների հետ հարաբերություններում: Հանրային խորհրդի նպատակներն են՝ ժողովրդավարական համակարգի զարգացմանն ու մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովմանը, հասարակության մեջ անհանդուրժողականության մթնոլորտի առաջացման կանխարգելմանը և քաղաքացիական հասարակության կայուն զարգացմանն ու ամրապնդմանը, պետական իշխանության մարմինների և քաղաքացիների, հասարակական այլ միավորումների (քաղաքացիական ինստիտուտների) միջև փոխադարձ վստահության կայացմանը, հասարակության և իշխանության միջև երկխոսության ու վստահելի գործընկերային հարաբերությունների ձևավորմանը, պետական կառավարման մեջ նրանց ներգրավվածության աստիճանի բարձրացմանը, ինչպես նաև՝ հասարակական վերահսկողության իրականացմանը նպաստելը: Այն ներկայացնում է քաղաքացիների շահերը պետական մարմինների հետ հարաբերություններում, խթանում է հասարակական միավորումների և քաղաքացիների մասնակցությունը պետական կառավարմանը, այլընտրանքային մոտեցումների ու դիրքորոշումների միջոցով Նախագահի ուշադրությունը հրավիրում է հանրային հնչեղություն և կարևորություն ունեցող խնդիրների վրա: Հանրային խորհուրդն ունի տասներկու հանձնաժողով, որոնցից պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի հանձնաժողովը, ի թիվս այլնի, զբաղվում է պաշտպանական ոլորտի հիմնախնդիրներով:

Սակայն այստեղ էլ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հանրային խորհուրդը չի կարող արդյունավետ գործել քաղաքացիական հասարակության մյուս ինստիտուտներից կտրված վիճակում: Անհրաժեշտ է ակտիվ համագործակցություն ծավալել նույն նպատակի շուրջ համախմբված հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ:

Այսօր ՀՀ պաշտպանության նախարարությունը համագործակցում է մի շարք հասարակական կազմակերպությունների հետ, որոնք պայքարում են զինված ուժերում մարդու իրավունքների ոտնահարումների դեմ: Գրանցից են «Ձինվոր և իրավունք», «Ձինվորի մայր», «Ձինվոր և օրենք» հասարակական կազմակերպությունները: Նշված կազմակերպությունները հիմնականում զբաղվում են զինված ուժերում զինծառայողների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրներով ինչպես զորակոչային, այնպես էլ բուն զինծառայության փուլում: Նրանք կատարում են սննդի մոնիթորինգ, ազատ մուտք են գործում զորամասեր, հանդիպում զինվորների հետ, վեր են հանում ոչ կանոնադրական հարաբերությունների դեպքեր, զինվորի մահվան դեպքի առնչությամբ իրականացնում հասարակական քննություն: Այդ կազմակերպությունների նախագահները «Մարդու իրավունքների պաշտպանի տեղեկագիր» պարբերականին տված հարցազրույցում նշել են, որ հիմնական բողոքները վերաբերում են հիվանդ տղաներին զորակոչելուն¹⁰: Բացի այդ, պորբլեմներ կային նաև արձակուրդների տրամադրման հետ կապված: Նշված երեք կազմակերպությունների ջանքերով 2010 թ. արձակուրդների տրամադրումը որոշակիորեն կանոնակարգվել է. տարվա սկզբում կազմվում է արձակուրդի տրամադրման ցուցակ, որն ուղարկվում է պաշտպանության նախարարություն, և տարվա ընթացքում արձակուրդները տրամադրվում են այդ ցուցակին համապատասխան:

Բավականին ակտիվ է գործում «Իրավական հետազոտությունների ազգային կենտրոն» հասարակական կազմակերպությունը, որի փորձագետները 2009 թ. ԵԱՀԿ աջակցությամբ իրականացրին «Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառի կառավարման հիմնահարցերը» խորագրով ուսումնասիրությունը: Գրքի շնորհանդեսը կայացավ 2009 թ. հոկտեմբերի 5-ին: Նշված ուսումնասիրությունը ներառում է պաշտպանական ոլորտի կառավարման պետական մարմինների և պաշտոնատար անձանց լիազորությունների վերլուծությունները, զինված ուժերի

¹⁰ Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանի տեղեկագիր» հմ. 5, էջեր 23-29:

օգտագործմանը, քաղաքացիական ծառայության համակարգի ներդրմանը վերաբերող հարցերը: Կազմակերպությունը հետևում է նաև ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի հանձնաժողովի նիստերում ընդգրկված օրենքների նախագծերին և կատարում դրանց հասարակական փորձաքննություն՝ անհրաժեշտության դեպքում արձագանքելով հանձնաժողովին:

Չնայած այն հանգամանքին, որ հասարակական սեկտորը բավականին ակտիվ է գործում պաշտպանական ոլորտում, այն դեռ զարգանալու տեղ ունի: Հետագա զարգացումը պետք է միտված լինի պետական կառավարման մարմինների հետ համագործակցության զարգացմանը, հանրային բնույթի որոշ լիազորությունների պատվիրակմանը հասարակական սեկտորին, ինչպես նաև՝ ոլորտի կարգավորման վերաբերյալ նոր առաջարկությունների քննարկման գործում վերջիններիս առավելագույն ներգրավմանը:

**ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՏԱՐԱԾՈՒՄԸ
ՅԵՏԿՈՍՈՒՆԻՍԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ**

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ¹¹,

Ներածություն

«Վախենալով ուրիշներից, մենք ստեղծում ենք բռնության ինստիտուտ, որպեսզի այն մեզ պաշտպանի, բայց այնուհետև մենք վախենում ենք հենց այն ինստիտուտից, որ ստեղծել էինք մեզ պաշտպանելու համար»¹²:

Իր կառուցվածքի և գործառույթների շնորհիվ զինված ուժերը մշտապես մեծ նշանակություն են ունեցել յուրաքանչյուր պետության պատմության մեջ և զարգացման գործում: Ռազմական կառույցը նախատեսված է, գործում և աջակցություն է ստանում ամբողջ հասարակության նպատակներին ու շահերին, մասնավորապես՝ անվտանգային նպատակների ու շահերին ծառայելու համար¹³: Որպես ուժային կառույց՝ զինված ուժերը, ուղղակիորեն կամ անուղղակորեն, մեծ ազդեցություն ունեն պետական իշխանության վրա և ոչ արդյունավետ վերահսկողության դեպքում կարող են արհեստականորեն ընդլայնել օրենքով նախատեսված իրենց լիազորությունների շրջանակն ու զավթել քաղաքական իշխանությունը: Անշուշտ, անհրաժեշտ է խուսափել դրանից, այլապես հասարակական կյանքի գերազանցականացումն անխուսափելի է, իսկ դրա հետևանքները՝ անկանխատեսելի: Անկասկած, դա լրջորեն կխախտի պետական կառույցների միջև եղած հավասարակշռությունը և կխաթարի հասարակական կյանքի ոչ ռազմական ոլորտների բնականոն զարգացումը: Քաղաքացիական-զինվորական հարաբերությունների մարտահրավերի էությունը հետևյալն է. զինվորականները պետք է միևնույն ժամանակ լինեն և՛ բավականաչափ ուժեղ՝ քաղաքացիականների բոլոր պահանջները կատարելու համար, և՛ բավականաչափ հնազանդ, որպեսզի կատարեն միայն այն, ինչի համար լիազորված են քաղաքացիականներից¹⁴: Հավասարակշռություն ապահովելու միակ եղանակը քաղաքական և իրավական այնպիսի մեխանիզմների ստեղծումն է, որոնք կնվազեցնեն զինվորականների միջամտության ռիսկերը քաղաքականությանը և հասարակության կյանքին: Ինչպես տեսնում ենք, զինվորական իշխանության հավասարակշռման ամենաարդյունավետ մեխանիզմը զինված ուժերի քաղաքացիական վերահսկողությունն է: Չինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության օգնությամբ հասարակությունը պետական քաղաքականության միջոցով իր կամքին է ենթարկում զինված ուժերը¹⁵: Սակայն հարց է

¹¹ Ֆլետչերի իրավունքի և դիվանագիտության դպրոցի միջազգային հարաբերությունների և միջազգային անվտանգության հարցերով մագիստրոս , ԵՊՆ իրավաբանական ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

¹² Տե՛ս P. D. Feaver, “The civil-military problematique: Huntington, Janowitz, and the question of civilian control”, Armed Forces and Society 1996, 23, 149, p.150.

¹³ Տե՛ս A. J. Goodpaster, S. P. Huntington, “Civil-military relations”, American enterprise institute for public policy research, Washington, D.C, 1977, p. 31.

¹⁴ Տե՛ս P. D. Feaver, “The civil-military problematique: Huntington, Janowitz, and the question of civilian control”, Armed Forces and Society 1996, 23, 149, p. 149.

¹⁵ Տե՛ս Ա. Ռ. Ավետիսյան, Զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության հարցի շուրջ, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Դրաստամատ Կանայանի անվան ազգային

ծագում, թե ինչպես: Տրամաբանորեն, դա պետության խնդիրն է, քանի որ զինված ուժերը դասվում են պետական ինստիտուտների շարքին, և պետությունը պետք է ունենա քիչ թե շատ արդյունավետ մեթոդներ և համապատասխան ռեսուրսներ՝ զինված ուժերը ևս մյուս ինստիտուտների նման կառավարելու համար՝ թույլ չտալով, որ դրանք կառավարեն իրեն: Բացի այդ, վերջինս բխում է միջազգային իրավունքի այնպիսի հիմնարար սկզբունքից, ինչպիսին է ինքնիշխանությունը, որը երաշխավորում է իր ներքին խնդիրները ինքնուրույն լուծելու յուրաքանչյուր պետության հնարավորությունը¹⁶: Պետության դերն այս խնդրում վճռորոշ է, սակայն պատմության օրինակները շատ հաճախ ապացուցում են, որ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրականացումը ոչ միշտ է միայն պետության պարտականությունը:

Քաղաքացիական-զինվորական հարաբերությունների ոլորտի շատ մասնագետներ, դիտարկելով «զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության» պրոբլեմը, այն համարում են գործադիրի նկատմամբ պետական քաղաքական վերահսկողություն, ոմանք՝ խորհրդարանական վերահսկողություն, և միայն շատ քչերն են կարծում, որ դա ողջ հասարակության խնդիրն է: Որպես արդյունք՝ այս կարևորագույն հարցում հասարակության տարբեր ինստիտուտների (լրատվամիջոցներ, տեղական հասարակական կազմակերպություններ, օմբուդսմենի բնույթի ինստիտուտներ¹⁷, եկեղեցի և լայն հանրություն) դերը հասցվում է նվազագույնի: Սակայն յուրաքանչյուր պետության համար շատ կարևոր է դրանց կողմից վերահսկողության իրականացումը, ինչը դիտվում է որպես լրացուցիչ օժանդակություն պետական քաղաքականությանը և հատկապես որպես ճնշման գործադրման այլընտրանքային միջոց, եթե պետությունն ինքնին ռազմականացված է և գտնվում է ղեկավարող քաղաքական կուսակցությունների գաղափարական արժեքների համակարգի ազդեցության ներքո, կամ երբ զավթել են քաղաքական իշխանությունը: Որպես օրինակ կարելի է նշել ֆաշիստական Գերմանիան, որի զինված ուժերը գտնվում էին առաջատար կուսակցության բացարձակ ազդեցության և վերահսկողության, հետևաբար նաև՝ քաղաքացիական վերահսկողության ներքո, ինչը, սակայն, այդ զինված ուժերը պակաս վտանգավոր չդարձրին աշխարհի, ինչպես նաև գերմանական հասարակության համար: Մեկ այլ օրինակ է Խորհրդային Միությունը, որտեղ զինված ուժերը գտնվում էին ոչ այնքան վերահսկողության ներքո, որքան խորապես ինտեգրված էին կոմունիստական կուսակցության պետական քաղաքականությանը և կոմունիստական ռեժիմի պահապանն էին¹⁸:

ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2008, հմ. 2–3 (56–57). էջ 88 (http://www.mil.am/arm/hb/2008_2_3.pdf).

¹⁶ Տե՛ս Article 2.1 of UN Charter (<http://www.un.org/en/documents/charter/index.shtml>)

¹⁷ Տարբեր երկրներում օմբուդսմենի ինստիտուտները սովորաբար համարվում են պետական ինստիտուտներ, սակայն նրանց պատասխանատվության շրջանակը պարտավորեցնում է նրանց՝ լինելու բավականաչափ անկախ՝ պետական մարմինները, ինչպես նաև բանակը վերահսկելու համար, և իրականացնելու բանակի գործունեության արդյունավետ վերահսկողություն՝ համապատասխանաբար նրանց պահելով քաղաքացիական արդյունավետ վերահսկողության տակ:

¹⁸ Ռոբերտ Վ. Բարիլսկին իր՝ «Զինվորը ռուսական քաղաքականության մեջ» գրքում գրում է. «Զինվորականները մնացին կայուն և քաղաքականությունից դուրս Բրեժնևից Անդրոպով, Անդրոպովից Չեռնենկո և Չեռնենկոյից Գորբաչև անցումային շրջաններում»: Բիարկե, նրանք կայուն էին, սակայն երբեք քաղաքականությունից դուրս չեն գտնվել ոչ հեղինակի նշած ժամանակաշրջաններում, ոչ էլ դրանցից առաջ կամ հետո: Հեղինակն ինքն է դա ապացուցում, երբ ասում է. «... զինվորականները, որոնք աշխատում էին որպես պառլամենտի ընտրված պատգամավորներ, մասնակցում էին այս քննարկումներին և նախադեպ էին ստեղծում, որ համագգեստ կրողներն իրավունք ունենան քննադատելու իրենց գլխավոր հրամանատարի վարած քաղաքականությունը և հրապարակավ ու գրավոր ձևով հանդիմանելու նրան»: Հակասական է այն փաստը, որ Խորհրդային պառլամենտում որպես պատգամավոր ընտրված զինվորականները կարող էին գտնվել քաղաքականությունից դուրս: Համապատասխանաբար, խորհրդային զինվորականները մեծապես ներգրավված էին քաղաքականության մեջ, և ավելին՝ խորհրդային գաղափարների կրողներն ու պահապաններն էին՝ դրանով իսկ շրջանցելով զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը:

Բացի այդ, գերազանցանալից պետությունն իրական սպառնալիք է միջազգային խաղաղության և անվտանգության համար: Հետևաբար, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն իրականացնելու տեսանկյունից մեկ այլ ազդեցիկ գործոն կարող է լինել միջազգային հանրությունը: Անտարակույս, միջազգային հանրությունն ի վիճակի չի լինի կատարելու այդ կարևոր խնդիրն առանց դիմելու այնպիսի մեխանիզմների, ինչպիսիք են միջազգային իրավունքով սահմանված տնտեսական, քաղաքական կամ նույնիսկ ռազմական պատժամիջոցները: Այսպիսով՝ միջազգային քաղաքացիական վերահսկողությունը դառնում է հույժ կարևոր և հրատապ խնդիր: Հետևաբար, միջազգային առաջադեմ հանրությունը գործի է դնում իր համոզական և նույնիսկ հարկադրական մեխանիզմները՝ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հասկացությունը ռիսկի տակ գտնվող տարածաշրջաններ ներմուծելով, և փորձում է խոչընդոտել անկայուն պետությունների ռազմականացումը: Ամեն դեպքում, առավել քան ակնհայտ է, որ ընդամենը զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության երևույթի ներդրումն արդյունավետ չի լինի, եթե հիմնված չլինի ժողովրդավարական արժեքների համապատասխան հասարակական ընկալման վրա: Ուստի հնարավոր բոլոր զարգացումները ենթադրում են զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հասկացության ընկալման կերպավորումներ: Չարգացած երկրների պարագայում խոսքը զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մասին է, մինչդեռ զարգացող ռազմականացված երկրներում ներդրելիս այն ստացել է «զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողություն» ձևակերպումը: Ի սկզբանե թվում է, թե քաղաքացիական և ժողովրդավարական վերահսկողությունների միջև զգալի տարբերություններ չկան, քանի որ քաղաքացիական վերահսկողության տրամաբանական նպատակը ժողովրդավարական արժեքների հաստատումն ու զարգացումն է, սակայն կրկին ֆաշիստական Գերմանիայի օրինակով կարելի է փաստել հետևյալի մասին. չնայած զինված ուժերը գտնվում էին քաղաքացիական վերահսկողության ներքո, այդուհանդերձ այդ վերահսկողությունը չէր կարելի ժողովրդավարական համարել:

Քաղաքացիական-զինվորական հարաբերությունները եղել և մնում են փոփոխությունների կիզակետում, իսկ սառը պատերազմի ավարտը համաշխարհային քաղաքականության նոր դարաշրջանի սկիզբ դրեց: Աշխարհը գործնականում միաբևեռ դարձավ՝ ղեկավարվելով ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների կողմից: Դրա հետ մեկտեղ, կոմունիստական ռեժիմը որպես ժառանգություն է թողել պետական կաթվածահար համակարգերով պետությունների, որոնք իրենց ներսում կրում էին ռազմական իշխանության ազդեցությունը: Դրանք այս կամ այն չափով ձգտում էին ինտեգրվել նոր աշխարհին, սակայն ժողովրդավարական արժեքների համակարգն ընկալելու համար չունեին համապատասխան հիմք: Ավելի քան ակնհայտ է, որ ԱՄՆ-ը հետխորհրդային տարածաշրջանում երբեք չէր հանդուրժի ռազմականացված հասարակությունների առկայությունը: Այսպիսով՝ լայնորեն տարածում գտնող քարոզչությունը սկսեց քաջալերել, համոզել կամ ընդհուպ հարկադրել հետխորհրդային պետություններին՝ հաստատելու ապառազմականացված ժողովրդավարական համակարգեր, որոնք հիմնված կլինեին քաղաքացիական վերահսկողության սկզբունքի վրա: Հետխորհրդային որոշ պետություններ ժողովրդավարական արժեքներն ընկալելու և ընդունելու առավել մեծ պոտենցիալ ունեին, քան մյուսները՝ իրենց աշխարհագրական դիրքի և Արևմտյան Եվրոպայի հետ գաղափարախոսական մնանությունների բերումով: Օրինակ՝ Բալթյան և Արևելյան Եվրոպայի պետությունների մեծ մասը շատ արագ կերպով ընդունեց նոր համակարգը և կարճ ժամանակում դարձավ ժողովրդավարական արժեքների լիիրավ կրող և տարածող նախկին խորհրդային

ազդեցության այլ մասերում¹⁹: Հետկոմունիստական այլ պետություններ դեռևս շարունակում են մնալ ռիսկի գոտիներ և զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության ներմուծման համապատասխան թիրախներ՝ չնայած այն հանգամանքին, որ ակտիվորեն ներգրավված են միջազգային հանրության գործունեության մեջ և կարող են օժտված լինել լիիրավ իրավասություններով: Արևմտյան պետությունները և հատկապես ԱՄՆ-ը, ակտիվ բազմավեկտոր համագործակցության մեջ գտնվելով դրանց մեծամասնության հետ, փորձում են ներդնել զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հասկացությունը հետկոմունիստական պետություններում՝ դրանք առավել կանխատեսելի դարձնելու նպատակով, քանզի հետկոմունիստական տարածաշրջանի փխրուն ժողովրդավարությունները կարող են հեշտությամբ փոխել իրենց ներքին քաղաքական ուրվագիծը և միանգամայն հակված են վերադառնալու դեպի ռազմականացում և բռնապետություն՝ դրանով իսկ միջազգային խաղաղության և անվտանգության համար վերածվելով իրական սպառնալիքի: Հետկոմունիստական տարածաշրջանում զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողությունը ներդրում է միջազգային այնպիսի հզոր կազմակերպությունների համոզական մեխանիզմների միջոցով, ինչպիսիք են ՆԱՏՕ-ն կամ ԵԱՀԿ-ն: Ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողությունը հաճախ մատնանշվում է որպես անհրաժեշտ նախապայման կամ լուրջ հանճարարական՝ այդ կազմակերպություններին անդամակցելու կամ նրանց հետ համագործակցելու համար: Անսպասելի չէ, որ համոզման մեխանիզմները կարող են փոխարինվել հարկադրանքի միջոցներով՝ ընդհուպ տարբեր պատժամիջոցներով (ներառյալ ուժի գործադրումը): Առաջին հայացքից՝ ոչ լիարժեք ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության և ուժի գործադրման միջև ուղիղ առնչությունը փոքր-ինչ շփոթեցնող է, սակայն դրանց միջև բազում տեսանելի կապեր կան: Հաճախ ոչ լիարժեք ժողովրդավարական վերահսկողության փաստը զուգակցվում է ոչ ժողովրդավարական ուրիշ փաստերի հետ և որպես քաղաքական հիմնավորում ծառայում պետության ներքին գործերին միջամտելու համար:

Շարադրվածը վկայում է այն մասին, որ ԱՄՆ-ը մեծ կարևորություն է տալիս հետկոմունիստական պետություններում զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության հասկացության տարածմանը և այն դիտում իբրև միջազգային անվտանգության և լավ հարաբերությունների երաշխիք: Թերևս դրան հնարավոր կլիներ հասնել հետկոմունիստական պետություններին սեփական փորձի փոխանցման ճանապարհով, սակայն աշխարհաքաղաքական և պատմական հանգամանքների բերումով՝ ԱՄՆ-ն ինքը զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության միանգամայն այլ ընկալում է ունեցել, և ըստ այդմ՝ ԱՄՆ-ի փորձն այս բնագավառում համահունչ չէ նոր մարտահրավերներին: Ինչպես երևում է՝ ԱՄՆ-ը կդիմի հետխորհրդային պետություններին զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության առանցքային հասկացության ուսուցանմանը՝ միաժամանակ դրան հավելելով ժողովրդավարական այնպիսի հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են ոչ պետական դերակատարների հնարավորությունների ընդլայնումը և միջազգային առաջադեմ հանրության առջև թափանցիկության մեծացումը:

¹⁹ Ռազմական համագործակցության շրջանակներում բազմաթիվ երկկողմ կամ միջազգային մակարդակի միջոցառումներ՝ նախատեսված հատկապես հետկոմունիստական պետությունների համար (օրինակ՝ ՆԱՏՕ-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում) իրականացվում են Բալթյան կամ Արևելաեվրոպական պետություններում, քանի որ դյուրին է ռազմական փոփոխությունները ժողովրդավարության ներքո բացատրել այն պետությունների փորձով, որոնք ապրել են համարժեք հանգամանքներում և վերջերս են փոփոխությունների ենթարկվել: Բացի այդ, «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում Բալթյան պետությունները Հարավային Կովկասի պետությունների հետ 3+3 ձևաչափով համագործակցություն են նախաձեռնել (Լիտվա, Լատվիա, Էստոնիա - Հայաստան, Վրաստան, Ադրբեջան), ինչը կողմերի քաղաքական կամքի բացակայության պատճառով ձախողվեց:

Ջինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն ԱՄՆ-ում

«Եթե նույնիսկ երկրում զգացվում է ռազմական իշխանության անհրաժեշտություն, իմաստուն և հեռատես ժողովուրդը այն միշտ կպահի իր զգոն և աչալուրջ հսկողության տակ»²⁰:

Այս խոսքերը պատկանում են ԱՄՆ-ի Անկախության հռչակագիրը ստորագրողներից մեկին՝ Սամուել Ադամսին: Հավանաբար, դրանք արտացոլում էին քաղաքացիական-զինվորական հարաբերությունների հասկացության հարցում ամերիկյան դիրքորոշումը, որը հետագայում դարձավ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սահմանման հիմքը: Գ.Վ. Ջոնսոն II-ը և Ս. Մեյրը գրում են. «ԱՄՆ-ում համազգեստավոր զինվորականների և քաղաքացիական քաղաքական գործիչների միջև հարաբերությունները բարդ և հեղհեղուկ են, սակայն հիմնված են մեկ բացառիկ սկզբունքի՝ քաղաքացիական վերահսկողության վրա»²¹: ԱՄՆ-ում պատմական զարգացումները, ինչպես նաև այդ երկրի աշխարհագրական դիրքը վճռորոշ դեր խաղացին քաղաքացիական-զինվորական հարաբերությունների նոր տեսության մշակման համար: Հանքինգթոնը համարում է, որ քաղաքացիական վերահսկողությունը գոյություն է ունեցել Միացյալ Նահանգներում, սակայն այն եղել է աշխարհագրական մեկուսացման և ուժերի միջազգային հավասարակշռության արդյունք²²: Վերլուծելով աշխարհագրական և պատմական խնդիրները՝ Մ. Կաիրոն գրում է. «Աշխարհագրությունը նույնպես կարևոր դեր է խաղացել զինվորականների նկատմամբ ամերիկացիների վերաբերմունքի ձևավորման գործում: 19-րդ դարի ընթացքում անեզր օվկիանոսները թափարգել են եղել Հյուսիսային Ամերիկայի համար, իսկ Ամերիկայի հարևանները լուրջ սպառնալիք չեն ներկայացրել: Իր մեկուսացման շնորհիվ Միացյալ Նահանգները գործնականում պաշտպանված է եղել Եվրոպայի և Ասիայի ռազմական ծանրակշիռ սպառնալիքներից: Հարուստ բնական ռեսուրսները ևս Միացյալ Նահանգներին գործնականում դարձրել են մնացյալ աշխարհից անկախ»²³:

Սրանից հետևում է, որ որոշակի արտաքին սպառնալիք չունենալու հանգամանքը նվազեցնում է երկրում ռազմական ուժի նշանակությունը, որը կարող է գտնվել կառավարական հաստատությունների ենթակայության ներքո²⁴:

Նշված բոլոր գործոններն իրենց դերակատարումն են ունեցել քաղաքացիական-զինվորական հարաբերություններ հասկացության իրավական սահմանումն ամերիկյան քաղաքականության մեջ ներմուծելու գործում: Այսպիսով՝ այս հարցի շուրջ առաջին իրավական դրույթը պետք է համարել ԱՄՆ-ի Սահմանադրության 2-րդ հոդվածի 1-ին մասը: ԱՄՆ-ի Սահմանադրության համաձայն՝ «Նախագահը Միացյալ Նահանգների բանակի և նավատորմի գլխավոր հրամանատարն է և առանձին նահանգների միլիցիայի գլխավոր հրամանատարը, երբ այդ նահանգների միլիցիան գորակոչ-

²⁰ Տե՛ս M. F. Cairo, “Civilian control of military”, Democracy Papers, US Department of State, International information programs (<http://usinfo.org/zhtw/DOCS/Demopaper/dmpaper12.html>).

²¹ Տե՛ս D. V. Johnson II and S. Metz, “American civil-military relations” New issues, enduring problems, Strategic studies institute, US Army war college, 1995, p. 2.

²² Տե՛ս S. P. Huntington, “The soldier and the state”, The Theory and politics of civil-military relations. The Belknap press of Harvard University Press, Cambridge, Massachusetts 1959, p.189.

²³ Տե՛ս Մ. Կաիրոն նշ. աշխ.:

²⁴ Տե՛ս Edited by C. E. Welch, Jr., “Civilian control of the military”, Theory and cases from developing countries, State University of New York Press, Albany 1976. p. 24.

վում է Միացյալ Նահանգների իսկական զինվորական ծառայության»²⁵: Այս դրույթը որպես երաշխիք է ծառայել և ծառայելու է, քանի դեռ պետության ղեկավարը քաղաքացիական անձ է, և նրա անձնական հրամանատարությունն ընկալվում է որպես զինվորականների նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն²⁶:

Գոյություն ունի տեսություն, որը հերքում է ԱՄՆ-ի Սահմանադրության 2-րդ հոդվածի 1-ին մասի՝ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրական լինելու մասին պնդումը: Սամուել Փ. Հանթինգթոնը գրում է. «Միացյալ Նահանգների Սահմանադրությունը, չնայած լայնորեն տարածում գտած համոզմունքին առ հակառակը, քաղաքացիական վերահսկողություն չի ապահովում»²⁷: Ըստ էության, Հանթինգթոնի քննադատությունը որպես հիմք ունի այն փաստը, որ Սահմանադրությունը չի ներառում «ռազմական արհեստավարժություն» հասկացության ընկալումը²⁸: Նա պատմական գործոնը համարում է Սահմանադրության թերությունների հիմնական աղբյուրը, քանի որ այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են զինվորական արհեստավարժությունը և քաղաքացիական վերահսկողությունը՝ որպես զինվորականներին քաղաքական հաստատություններին ենթարկելու միջոց, պարզապես անհայտ էին 18-րդ դարում:²⁹ Մեկ այլ հեղինակ՝ Մ. Կաիրոն, համաձայնում է, որ քաղաքացիական վերահսկողության մանրամասները երբեք հստակ չեն սահմանվել Սահմանադրությամբ, քանզի հիմնադիրները երբեք չեն նախատեսել արհեստավարժ զինվորական խավի գոյությունը և, այդ պատճառով, չէին կարող կանխատեսել քաղաքացիական վերահսկողության այսօրվա բնույթը³⁰: Նա կարծում է, որ Ամերիկայում զինվորականների նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը զարգացել է սովորույթի և ավանդույթի, ինչպես նաև սահմանադրական պարտավորությունների հիման վրա³¹:

Այդուհանդերձ, պետք է ընդունել, որ նույնիսկ ԱՄՆ-ի Սահմանադրության այս «թերի» բնորոշումը հեղափոխական նշանակություն ունեցավ, եթե հաշվի առնենք Սահմանադրության ընդունման պատմական ժամանակաշրջանը: Բացի այդ, հարկ է մյուս հիմնարար դրույթը՝ ԱՄՆ-ի Սահմանադրությամբ ամրագրված իշխանության բաժանումը, ընդունել որպես ԱՄՆ-ում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության օրենսդրական հիմքը դնելուն ծառայող անուղղակի օժանդակ գործիք: Համապատասխանաբար, սահմանադրական այն միջոցները, որոնք զինված ուժերին հարկադրում են ենթարկվելու քաղաքացիականներին, հաստատվեցին և բաժանվեցին իշխանության երեք՝ օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի միջև:

*Հիմնադիրներին հաջողվեց ստեղծել սահմանադրական այնպիսի կառույցներ, որոնք զինված ուժերը միանշանակորեն ենթարկեցին քաղաքական իշխանությանը և, մինչև ժամանակ, օրենսդիր և գործադիր ճյուղերի միջև բաժանեցին պաշտպանական ոլորտի կենտրոնական վերահսկողությունը*³²: Պատերազմ հայտարարելու, զինված ուժեր հավաքագրելու և զինելու իրավասությունը, ինչպես նաև այդ ուժերի համար կանոնների ու կանոնակար-

²⁵ Տե՛ս ԱՄՆ-ի Սահմանադրության 2-րդ հոդվածի 1-ին մաս:

²⁶ Տե՛ս C. E. Welch, “Theory and cases from developing countries” (Jr., “Civilian control of the military”). State University of New York Press, Albany 1976. p. 6.

²⁷ Տե՛ս Մ.Պ. Հանթինգթոն, նշ. աշխ., էջ 163:

²⁸ Այս հասկացությունը զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մասին նրա տեսության հիմքն էր, որը քննարկվում է այս աշխատության մեկ այլ բաժնում:

²⁹ Տե՛ս Մ.Պ. Հանթինգթոն, նշ. աշխ., էջ 164:

³⁰ Տե՛ս Մ. Կաիրոն, նշ. աշխ.:

³¹ Տե՛ս նույն տեղում:

³² Ռ. Ջոնսն նշում է իշխանության՝ քաղաքացիական վերահսկողություն իրականացնող միայն երկու՝ գործադիր և օրենսդիր ճյուղերը, սակայն իշխանության դատական ճյուղը նույնպես պետք է ներառվի ցուցակում՝ հաշվի առնելով դատական իշխանության կարևորությունը և դերը օրենսդրական ընդհանուր համակարգում:

գերի մշակումը վերապահվեցին ընտրված Կոնգրեսին: Պատերազմ վարելու իրավասությունը վերապահվեց գործադիրին (քաղաքացիական կառավարությանը), իսկ զինված ուժերի գլխավոր հրամանատարի դերը վերապահվեց Նախագահին՝ որպես պետության՝ ժողովրդի կողմից ընտրված գլխի և քաղաքացիական գերագույն իշխանության³³:

Հույժ կարևոր է նկատի ունենալ, որ Սահմանադրությունն ընդունվել է հեղափոխությունից հետո, և որ կատարված քայլերը պայմանավորված են եղել ինչպես սպառնալիք ներկայացնող հզոր բանակ, այնպես էլ զինվորական իշխանությունը ճնշելու ունակ քաղաքականապես ազդեցիկ քաղաքացիական իշխանություն ունենալու ձգտումներով, քանզի յուրաքանչյուր հետպատերազմական շրջանին բնորոշ են իրավիճակներ, որոնցում քաղաքական իշխանությունը զավթելու միջոցով նախկին ռազմական առաջնորդները փորձում են իրենց ոչ ակտիվ ռազմական կարգավիճակը փոխհատուցել ակտիվ քաղաքացիական գործունեությամբ: Սակայն Սահմանադրության հիմնադիրների մեծ մասը զինվորական է եղել, և մենք այստեղ բախվում ենք հակասության:

Կոնվենտի բոլոր մասնակիցները (1787-ի մայիսի վերջ) քաջ տեղյակ էին Հեղափոխական շրջանի և դրան նախորդող տասնամյակների ռազմական պրոբլեմներին: Պատվիրակների մեծ մասը զգալի ռազմական փորձառություն ուներ: Նախագահող զինվորական Ջորջ Վաշինգտոնը Հեղափոխական վերջին պատերազմի ընթացքում ծառայել էր որպես ամերիկյան ուժերի գլխավոր հրամանատար: Ներկա էին նաև այնպիսի վետերաններ, ինչպիսիք էին գնդապետ Ալեքսանդր Համիլտոնը, կապիտան Ջոնաթան Դալթոնը, մայոր Վիլյամ Փիրսը և ուրիշներ, եթե պատվիրակներին թվարկենք ըստ վերջին պատերազմում նրանց կոչումների³⁴:

Սրանից հետևում է, որ Հեղափոխության նախկին զինվորական առաջնորդներն իրենց անձնական փորձի հաշվառմամբ վերլուծել էին քաղաքականությանը զինվորականների միջատության վտանգավորությունը և դրանից խուսափելու նպատակով սահմանադրական միջոցներ ձեռնարկել: Այսպիսով՝ նրանք այն համոզմունքին էին, թե անհրաժեշտ է ցույց տալ, որ նոր Սահմանադրության համաձայն՝ զինվորականները պետք է գտնվեն քաղաքացիական իշխանության ենթակայության ներքո, որպեսզի ժողովրդավարությունը պաշտպանվի³⁵:

Ամերիկյան պատմության հետագա զարգացումները հայեցակարգային նոր մոտեցումներով հարստացրին զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության խնդիրը: Հավանաբար, զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության վերաբերյալ ամենալայն տարածում գտած և ազդեցիկ հայեցակարգը մշակել է Ս. Հանթինգթոնը: Հանթինգթոնի հիմնական դիրքորոշումն ակնհայտ է դառնում զինվորական իշխանությունը նվազագույնի հասցնելու նրա փորձերում: Նա քաղաքացիական վերահսկողությունը դիտարկում է երկու՝ սուբյեկտիվ քաղաքացիական վերահսկողության և օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողության տեսանկյուններից: Ըստ նրա՝ սուբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությունը հիմնվում է քաղաքացիական իշխանության ուժեղացման հաշվին զինվորական իշխանությունը նվազագույնի հասցնելու, իսկ օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությունը՝ ռազմական արհեստավարությունն առավելա-

³³ Տե՛ս R. Joo, “The democratic control of armed forces”, Challiot paper 23, 1996 (<http://aei.pitt.edu/480/01/chai23e.html#chap2>).

³⁴ Տե՛ս L. Smith, “American democracy and military power”. A study of civil control of the military power in the US, The University of Chicago press, 1951, p. 18.

³⁵ Տե՛ս Մ. Կալթոն նշ. աշխ.:

գույնի հասցնելու վրա³⁶: Հանթինգթոնի տեսության մեջ գերակայությունը տրվում է օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությանը, քանի որ զինվորականի նկատմամբ քաղաքացիական իշխանության մեծացումը մշտապես նշանակում է քաղաքացիական առանձին խմբի կամ խմբերի, այլ ոչ՝ քաղաքացիական ամբողջ հասարակության իշխանության մեծացում, մինչդեռ օբյեկտիվ քաղաքացիական վերահսկողությունն արդյունքի է հասնում զինվորականների «ռազմականացման» միջոցով՝ նրանց դարձնելով բավարար արհեստավարժ, որպեսզի զերծ մնան քաղաքական խնդիրներին և քաղաքական որոշումների կայացման գործընթացին միջամտելուց, քանի դեռ պետությունը չի զգում քաղաքականության մեջ նրանց մասնակցության ակտիվացման կարիքը³⁷: Ընդհանուր առմամբ, նրա ուսումնասիրությունը սկսվում է սպայական կազմի և ռազմական արհեստավարժության բարձրացման վրա³⁸, ինչը նա համարում է զինված ուժերի նկատմամբ արդյունավետ քաղաքացիական վերահսկողություն իրականացնելու հիմնական բաղադրիչ:

Այդուհանդերձ, այս տեսությունը փոքր-ինչ գաղափարախոսական է թվում, քանի որ դրանում հաշվի չեն առնվում մարդուն բնորոշ ամենատարրական հատկանիշները: Նույնիսկ արհեստավարժության բարձրագույն մակարդակին հասնելու դեպքում զինվորականները չեն դադարում մարդկային էակ մնալ, հետևաբար՝ ձգտում են ղեկավարել հասարակությունը, այլ ոչ՝ ղեկավարվել դրա կողմից, առավել ևս, երբ իշխանությունը զավթելու համար համապատասխան ռեսուրսների են տիրապետում: Բացի այդ, հարկ է բոլոր դեպքերում հաշվի առնել զարգացման դինամիկան: Դեպի քաղաքական դաշտ չտեղաշարժվելու տարուներով առաջնորդվող արհեստավարժ զինվորականը հաշվի չի նստում ժամանակի հրամայականի հետ, մինչդեռ անվտանգության նոր համակարգի բարդությունները եթե ոչ մշտապես, ապա հաճախ պահանջում են, որ զինվորականները ներգրավվեն քաղաքականության ոլորտում: Սակայն նույնիսկ ռազմական գործի կատարյալ իմացությունը զինվորականի կողմից քաղաքականության ճշգրիտ ըմբռնման երաշխիք չէ: Հետևաբար, քաղաքացիական վերահսկողության չափորոշիչները պետք է մշակվեն նաև պատմական ժամանակաշրջանների համատեքստում՝ հաշվի առնելով դրանց պահանջները:

Քաղաքացիական-զինվորական հարաբերությունների մեկ այլ տեսաբան՝ Մ. Յանովիչը, Հանթինգթոնի տեսության հակառակորդն է, սակայն խնդրին վերաբերող նրանց տեսանկյունները որոշ առումներով զուգամիտվում են: Նա նույնպես առանցքային է համարում սպայական կազմի և արհեստավարժության հասկացությունը, սակայն շատ ավելի մեծ կարևորություն է տալիս պատմաքաղաքական զարգացումներին և խնդիրը դիտարկում է սառը պատերազմի պրիզմայով, երբ միջուկային դարաշրջանի սպառնալիքները հարկադրում էին զինվորականներին՝ ստանձնելու իրենց ոչ հատուկ նոր դերեր, ինչը ենթադրում էր ազգային անվտանգության խնդիրների շուրջ համախմբում քաղաքացիական գործադիր ճյուղի ներքո (պաշտպանության ղեկարտամենտի և ազգային անվտանգության խորհրդի ստեղծում): Այս վերջինն առավել եռանդուն ջանքեր էր գործադրում քաղաքացիական իշխանության գազաթնակետ՝ Սպիտակ տուն մուտք գործելու համար:³⁹ Այսպիսով՝ Յանովիչի հայեցակարգը հիմնված է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության միջոցների և մակարդակների ընդլայնման վրա և առաջարկում է քաղաքացիական վերահսկողության երեք հիմնական մեխանիզմներ՝ բյուջետային գործընթաց, ուժերի ու առաքելությունների հատկացում և արտաքին քաղաքականության խնդիրներին վերաբերող խորհրդատվություն Նախագահին⁴⁰:

³⁶ Տե՛ս Մ.Մ. Հանթինգթոն, նշ. աշխ., էջ 80-83:

³⁷ Տե՛ս նույն տեղում:

³⁸ Տե՛ս P. D. Feaver, "The civil-military problematique: Huntington, Janowitz, and the question of civilian control", *Armed Forces and Society* 1996, 23, 149, p. 158.

³⁹ Տե՛ս Պ.Դ. Ֆիվեր, նշ. աշխ., էջ 164:

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 165:

Յանովիչն ապացուցում է, որ քաղաքացիական-զինվորական հարաբերություններն ընդհանրապես, ներառյալ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը, պետք է գնահատվեն և քննարկվեն զարգացման գործընթացի դինամիկայի շրջանակներում, քանզի դրանք յուրաքանչյուր ժամանակահատվածում հասարակության առջև ծառայող նոր խնդիրների հաշվառմամբ արդիականցնելու անհրաժեշտություն ունեն: Ամերիկացի գիտնականները զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրենց հայեցակարգերը կառուցել են ամերիկյան հետհեղափոխական կամ սառը պատերազմի ժամանակաշրջանների խնդիրների ազդեցության ներքո, սակայն ակնհայտ է սառը պատերազմին հաջորդող ժամանակաշրջանում ամերիկյան փորձի վրա հիմնված նոր հայեցակարգի անհրաժեշտությունը: Այս մասին Պ. Ֆիվերը գրում է. *«Տեսական քանակեցումը շարունակում են գերիշխել ամերիկյան քաղաքացիական-զինվորական հարաբերությունների երկու ուսուցիչները՝ Սամուել Հանթինգթոնը և Մորիս Յանովիչը՝ չնայած նրանց տեսություններում համապատասխան ձևով մեկնաբանված չէ պատվիրակում-վերահսկողություն դինամիկան: Նոր տեսություն է անհրաժեշտ, և դրա նախագիծն ակնհայտորեն ուրվագծվում է հայտնի հակառակորդների առանձնահատուկ թուլություններում»⁴¹:*

Անշուշտ, ԱՄՆ-ը գիտակցում է նոր դարաշրջանում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության նոր հայեցակարգի անհրաժեշտությունը, քանզի սառը պատերազմին հաջորդող ժամանակահատվածը նշանավորվել է Միացյալ Նահանգների ազգային և արտաքին քաղաքականության ոլորտներում նշանակալից փոփոխություններով: Քաղաքացիական-զինվորական հարաբերությունների ոլորտի մի շարք գիտնականներ կարծում են, որ նոր դարաշրջանը որոշ պատճառներով թարմացրել է քաղաքացիականների և զինվորականների միջև անջրպետը ԱՄՆ-ում: Օրինակ՝ Փ. Ֆիվերը և Ռ. Քոհնը հարցը քննարկում են՝ հաշվի առնելով պաշտպանության քարտուղար Վիլյամ Քոհենի՝ 1997 թ. Յեյի համալսարանում ունեցած ելույթը, որում նա ասում էր. «Զինվորական և քաղաքացիական խավերի միջև անջրպետ է ... ձևավորվում, երբ քաղաքացիական խավը լիովին չի ընկալում զինվորականի առաքելությունը, իսկ զինվորական խավը չի հասկանում, թե ինչու են մեր քաղաքացիների և քաղաքագետների հիշողություններն այսքան կարճ, կամ՝ ինչու է քննադատությունն այսքան հապճեպ և անտանելի»⁴²: Իր մեկ այլ հոդվածում Փ. Ֆիվերը գուգահեռներ է տալիս նոր քաղաքացիական-զինվորական անջրպետի և Միացյալ Նահանգների ներքին քաղաքական զարգացումների միջև. ազատական կողմնորոշում ունեցող դեմոկրատ Քլինթոնը Նախագահ ընտրվեց այն դեպքում, երբ նա գաղափարախոսական տարածայնություններ ուներ պահպանողական թևի և հանրապետական կողմնորոշում ունեցող զինվորականների հետ⁴³:

Այդուհանդերձ, նոր հայեցակարգը չի կարող հիմնված լինել լոկ ԱՄՆ-ի ներքին փորձի վրա և առնչվել միայն ԱՄՆ-ում քաղաքացիական-զինվորական հարաբերություններին: Պետք է ընդունել, որ սառը պատերազմից հետո ԱՄՆ-ը հսկայական ազդեցություն ունի հետկոմունիստական տարածաշրջանի մեծ մասում, և նոր հայեցակարգը որոշ առումով պետք է ուղեցույց լինի այդ պետությունների համար, քանզի դրանց զգալի մասը ձգտում է իր քաղաքացիական-զինվորական հարաբերությունները կառուցել ԱՄՆ-ի և նրա արևմտյան դաշնակիցների մասնությամբ կամ, առնվազն, ընդունել ԱՄՆ-ի փորձը՝ ելնելով այն հանգամանքից, որ քաղաքացիական-զինվորական հարաբերությունների պատշաճ մակարդակը ԱՄՆ-ի և Արևմուտքի հետ իրենց հարաբերությունների բարելավման կարևորագույն պահանջներից մեկն է:

⁴¹ Տե՛ս Պ.Ֆ. Ֆիվեր, նշ. աշխ., էջ 170:

⁴² Տե՛ս P. D. Feaver, R. H. Kohn, “Soldiers and civilians”, The civil-military gap and American national security, Triangle Institute for security studies, MIT press, Cambridge, Massachusetts, London, England, 2001, p. 1.

⁴³ Տե՛ս P. D. Feaver, T. Hikotani, S. Narine, “Civilian control and civil military gaps in the US, Japan and China”, Asian perspective, Vol. 29, N 1, 2005, p. 233-271.

**Ջինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության
ներդրում հետկոմունիստական տարածաշրջանում
սառը պատերազմից հետո**

Սառը պատերազմին հաջորդող ժամանակաշրջանին հատուկ էր հետկոմունիստական տարածաշրջանում ազդեցություն պահպանելու առումով Ռուսաստանի թուլացող դիրքը: Համապատասխանաբար, արևմտյան պետությունները և, մասնավորապես, Միացյալ Նահանգները մեծ հետաքրքրություն ցուցաբերեցին այդ տարածաշրջանում ներկայացված լինելու հարցում: Նման հանգամանքներում ԱՄՆ-ը չէր կարող սահմանափակվել պասիվ դերով և ստիպված էր նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը: Սա թուլացած Ռուսաստանին տարածաշրջանից դուրս մղելու հիանալի հնարավորություն էր:

Սառը պատերազմից հետո հետկոմունիստական պետությունների զինված ուժերը շարունակում էին մնալ կոմունիստական ռեժիմի ժառանգորդները և դեռևս փորձում էին քաղաքականության հիմնական գործող կողմը լինել: Բացի այդ, նախկին Խորհրդային Միության փլուզումն ուղեկցվել էր հետկոմունիստական որոշ շրջաններում դեռևս հզոր զինված ուժերի ներգրավմամբ մի շարք տեղային հակամարտություններով, որոնք բարձր լարվածության օջախներ էին թվում և միջազգային խաղաղության և անվտանգության համար իրական սպառնալիք էին: Սա կշեռքի հավասարակշռությունը թեքելու պատմական կարևոր պահ էր, քանի որ անցումային փուլ վերապրող հետկոմունիստական տարածաշրջանին հատուկ էր բռնությունը, և իրավիճակն անկառավարելի, նույնիսկ քառասյին էր թվում, քանի որ այլևս գոյություն չունեին իրավիճակը կարգավորելու ունակ կոմունիստական ռեժիմը: Տարածաշրջանում իրարանցման ու բռնության ալիքը ճնշելու համար նոր գերուժ էր պահանջվում: Անշուշտ, ԱՄՆ-ը չէր ցանկանա և հավանաբար ի վիճակի չէր լինի բացառապես իր ուսերին կրելու այդ ծանր բեռը և հանձն առնելու տարածաշրջանում անվտանգության հարցը: Տրամաբանորեն, միակ համապատասխան իշխանությունը, որն ի վիճակի կլինեին տարածաշրջանում ներկայացնելու Արևմտյան շահերը և կարգավորելու իրավիճակը, ՆԱՏՕ-ն էր:

Հետագա զարգացումներն ուղղված էին նոր, առավել լայն Եվրատլանտյան անվտանգության գոտի հաստատելուն, որը կներառեր նախկին կոմունիստական հանրության Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածքները: Այդուհանդերձ, ՆԱՏՕ-ի ղեկավարների համար միանգամայն հստակ դարձավ, որ անհրաժեշտ էր հետկոմունիստական պետությունների հետ խաղաղ և անգամ օժանդակող հարաբերությունների նոր ձևաչափ ստեղծել, որը հետկոմունիստական պետություններին կպարտավորեցներ ընդունել ՆԱՏՕ-ի չափորոշիչները և փոփոխել իրենց ռազմական համակարգերը: Բոլոր այդ փոփոխությունները պետք է հետկոմունիստական պետություններն առավել կանխատեսելի և, համապատասխանաբար, պակաս վտանգավոր դարձնեին անվտանգության նոր՝ Եվրատլանտյան գոտու համար:

Փաստորեն ՆԱՏՕ-ն գտավ խնդրի լուծման ճանապարհը: 1994 թ. ՆԱՏՕ-ի Բրյուսելի գագաթաժողովում պաշտոնապես հայտարարվեց համագործակցության նոր ծրագրի մասին, որն ստացավ «Գործընկերություն հանուն խաղաղության» (Partnership for Peace (PfP)) անվանումը⁴⁴: Այս ծրագրի նպատակը տարբեր բնագավառներում հետկոմունիստական պետությունների հետ ռազմական համագործակցության ակտիվացումն էր: Միաժամանակ, Գ-ՀԽ (PfP) ծրագրի նախաձեռնումը պետք է ՆԱՏՕ-ի անդամ պետություններին ստիպեր լրջորեն մտածելու համագործակցության հնարավոր զարգացումների մասին, քանի որ *հին* և *նոր* դաշնակիցների միջև գոյություն ունեցող գաղափարախոսական և պատմական անջրպետը զգուշացնում էր նրանց միջև հնարավոր

⁴⁴ Տե՛ս ՆԱՏՕ-ի պաշտոնական կայքը՝ www.nato.int

թյուրըմբռնումների մասին, որոնք կարող էին վերաճել լարվածության վտանգավոր աղբյուրի: Հետկոմունիստական ռեժիմի մասին արևմտյան պատկերացման համաձայն՝ այդ պետությունները խիստ ռազմականացված էին: Նույնիսկ կոմունիստական ռեժիմի փլուզումից հետո զինված ուժերի հանդեպ նրանց վերաբերմունքը մնացել էր անփոփոխ: Մի շարք հեղինակների կարծիքով՝ հետկոմունիստական պետությունների զինված ուժերը կողմորոշված էին սառը պատերազմի՝ Արևմուտքի հետ հակամարտության մեջ գտնվելու կոչվածությամբ, մեծաքանակ էին, պաշտպանությանը հատկացնում էին մեծ ծախսեր և հիմնված էին արական սեռի համընդհանուր զորակոչի վրա⁴⁵:

Փաստ է, որ այս հանգամանքներն անհանգստացնում էին ՆԱՏՕ-ին և ստիպում էին նոր գործընկերների հետ անդամության կամ նույնիսկ ավելի սերտ հարաբերություններ հաստատել միայն այն դեպքում, եթե վերջիններս կատարեն ժողովրդավարացման մի շարք պահանջներ: Ա. Բեբլերը գրում է. «*Քաջ գիտակցելով, որ իր անդամների միջև խաղաղության գոտի կերտելու գործում ՆԱՏՕ-ի պատմական հաջողությունը որքան դաշնակիցների ժողովրդավարական էության, նույնքան էլ ռազմական պաշտպանությանն ուղղված նրանց ջանքերի շնորհիվ էր, ՆԱՏՕ-ի տասնվեց անդամ պետությունները հասկացան, որ նոր ժողովրդավարություններում քաղաքացիական-զինվորական առողջ հարաբերությունների զարգացումից կշահի ողջ Եվրոպայի կայունությունը*»⁴⁶:

Անշուշտ, քաղաքացիական-զինվորական հարաբերությունների արմատական բարեփոխումները և զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեծացումը պետք է առաջին քայլերը դառնային հետկոմունիստական տարածաշրջանը (կամ դրա մի մասը) այս բնագավառում արևմտյան արժեհամակարգին առավել կամ պակաս չափով համապատասխանեցնելու համար: Սակայն հետկոմունիստական պետություններն այդ նախապայմանների կատարման հարցում խիստ տարբեր կամք էին դրսևորում: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հետկոմունիստական պետությունները, ինչպես և Բալթյան երկրները առավել հետաքրքրված էին Եվրատլանտյան անվտանգության հանրության նոր կազմում ընդգրկվելու և ՆԱՏՕ-ին ու Եվրամիությանը ինտեգրվելու հարցում: Հանուն այդ նպատակի՝ նրանք մեծ դժվարությունների դիմակայեցին. քաղաքացիական-զինվորական հարաբերությունների կոմունիստական՝ կուսակցություն-պետություն համակարգի բարեփոխում և փոխարինում քաղաքացիական-զինվորական հարաբերությունների ժողովրդավարական մոդելներով, զինված ուժերին և պաշտպանությանը հատկացվող ծախսերի կրճատում, զինվորականների վերակողմնորոշում դեպի նոր, սառը պատերազմին հաջորդող առաքելությունները և զինվորականների ու հասարակության միջև նորացված հարաբերությունների կերտում⁴⁷: Այսպիսով, տրամաբանական էր, որ այդ պետությունների մեծ մասը, հանուն ՆԱՏՕ-ի լիիրավ անդամության իրավունքների ձեռքբերման, կատարեց բոլոր պահանջները և արագորեն անցավ ՆԱՏՕ-ին ինտեգրվելու համար անհրաժեշտ բոլոր փուլերով, ինչպիսիք են «Անհատական գործընկերության գործողության ծրագրերը» և «Անդամակցության գործողության ծրագրերը» (Individual Partnership Action Plans (IPAP) and Membership Action Plans (MAP))⁴⁸:

⁴⁵ Տե՛ս A. Cottey, T. Edmunds, A. Forster, “Civil-military realtions in postcommunist Europe: Assessing the transition”, Routledge, Taylor and Francis group, London and New York, 2006, p. 1.

⁴⁶ Տե՛ս A. A. Bebler, “Civil-military realtions in post communist states”, Central and Eastern Europe in transition, Westport, Connecticut, London, 1997, p. 15.

⁴⁷ Տե՛ս A. Cottey, T. Edmunds, A. Forster, “Civil-military realtions in postcommunist Europe: Assessing the transition”, Routledge, Taylor and Francis group, London and New York, 2006, p. 2.

⁴⁸ Տե՛ս ՆԱՏՕ-ի պաշտոնական կայքը՝ www.nato.int.

Մինչդեռ այլ հետկոմունիստական պետություններ հետաքրքրված չէին ՆԱՏՕ-ին միանալու հարցում, կամ ստանալով բնակչության միայն մի մասի աջակցությունը՝ նրանց հետաքրքրությունը նվազել էր հասարակության ներսում եղած տարածայնությունների պատճառով: Որոշ օտարերկրյա հեղինակների կարծիքով՝ հետկոմունիստական պետություններում քաղաքացիական-զինվորական հարաբերությունների վիճակը միանգամայն օրհասական էր թվում: Օրինակ՝ Թ. Էդմունդսը, Ա. Քոթին և Ա. Ֆոսթերը գրում են. «Թվում է՝ Ռուսաստանը, Ուկրաինան և նախկին Խորհրդային Միության այլ հանրապետություններ այնպիսի զարգացումներ են ապրում, որոնցում քաղաքացիական-զինվորական հարաբերությունները կիսական «մեղմ» բռնատիրական ռեժիմների մաս են կազմում, մինչդեռ տնտեսական խնդիրներն արդյունք են առավել ընդհանուր հետադիմության՝ զինվորականների ապամասնագիտացման»⁴⁹: Սակայն նրանց կարծիքը խիստ քննադատական է թվում: Իհարկե, նախկին խորհրդային հանրապետությունների (բացառությամբ Բալթյան հանրապետությունների)՝ այս ուղղությամբ կատարած քայլերը համեմատության եզր չունեն այլ հետկոմունիստական պետությունների քայլերի հետ, սակայն դա դեռ ապացույց չէ այն բանի, որ առաջադիմական քայլեր չեն արվել: Համեմայնդեպս, հետխորհրդային գրեթե բոլոր հանրապետությունները ՆԱՏՕ-ի հետ իրենց հարաբերությունները կառուցել են Գ-ՀԽ-ի ծրագրի շրջանակներում և, համապատասխանաբար, հարկադրված են եղել իրագործելու ԱԳ-ԳԾ-ի նպատակները: Իսկ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մեծացումը դասվում է կարևորագույն նպատակների շարքին⁵⁰: Բացի այդ, որոշ օտարերկրյա փորձագետներ նմանապես հայտարարում են այս բնագավառում տեղի ունեցած զարգացումների մասին: Քաղաքական հետազոտությունների միջազգային կենտրոնի խորհրդատու Դունքան Հիսթորքը 2006 թ. հոկտեմբերի 13-ին կայացած միջազգային գիտաժողովում հնչեցրած իր ելույթում խոսում է վերջին տարիներին ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության բնագավառում Ուկրաինայի այնպիսի ձեռքբերումների մասին, ինչպիսիք են, օրինակ, «Պետության ռազմական կառույցի և իրավապահ մարմինների նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մասին» օրենքի ընդունումը, պաշտպանության նախարարության՝ իր կազմում քաղաքացիականների և զինվորականների հարաբերակցության (որն այժմ 76 %:24 % է) փոփոխմանն ուղղված գերագույն ջանքերը, առաջին «Սպիտակ գրքի» հրատարակումը և այլն⁵¹: Մեկ այլ հեղինակ՝ «Անվտանգության և ռազմավարական ուսումնասիրությունների միջազգային կենտրոնի» նախագահ Ալեքսանդր Գոնչարենկոն, գրում է. «Վերջին մի քանի տարիներին ազատական-ժողովրդավարական ավանդույթի ասպարեզում ամենախոշոր նվաճումներից էր անվտանգության ոլորտի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքի տեսական և գործնական զարգացումը, որը ենթադրում է վերահսկողություն ոչ միայն զինված ուժերի, այլև ազգային անվտանգության համակարգի բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իրավապահ և հատուկ ծառայությունների նկատմամբ»⁵²: Այս ուղղությամբ մեծ աշխատանք է տարվել Հայաստանում: Հայաստանն առաջինն էր նախկին կոմունիստական պետությունների շարքում, որն իրագործեց ԱԳ-ԳԾ-ի անմիջական նպատակներից մեկը և ստեղծեց զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության գործնական մե-

⁴⁹ Տե՛ս A. Cottey, T. Edmunds, A. Forster, “Civil-military realtions in postcommunist Europe: Assessing the transition”, Routledge, Taylor and Francis group, London and New York, 2006, p. 2.

⁵⁰ Տե՛ս Հայաստան – ՆԱՏՕ ԱԳԳԾ, կետ 1.6 (www.nato.int):

⁵¹ Տե՛ս Միջազգային խորհրդատու Դունքան Հիսթորքի ելույթը միջազգային գիտաժողովում “Intensified Ukraine–NATO Cooperation: Challenges and Benefits of Accession to the Membership Action Plan.”

⁵² Տե՛ս A. Goncharenko, CISSS President, “Problems of Democratic Control and Security Sector Reform in Post-communist Countries of Black Sea-Caspian Region”.

խանիզմ (զինվորական օմբուդսմենի ձևաչափով)⁵³: Ավելին՝ 2007 թ. ընդունվեց «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ օրենքը, որը քաղաքացիական անձնակազմի արդյունավետ հավասարակշռություն հաստատեց զինված ուժերի կենտրոնական աշխատակազմում՝ այսպիսով համապատասխան նախադրյալներ ստեղծելով զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության իրագործման համար: Դա ապացուցում է, որ հետկոմունիստական պետություններում կամ առնվազն դրանց մի մասում ձևավորվել են զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմներ: Թերևս կա նաև այդ մեխանիզմների գործադրման համար անհրաժեշտ միջոցներ տրամադրող քաղաքական կամք: Եվ միևնույնն է՝ քաղաքական կամքը բխում է ներքին ընկալումներից և դաշտը բարեփոխելու հասարակական անհրաժեշտությունից, թե Արմուտքի մշակութային ազդեցությունից: Երկու դեպքում էլ հասարակությունը ժողովրդավարական զարգացում է ապրում և, հետևաբար, հասարակությունը քաղում է նոր հասարակարգի օգուտները՝ փորձելով խուսափել ռազմական իշխանության կողմից գործադրվող ներքին ճնշումներից (եթե դրանք գոյություն ունեն) և ապահովել հասարակական կյանքի բոլոր ոլորտների հավասարաչափ զարգացում: Կարևոր է նշել հետկոմունիստական հանրությունում զինված ուժերի ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մեկ այլ կարևոր դերի մասին: Ներքին և արտաքին գործոնների բերումով դեռևս գոյություն ունի բանակի համալրում գորակոչի միջոցով: Հետևաբար, զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական արդյունավետ վերահսկողությունը բանակում մարդու իրավունքների պաշտպանության նախապայմանն է: Ակնհայտորեն, այս իրավիճակում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության դասական արևմտյան ընկալումը ձեռք է բերում նոր հատկանիշներ, բանակում մարդու իրավունքների պաշտպանությունը դառնում է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության պրոբլեմներից մեկը:

⁵³ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանի ռազմական և զինվորական ծառայողների հարցերով խորհրդականի պաշտոնը ստեղծվել է մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում՝ 2007 թ.: Այս մեխանիզմի գործնական նպատակը զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության կարևոր կետերից մեկի՝ զինվորականների և նրանց ենթակաների իրավունքների պաշտպանության իրականացումն է:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Միության փլուզումը գաղափարախոսական ճգնաժամ գոյացրեց հետկոմունիստական տարածքում, որին հաջորդեց ռազմականացված քառասյին իրավիճակը: Ջուզահեռաբար, միաբևեռ աշխարհի գաղափարը շատ արդիական դարձավ, և Միացյալ Նահանգները սկսեց ճանաչվել որպես աշխարհում միակ գործող ուժը, որն ի վիճակի էր կայունացնելու բռնությամբ լեցուն տարածաշրջանը: Սակայն կառավարման յոթ տասնամյակների ընթացքում ձևավորված գաղափարախոսական և կազմակերպական տարբերությունները լուրջ խոչընդոտ էին տարածաշրջանի վերափոխման համար: Այդուհանդերձ, կար արագ վերափոխումների անհրաժեշտություն, այլապես տարածաշրջանը կսպառնար մնալ անկայուն: Անշուշտ, առաջին քայլը պետք է լիներ տարածաշրջանի ապառազմականացումը, սակայն դա պետք է իրագործվեր լոկ համոզական մեխանիզմների գործադրմամբ՝ հետկոմունիստական հանրությանը միտելով դեպի փոփոխությունների ընդունումը և իրականացումը: Հասարակության ապառազմականացման համար ամենահամապատասխան միջոցն էր թվում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հասկացության ներդրումը, ինչի արդյունավետությունն ապացուցվել էր հետհեղափոխական և ավելի ուշ շրջանի ԱՄՆ-ի պատմական փորձով: Նույն մեթոդը ծրագրված էր ներդրել հետկոմունիստական տարածաշրջանում՝ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն ընդունելով որպես անվտանգության ամբողջ ոլորտի նկատմամբ վերահսկողություն իրականացնող ժողովրդավարական հաստատություն: Միևնույն ժամանակ, քանի որ այդ հաստատության պատճենումն արդյունավետ չէր թվում, միջազգային կազմակերպությունների մտավոր և այլ ռեսուրսները միավորվեցին, որպեսզի գործի դնեն ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության իրավական, քաղաքական և բարոյական նորմերը: Չինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության դասական ընկալումն այժմ վերածվեց անվտանգության ոլորտի ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության, քանզի ԱՄՆ-ում հայտնի ավանդական քաղաքացիական-զինվորական պրոբլեմատիկ տեսությունն այս տարածաշրջանում այլևս արդիական չէր հետևյալ պատճառներով. առաջին՝ պետության ավանդական քաղաքական վերահսկողությունը բավարար չէր, և կարիք կար, որ այլընտրանքային ոչ պետական հաստատությունները լրացնեին պետական վերահսկողության բացերը կամ նույնիսկ հսկողության տակ վերցնեին պաշտպանական քաղաքականության բնագավառում իրականացվող պետական միջոցառումները: Երկրորդ՝ հետկոմունիստական տարածաշրջանում «զինվորական» բառի ավանդական ընկալման համաձայն՝ այն ոչ միայն ուժ գործադրող կառույց էր, այլ ի վիճակի էր զավթելու քաղաքական իշխանությունը, ուստի անհրաժեշտ էր, որ ոչ միայն զինվորականները, այլև անվտանգության ողջ ոլորտը վերահսկվեր քաղաքացիական կառույցների կողմից, որպեսզի ժողովրդավարական-քաղաքացիական կառույցները վերահսկողություն իրականացնեին նաև այլ հզոր, ռազմականացված կառույցների նկատմամբ:

Որպես եզրակացություն՝ հարկ է նշել, որ ԱՄՆ-ն անուղղակիորեն (հիմնականում ՆԱՏՕ-ի և ԵԱՀԿ-ի միջոցով) ազդել է հետկոմունիստական տարածաշրջանի վրա, որպեսզի վերջինս զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հասկացության ներդրումն ընդունի որպես տարածաշրջանում անվտանգության ապահովման երաշխիք: Սակայն նոր տարածաշրջանում հասկացությունն ինքնին վերափոխման է ենթարկվել և ձեռք է բերել նոր հատկանիշներ, որոնք հիմնականում ուղղված են մարդու իրավունքների պաշտպանության նոր մեխանիզմների ստեղծմանը և անվտանգության ոլորտի ժողովրդավարացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գրքեր

1. D. V. Johnson II and S. Metz, “American civil-military relations”, New issues, enduring problems, Strategic studies institute, US Army war college, 1995.
2. A. Cottey, T. Edmunds, A. Forster, “Civil-military realtions in postcommunist Europe: Assessing the transition”, Routledge, Taylor and Francis group, London and New York, 2006.
3. A. A. Bebler, “Civil-military realtions in post communist states”, Central and Eastern Europe in transition, Westport, Connecticut, London, 1997.
4. P. D. Feaver, R. H. Kohn, “Soldiers and civilians”, The civil-military gap and American national security, Triangle Institute for security studies, MIT press, Cambridge, Massachusetts, London, England, 2001.
5. S. P. Huntington, “The soldier and the state”, The Theory and politics of civil-military relations, The Belknap press of Harvard University Press, Cambridge, Massachusetts 1959
6. L. Smith, “American democracy and military power”. A study of civil control of the military power in the US, The University of Chicago press, 1951.
7. C. E. Welch, Jr., “Civilian control of the military”, Theory and cases from developing countries, State University of New York Press, Albany 1976.
8. A. J. Goodpaster, S. P. Huntington, “Civil-military relations”, American enterprise institute for public policy research, Washington, D.C, 1977.
9. R. V. Barylski, “The soldier in Russian politics”, Duty dictatorship, and democracy undr Gorbachev and Yeltsin, Transaction publishers, New Brunswick (USA), and London (UK), 1998.

Հոդվածներ և այլ նյութեր

1. P. D. Feaver, “The civil-military problematique: Huntington, Janowitz, and the question of civilian control”, Armed Forces and Society, 1996.
2. Ա. Ռ. Ավետիսյան, Զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության խնդիրը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2008, հմ. 2-3 (56-57)
(http://www.mil.am/arm/hb/2008_2_3.pdf):
3. M. F. Cairo, “Civilian control of military”, Democracy Papers, US Department of State, International information programs, available at:
<http://usinfo.org/zhtw/DOCS/Demopaper/dmpaper12.html>
4. P. D. Feaver, T. Hikotani, S. Narine, “Civilian control and civil military gaps in the US, Japan and China”, Asian perspective, Vol. 29, N 1, 2005
5. R. Joo, “The democratic control of armed forces”, Challiot paper 23, 1996, available at:
<http://aei.pitt.edu/480/01/chai23e.html#chap2>
6. A. Goncharenko, CISSS President, “Problems of Democratic Control and Security Sector Reform in Post-communist Countries of Black Sea-Caspian Region”.
7. www.nato.int
8. Закон Украины “О демократическом гражданском контроле над военной организацией и правоохранительными органами государства”, 19.03.2008 г.

**ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ**

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ⁵⁴

ՀՀ ազգային անվտանգության առավել արդյունավետ ապահովումը պետության գերխնդիրն է: ՀՀ պարագայում ազգային անվտանգության ապահովման հիմնական գրավականը պետության պաշտպանունակությունն է: Ուստի այդ գերխնդրի լուծման նպատակով ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության վերանայման համատեքստում անվտանգության բնագավառի արդյունավետ կառավարում ապահովելու համար էական նշանակություն ունի այդ բնագավառի պաշտպանական ոլորտի կառավարման համակարգի կատարելագործումը: Հաշվի առնելով, որ արդի աշխարհում ժողովրդավարական արժեքների գերակայության թելադրանքով ռազմավարական առաջնահերթություն է դարձել ազգային անվտանգության ապահովումը ժողովրդավարության ամրապնդման ու զարգացման համատեքստում, այդ գործընթացը պետք է իրականացվի Սահմանադրության և օրենքների մակարդակներում անվտանգության բնագավառի ու դրա պաշտպանական ոլորտի կառավարման համակարգերի ժողովրդավարական հաստատութենականացման միջոցով:

Պաշտպանական ոլորտի կառավարումը իշխանության իրականացման գործունեություն է, ուստի պաշտպանական ոլորտի կառավարման համակարգի կազմը, կառուցվածքը, դրա տարրերի դերային և գործառույթային բաշխումն ու այլ առանձնահատկությունները պայմանավորված են պետության մեջ իշխանության իրականացման մոդելով: Իշխանության իրականացման մոդելը ձևավորվում է ըստ իշխանության իրականացման սուբյեկտներին (ժողովուրդ, միապետ, իշխանության իրականացման միջոց մարմիններ ու պաշտոնատար անձինք) լիազորությունների վերապահման և դրանց հարաբերակցության, իշխանության իրականացման միջոց մարմինների և պաշտոնատար անձանց կազմավորման (ընտրության կամ նշանակման) և գործունեության սկզբունքների, կարգի ու մեխանիզմների:

Իշխանության իրականացման մոդելներն արտացոլված են պետությունների սահմանադրությունների և դրանց համապատասխան ընդունված օրենքների հիմնարար նորմերում:

Ներկայումս առավել տարածված են իշխանության իրականացման երեք մոդելներ, որոնք պայմանականորեն կարելի է բաժանել միապետականի, տոտալիտար/ավտորիտարի և ժողովրդավարականի: Հայաստանի Հանրապետությունը պատկանում է ժողովրդավարականի կիսանախագահական տեսակին:

Պաշտպանական ոլորտի կառավարման առումով վերջինիս հիմնական առանձնահատկությունն այն է, որ կառավարությանը և նրա անդամ պաշտպանության նախարարին, ինչպես նաև պաշտպանության նախարարությանը, որպես կանոն, վերապահվում են միայն պաշտպանության իրականացման ապահովման լիազորություններ*:

⁵⁴ ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ֆինանսական մասի պետ

* Պաշտպանության իրականացումը բնույթով ուղղակի գործառույթ է և դրսևորվում է պետության բնակչությունը, ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունն ու սահմանների անձեռնմխելիությունը զինված հարձակումից պաշտպանելու անմիջական գործողություններով՝ *զինված հարձակման կասեցում, հետևողում և դրա հետևանքների չեզոքացում*: Պաշտպանության իրականացման ապահովումը բնույթով անուղղակի գործառույթ է և դրսևորվում է պետության տարածքը, բնակչությունը, տնտեսությունը և պաշտպանական համակարգը զինված հարձակմանը դիմակայությանը, դրա կասեցմանը, հետմղմանը և հետևանքների չեզոքացմանն ունակ վիճակի բերելու գործողություններով՝ *մարդկային և նյութական ռեսուրսների մոբիլիզացիա, նյութական պահուստի ձևավորում, սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերում, տարածքի սարքավորում և այլն*: ՀՀ

Վերը նշվածի հաշվառմամբ՝ ՀՀ պաշտպանական ոլորտի կառավարման համակարգի հնարավորինս օպտիմալացման միջոցով ՀՀ անվտանգության պաշտպանական բաղկացուցիչի առավելագույնս ապահովման նպատակով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության՝ որպես ժողովրդավարական ու իրավական պետության պաշտպանական ոլորտի կառավարման համակարգի տարբերակ, որը ներառում է պաշտպանական ոլորտի կառավարման արևմտյան մոտեցման հիմնական տարրերը և հնարավորություն կընձեռի մշակելու ու վարելու արդյունավետ պաշտպանական քաղաքականություն⁵⁵:

Մեր կարծիքով՝ ՀՀ պաշտպանական ոլորտի կառավարման համակարգի առաջարկվող տարբերակը կարող է ունենալ հետևյալ ուրվագիծը:**

Նախագահը գտնվում է պաշտպանական ոլորտի կառավարման բուրգի գագաթին: Նա ինչպես պաշտպանության համակարգի ղեկավար շրթայի, այնպես էլ զինված ուժերի հրամանատարական շրթայի վերին օղակն է: Նախագահն ունի ինչպես պաշտպանության իրականացման (օրինակ՝ որպես զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար), այնպես էլ պաշտպանության իրականացման ապահովման (օրինակ՝ որպես զինված ուժերի պլանները և այլ փաստաթղթերը հաստատող) լիազորություններ: Պատերազմի ժամանակ Նախագահը կարող է նշանակել և ազատել զինված ուժերի գլխավոր հրամանատարին: Որպես զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար՝ նա խաղաղ և պատերազմի ժամանակ (պատերազմի ժամանակ գլխավոր հրամանատար նշանակելու դեպքում վերջինիս միջոցով) ղեկավարում է զինված ուժերը, պատերազմի ժամանակ ղեկավարում է (գլխավոր հրամանատար նշանակելու դեպքում վերջինիս միջոցով) զինված ուժերի կառավարման միացյալ օպերատիվ կենտրոնը: Խաղաղ և պատերազմի ժամանակ նշանակում և ազատում է զինված ուժերի բարձրագույն հրամանատարական և սպայական կազմին, շնորհում է բարձրագույն սպայական կոչումներ:

Ազգային ժողովը օրենքներ ընդունելու միջոցով սահմանում է պաշտպանության իրականացման և պաշտպանության իրականացման ապահովման իրավական կարգը, հավանություն է տալիս Ազգային անվտանգության ռազմավարության, Ռ-ազմական դոկտրինի և ռազմավարական տրամաչափի քաղաքական-անվտանգային այլ փաստաթղթերի նախագծերին, որոշում է կայացնում զինված ուժերը պետության տարածքից դուրս օգտագործելու, պատերազմ հայտարարելու կամ խաղաղություն հաստատելու մասին, վավերացնում է քաղաքական կամ ռազմական բնույթ ունեցող կամ պետական սահմանի փոփոխություն նախատեսող միջազգային պայմանագրերը, ինչպես նաև վերահսկում է Նախագահի, կառավարության, պաշտպանության նախարարի և զինված ուժերի գործունեությունը: Խորհրդարանական վերահսկողությունն իրականացվում է պաշտպանական ծախսերի կատարման, զինված ուժերում մարդու իրավունքների

կառավարությանը միայն պաշտպանության իրականացման ապահովման լիազորությունների վերապահումը տառացի կերպով ամրագրված է ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 6-րդ կետում: Տե՛ս նաև Վ. Պ. Ավետիսյան, Պետությունը պաշտպանությանը պատրաստելու իրավական հիմքերի կատարելագործումը պաշտպանական բարեփոխումների համատեքստում: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, հմ. 3 (61) 2009:

⁵⁵ Տե՛ս Հ. Ս. Քոթանջյան, Դ. Ս. Զիլինգարյան, Վ. Պ. Ավետիսյան, Ա. Ա. Մինասյան, «Պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը՝ որպես Հայաստանում պաշտպանական բարեփոխումների իրականացման տեսական-մեթոդաբանական գործիք: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, հմ. 1-2 (59-60) 2009:

** Հաշվի առնելով, որ պաշտպանական ոլորտի կառավարման համակարգի առաջարկվող տարբերակի առանձնահատկությունների մանրամասն հետազոտությունն ու հիմնավորումը մեկ հոդվածում հնարավոր չէ ներկայացնել, բավարարվում ենք այդ հետազոտությունների արդյունքների հիման վրա նշված տարբերակի ուրվագծի նկարագրությամբ:

պաշտպանության, զինված ուժերի օգտագործման, ռազմական դրության կամ զորահավաքի հայտարարման նկատմամբ:

Կառավարությունը, վարչապետը և պաշտպանության նախարարը պաշտպանության համակարգի ղեկավար շղթայի օղակներ են, որոնք իրենց լիազորությունների սահմաններում ապահովում են պաշտպանության իրականացումը:

Կառավարությունն իր լիազորություններն իրականացնում է օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրացման, ինչպես նաև Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված կարգով Հանրապետության պաշտպանության իրականացման գործնական ապահովման միջոցով, որը ներառում է պաշտպանության իրականացման ապահովման մասով ՀՀ ներքին քաղաքականության մշակումն ու իրականացումը և Հանրապետության Նախագահի հետ համատեղ՝ ՀՀ արտաքին քաղաքականության մշակումը և իրականացումը:

Վարչապետը պաշտպանության իրականացման ապահովման մասով ղեկավարում է կառավարության գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը, ընդունում է որոշումներ՝ այդ նպատակով կառավարության գործունեության կազմակերպմանն առնչվող հարցերի վերաբերյալ:

Պաշտպանության նախարարը կառավարության անդամ է և օժտված է Հանրապետության պաշտպանության իրականացման ապահովմանն ուղղված ՀՀ կառավարության՝ վերը նշված լիազորությունների իրականացման ապահովման լիազորություններով:

Նա ինքնուրույն պետական կառավարման մարմին չէ և պետական կառավարմանը մասնակցում է կառավարության կազմում՝ որպես կառավարության անդամ:

Նախարարի լիազորությունները չեն կարող գերազանցել կառավարության լիազորությունները: Նա չի կարող ունենալ այնպիսի լիազորություններ, որոնք ներառված չեն կառավարության լիազորություններում կամ ուղղակիորեն չեն բխում դրանցից:

Նա պաշտպանական ոլորտում մշակվող և իրականացվող քաղաքականության՝ Հանրապետության կառավարության իրավասությանը ենթակա մասի համակարգողն է և ապահովում է զինված ուժերի գործառնությունների կատարումը (տարածքի սարքավորում, մարդկային և նյութական ռեսուրսների ապահովում և այլն):

Պաշտպանության նախարարությունը օժտված չէ պետական իշխանության իրականացման լիազորություններով, պետական կառավարման մարմին չէ և ընդամենը, որպես պետական կառավարչական հիմնարկ՝ ապահովում է պաշտպանության նախարարի լիազորությունների իրականացումը:

Զինված ուժերն իրականացնում են զինված հարձակումից Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, բնակչության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության զինված պաշտպանությունը: Զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են ժողովրդավարական վերահսկողության ներքո:

Զինված ուժերի կառավարումը խաղաղ ժամանակ իրականացվում է զինված ուժերի զորատեսակների և զորամիավորումների միացյալ կիրառման նպատակով դրանց հրամանատարությունների գործունեության համադասման մարմնի՝ զինված ուժերի կառավարման միացյալ օպերատիվ կենտրոնի միջոցով:

Զինված ուժերի գլխավոր հրամանատարը պատերազմի ժամանակ նշանակվելու դեպքում ղեկավարում է զինված ուժերը, կառավարում է զինված ուժերի կառավարման միացյալ օպերատիվ կենտրոնը: Պատերազմի ժամանակ նա զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձն է, նշանակում և ազատում է զինված ուժերի կրտսեր և ավագ հրամանատարական ու սպայական կազմին, շնորհում է կրտսեր և ավագ սպայական կոչումներ:

Չինված ուժերի գլխավոր շտաբի պետը խաղաղ և պատերազմի ժամանակ ղեկավարում է զինված ուժերի գլխավոր շտաբը: Խաղաղ ժամանակ (պատերազմի ժամանակ՝ զինված ուժերի գլխավոր հրամանատար չնշանակվելու դեպքում) նա զինված ուժերի կառավարման միացյալ օպերատիվ կենտրոնի միջոցով նաև կառավարում է զինված ուժերը: Խաղաղ ժամանակ նա զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձն է: Խաղաղ ժամանակ (պատերազմի ժամանակ՝ զինված ուժերի գլխավոր հրամանատար չնշանակվելու դեպքում) նշանակում և ազատում է զինված ուժերի կրտսեր և ավագ սպայական ու հրամանատարական կազմին, շնորհում է կրտսեր և ավագ սպայական կոչումներ:

Չինված ուժերի գլխավոր շտաբը խորհրդատվական և պլանավորման մարմին է: Որպես «մտքային կենտրոն»՝ այն զինված ուժերի գլխավոր հրամանատարին և զինված ուժերի զորատեսակների, միավորումների և զորամիավորումների հրամանատարներին ապահովում է ռազմական-ռազմավարական տրամաչափի համապատասխան մշակումներով, վերլուծություններով, երաշխավորություններով, մասնակցում է ռազմավարական տրամաչափի ռազմաքաղաքական փաստաթղթերի մշակմանը, մշակում է դրանցում նախատեսված միջոցառումների իրականացման պլանները, զորքերի և նրանց հրամանատարությունների հետ համագործակցելով մշակում է համապատասխան որոշումների տարբերակներ, ինչպես նաև ապահովում է դրանց իրականացման խորհրդատվական-երաշխավորական ուղեկցումն ու կատարման մշտազննումը և այլն: Գլխավոր շտաբը բաղկացած է զործառության (պլանավորման, օպերացիաների և զործողությունների, հետախուզության և այլն) ստորաբաժանումներից*:

Չինված ուժերի զորատեսակները, միավորումները և զորամիավորումները ղեկավարում են դրանց հրամանատարները: Չինված ուժերի զորատեսակների և զորամիավորումների կառավարումն իրականացնում են դրանց հրամանատարությունները/շտաբները:

Տարածքային պաշտպանության զորքերի (ուժերի) ստորաբաժանումները ղեկավարում են տարածքային պաշտպանության տեղական (գոտիական) պետերը: Օպերատիվ առումով տարածքային պաշտպանության ստորաբաժանումը ենթարկվում է այն միավորման/զորամիավորման հրամանատարությանը, որի պատասխանատվության գոտում է գտնվում⁵⁶:

Ի տարբերություն գործող համակարգի, որտեղ զինված ուժերի գլխավոր շտաբը զինված ուժերի կառավարման կենտրոնական մարմին է, ՀՀ պաշտպանական ոլորտի կառավարման համակարգի առաջարկվող տարբերակում լիազորություններն ու գործառույթները տարանջատված են խորհրդատվական և պլանավորման մարմին/«մտքային կենտրոն» գլխավոր շտաբի և զինված ուժերի կառավարման միացյալ օպերատիվ կենտրոնի միջև: Այս տարանջատումը բխում է զինված ուժերի առավել արդյունավետ կառավարման անհրաժեշտությունից և առավելագույնս նպաստում է զինված ուժերի շարունակական զարգացմանն ու պետության պաշտպանունակության ամրապնդմանը: Առհասարակ, մտքային և իրականացման բաղադրիչների տարանջատումը ժամա-

* Չինված ուժերի կառավարումը «մտքային կենտրոն» գլխավոր շտաբի և զինված ուժերի կառավարման օպերատիվ կենտրոնի/օպերատիվ շտաբի տարանջատման սկզբունքով (իշխանության իրականացման մոդելով պայմանավորված առանձնահատկությունների հաշվառմամբ) են կառուցել ՆԱՏՕ-ի գրեթե բոլոր անդամ պետությունները: Տե՛ս, օրինակ, խորհրդարանական Բուլղարիայի (<http://www.md.government.bg/bg/ba.html>), կիսանախագահական Ֆրանսիայի (<http://www.defense.gouv.fr/>) և նախագահական ԱՄՆ-ի (<http://odam.defense.gov/omp/pubs/GuideBook/DoD.htm>) զինված ուժերի կառավարման համակարգերը:

⁵⁶ Տե՛ս Յու. Գ. Խաչատրյան, Պաշտպանությանը պետության և նրա զինված ուժերի պատրաստման որոշ հարցեր: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, հմ. 3 (61) 2009: Տե՛ս նաև Հ. Ս. Քոթանջյան, Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, հմ. 3 (61) 2009:

նակակից կառավարման մշակույթի և գիտության հիմնարար ձեռքբերումներից է⁵⁷: Նման մոտեցման դեպքում որոշումներ և ծրագրեր մշակողը զերծ է մնում կորպորատիվ, հատվածական շահերից, իսկ իրականացնողը ձգտում է հնարավորինս պատշաճ կերպով կատարել նախանշված առաջադրանքը: Նշված երկու բաղադրիչներից յուրաքանչյուրի թերությունները, սխալներն ու բացթողումներն անմիջապես տեսանելի են դառնում: Առաջանում է նաև յուրօրինակ մրցակցային իրավիճակ: Այս ամենի շնորհիվ ոչ միայն նվազարկվում է մարդկային գործոնի բացասական ազդեցությունը, այլև որոշ մարդկային բացասական գործոնների դրսևորումներ (կորպորատիվ նկրտումներ, կարիերիստական հակումներ և այլն) նույնիսկ սկսում են «ծառայել» ընդհանուր շահերին: Բացի այդ, ակնհայտ են դառնում մտքային և կառավարման բաղադրիչներից յուրաքանչյուրի համար անհրաժեշտ քանակական, որակական և հարաբերակցային մեծություններն ու չափանիշները, ինչը գրեթե անհնար է պարզել միասնական բրգածն կառուցվածք ունեցող ու ներկայում գործող գլխավոր շտաբի պարագայում, քանի որ «բուրգի» դրսև կողմից անհաղթահարելիորեն դժվար է տեսնել «բուրգի» ներսում առկա թերությունները, իսկ առավել ևս՝ դրանց առաջացման պատճառները: Որոշակի բացասական հանգամանքների զուգադրման դեպքում «բուրգը» կարող է վերածվել ինքնուրույն շահերով ու նպատակներով ապրող ինքնաբավ համակարգի՝ կասեցնելով զինված ուժերի զարգացումը և նվազեցնելով պետության պաշտպանունակությունը:

Սահմանապահ գորքերը իրականացնում են Հայաստանի Հանրապետության սահմանների անձեռնմխելիության զինված պահպանությունը և գտնվում են զինված ուժերի կազմում՝ որպես առանձին զորատեսակ:

Առաջարկվող տարբերակի համաձայն պաշտպանության համակարգ և դրան համապատասխանող պաշտպանական ոլորտի կառավարման համակարգ ձևավորելու նպատակով հարկ կլինի համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել ՀՀ Սահմանադրության մեջ և պաշտպանական ոլորտի օրենքներում, ինչպես նաև ընդունել նոր օրենքներ:

Թեև Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը կապված է լուրջ դժվարությունների հետ, այնուամենայնիվ, դրա անհրաժեշտությունն ակտուալ է: Եթե 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով Սահմանադրության մեջ կատարված փոփոխություններն ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետության պետական ու հասարակական կյանքի շատ ոլորտներում իշխանության իրականացման և մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմներն ու հաստատությունները դարձրին ավելի ժողովրդավարական, ապա պաշտպանական ոլորտում առաջընթացին զուգահեռ նաև հետընթաց ամրագրեցին: Մեր կարծիքով՝ խորհրդային ամբողջատիրական համակարգի մնացուկ «այլ գորքերի» արհեստական սահմանադրականեցումը, Սահմանադրության 8.2-րդ հոդվածում զինված ուժերի լիազորությունների ոչ ճշգրիտ ձևակերպումը (դրա տառացի մեկնաբանությամբ պետության ամբողջ անվտանգությունն ապահովում են զինված ուժերը, ինչը նշանակում է, որ ամբողջ պետական մեքենան պետք է ռազմականացվի և ներառվի զինված ուժերի կազմում), 55-րդ հոդվածի 12-րդ կետով զինված ուժերի օգտագործումը բացառապես ռազմական դրության հայտարարմամբ պայմանավորելը, միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման նպատակով զինված ուժերի օգտագործումը ՀՀ տարածքից դուրս չնախատեսելը (դա անհաղթահարելի իրավական խոչընդոտ է ՄԱԿ-ի կանոնադրությամբ և ՀՀ այլ միջազ-

⁵⁷ Տե՛ս Դ. Ս. Զիլինգարյան, Վ. Պ. Ավետիսյան, Տ. Ռ. Մարտիրոսյան, ԱՄՆ-ի պաշտպանական քաղաքականության համակարգի ղեկավարման և կառավարման փորձի մասին: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, հմ. 4 (58) 2008 և այդ հոդվածում օգտագործված գրականությունը:

գային պայմանագրերով նախատեսված պարտավորությունների իրականացման համար*, հատկապես՝ պաշտպանական ոլորտում), անվտանգության բնագավառում Ազգային ժողովի նվազարկված լիազորությունները (դա գրեթե անարդյունավետ է դարձնում այդ բնագավառի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը), ինչպես նաև բազմաթիվ այլ թերություններ ու բացթողումներ առաջացել են անվտանգության բնագավառի և դրա պաշտպանական ոլորտի իրավական կարգավորման հայեցակարգի բացակայության հետևանքով: Այս ամենն անհրաժեշտ է շտկել: Դա ազգային անվտանգության առաջնային նշանակության խնդիր է, որի՝ միասնական հայեցակարգի հիման վրա կատարված համակարգային լուծումը էապես կբարձրացնի պետության և ազգի համար կենսականորեն կարևոր շահերի պաշտպանվածության մակարդակը:

Մեր կարծիքով՝ Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելուց հետո անհրաժեշտ կլինի ամբողջությամբ վերանայել անվտանգության բնագավառի՝ իր դարձն ապրած խորհրդային կառավարման և իրավական մշակույթի հիման վրա ձևավորված օրենսդրությունը՝ դրանում կարևորելով հատկապես պաշտպանական ոլորտի օրենսդրության վերանայումը: Մասնավորապես՝ ցանկալի կլինեն միավորել այդ ոլորտի հասարակական հարաբերությունների համապատասխան խմբերը և դրանք կարգավորել Պաշտպանական օրենսգրքով: Ջուզահեռաբար հարկ կլինի սահմանապահ գործերը ներառել զինված ուժերի կազմում, ստեղծել պրոֆեսիոնալ ոստիկանական ստորաբաժանումներ և ձեռքբազատվել «այլ գործերից» ու դրանց իրավական հիմքը կազմող իրավական ակտերից, համապատասխան օրենքներ ընդունել դրանց գործառույթների համապատասխան մասերն ապահովող մարմինների գործունեության կարգի վերաբերյալ: Կառաջանա նաև ազգային անվտանգության մարմինների և ոստիկանության կարգավիճակները վերանայելու անհրաժեշտություն ոչ միայն վերջիններիս գործեր ունենալուց «զրկվելու» հետևանքով, այլև այն պատճառով, որ ՀՀ Սահմանադրության համապատասխան՝ ինչպես պաշտպանության, այնպես էլ անվտանգության ու հասարակական կարգի պահպանության պարագաներում կառավարությունն ունի միայն ապահովման, այլ ոչ՝ իրականացման լիազորություններ, ուստի այդ ոլորտներում ևս իրականացման ապահովման ղեկավարումը պաշտպանական ոլորտի նմանությամբ պետք է լիազորվի համապատասխանաբար ներքին գործերի և ազգային անվտանգության նախարարներին: Ոստիկանությունն ու ազգային անվտանգության ծառայությունը՝ որպես համապատասխանաբար հասարակական կարգի պահպանության և ազգային անվտանգության իրականացնողներ, վերջիններիս նկատմամբ պետք է գտնվեն նույն հարաբերության մեջ, ինչպիսին են առաջարկվող տարբերակում պաշտպանության նախարարի և զինված ուժերի հարաբերությունը: Ըստ այդմ, ոստիկանությունն ու ազգային անվտանգության ծառայությունը պետք է ունենան համապատասխան կառուցվածք և կառավարում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ կյանքի մյուս ոլորտների կառավարման համակարգերի համեմատ ՀՀ պաշտպանական ոլորտի կառավարման համակարգը Սահմանադրության և հատկապես՝ օրենքների մակարդակներում զգալի մասով ձևավորվել է սահմանադրականության և ժողովրդավարականության սկզբունքների անտեսմամբ՝ խորհրդային կառավարման ու իրավական մշակույթի իներցիոն ազդեցությամբ, ինչի հիմնական պատճառը, մեր կարծիքով, ոլորտի և, առհասարակ, անվտանգության բնագավառի իրավական կարգավորման ժամանակակից ժողովրդավարական հայեցակարգի բացակայությունն է եղել: Պաշտպանական ոլորտի կառավարման համակարգի կատարելագործմամբ պետության պաշտպանունակության և, հետևաբար, ամբողջ անվտանգային

* Մեր կարծիքով՝ ՀՀ զինված ուժերի օգտագործումը խաղաղարար, ինչպես նաև միջազգային խաղաղության ու անվտանգության ապահովման այլ նպատակներով ՀՀ տարածքից դուրս օգտագործելու վերաբերյալ ՀՀ բոլոր միջազգային պայմանագրերը չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրությանը:

ներուժի ամրապնդումը ազգային անվտանգության արդյունավետ ապահովման համար ռազմավարական նշանակություն ունեցող խնդիր է, որը հնարավոր է լուծել միասնական հայեցակարգի հիման վրա՝ անվտանգության բնագավառի, այդ թվում՝ դրա պաշտպանական ոլորտի ժողովրդավարացման և սահմանադրական ու օրենսդրական հաստատութենացման միջոցով: Դրա համար հարկ կլինի համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարել Սահմանադրության մեջ և պաշտպանական ոլորտի օրենքներում, ինչպես նաև ընդունել մի շարք օրենքներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ թողարկում:
2. «Պաշտպանության մասին» ՀՀ Օրենք, ՀՕ-198-Ն, ՀՀՊՏ 2008.12.24/73(663):
3. «Սահմանապահ զորքերի մասին» ՀՀ օրենք, ՀՕ- 266, ՀՀՊՏ 2001.12.25/41(173):
4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի գլխավոր շտաբի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության քննչական ծառայության կանոնադրություններն ու կառուցվածքները հաստատելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտ և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության քննչական ծառայություն ստեղծելու մասին» հմ. 1554-Ն որոշում, ՀՀՊՏ 2009.01.14/2(668):
5. The OSCE Code of Conduct on politico-military aspects of security http://www.osce.org/documents/fsc/1994/12/4270_en.pdf:
6. «Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառի կառավարման հիմնահարցերը»: «Իրավական հետազոտությունների ազգային կենտրոն» հասարակական կազմակերպություն: «Ատոլիկ» հրատարակչություն, Երևան, 2009:
7. Յու. Գ. Խաչատուրով, Պաշտպանությանը պետության և նրա զինված ուժերի պատրաստման որոշ հարցեր: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2009, հմ. 3 (61) 2009:
8. Հ. Ս. Քոթանջյան, Պետության տարածքային պաշտպանության կազմակերպման հարցի շուրջ՝ Իսրայելի օրինակով: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, հմ. 3 (61) 2009:
9. Հ. Ս. Քոթանջյան, Դ. Ս. Չիլինգարյան, Վ. Պ. Ավետիսյան, Ա. Ա. Մինասյան, «Պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը՝ որպես Հայաստանում պաշտպանական բարեփոխումների իրականացման տեսական-մեթոդաբանական գործիք: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2009, հմ. 1-2 (59-60) 2009:
10. Դ. Ս. Չիլինգարյան, Վ. Պ. Ավետիսյան, Տ. Ռ. Մարտիրոսյան, ԱՄՆ-ի պաշտպանական քաղաքականության համակարգի դեկավարման և կառավարման փորձի մասին: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, հմ. 4 (58) 2008 և այդ հոդվածում օգտագործված գրականությունը:
11. Վ. Պ. Ավետիսյան, Պետությունը պաշտպանությանը պատրաստելու իրավական հիմքերի կատարելագործումը պաշտպանական բարեփոխումների համատեքստում: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2009, հմ. 3 (61) 2009:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ
ՎԻՐԱԲ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Պաշտպանական ոլորտում ֆինանսական միջոցների ծախսման նկատմամբ վերահսկողությունն այդ ոլորտի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ամենակարևոր տարրերից մեկն է:

Պաշտպանական ոլորտը, մյուսների համեմատ, ունի որոշակի առանձնահատկություններ: Այստեղ հաճախ անհրաժեշտ է պահպանել գաղտնիության ռեժիմ, որը ազգային անվտանգության շահերի ապահովման երաշխիքներից է:

Պաշտպանության ոլորտը նաև հանրային միջոցների ծախսման գերակա ուղղություններից մեկն է: Որպես կանոն՝ պաշտպանական ոլորտում ծախսվում է պետական բյուջեով նախատեսված հատկացումների ամենամեծ մասերից մեկը: Չնայած այն հանգամանքին, որ վերջին շրջանում և հատկապես սառը պատերազմի ավարտից հետո աշխարհի գրեթե բոլոր պետությունները էականորեն կրճատել են պաշտպանական ծախսերը, այդ նպատակով կատարվող հատկացումները շարունակում են զգալի կշիռ կազմել:

Այսպես. եթե ԱՄՆ ռազմական բյուջեն 1985 թվականին կազմել է այդ պետության ՀՆԱ-ի 4 տոկոսը, ապա արդեն 2000 և 2001 թվականներին այն կազմել է ՀՆԱ 2.2 տոկոսը: Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի ռազմական բյուջեն 1985 թվականին կազմել է այդ պետությունների ՀՆԱ-ի համապատասխանաբար 5.2, 4 և 3.2 տոկոսը: 2000 թվականին այն կազմել է ՀՆԱ-ի համապատասխանաբար 2.4, 2,6 և 1,6 տոկոսը:

Պաշտպանական ծախսերի կտրուկ փոփոխություն է նկատվում հատկապես նախկին Խորհրդային Միության և դրա իրավահաջորդ Ռուսաստանի Դաշնության պարագայում: Այսպես, եթե 1985 թվականին ԽՍՀՄ պաշտպանական բյուջեն կազմում էր այդ պետության ՀՆԱ-ի 16.1 տոկոսը, ապա 2000 թվականին այդ թիվը իջավ մինչև 5 տոկոսը⁵⁸: Հայաստանի Հանրապետությունում 2008 թվականին պաշտպանական բյուջեն կազմել է ՀՆԱ-ի 3.4 տոկոսը:

Չնայած արձանագրված նվազումներին, այնուամենայնիվ, պետք է նշել, որ պաշտպանական ծախսերը կազմում են բյուջետային միջոցների զգալի մասը: Այդ պատճառով հատկապես կարևորվում է այս ոլորտի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության արդյունավետ համակարգի ներդրումն ու գործարկումը:

ՀՀ Սահմանադրության 8.2-րդ հոդվածը, սահմանելով, որ զինված ուժերը գործում են քաղաքացիական վերահսկողության ներքո*, արդեն իսկ հիմք է ստեղծում այս ոլորտի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության համար: Եվ չնայած այն հանգամանքին, որ ֆինանսական ապահովումը պաշտպանական միջոցառումների բաղադրիչ է, այնամենայնիվ պետք է նկատի ունենալ, որ այդ միջոցառումներն ի վերջո նպատակաուղղված են զինված ուժերի կարիքները բավարարելուն և դրանց բնականոն գործառնության ու նրանց առջև դրված խնդիրները լուծելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա ապահովելուն: Այդ պատճառով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ

⁵⁸ St'u The Military balance 2002-2003, IISS, London.

* Զինված ուժերի նկատմամբ վերահսկողության «քաղաքացիական» բնույթի մատնանշման աննպատակահարմարության մասին բազմիցս նշել են ոլորտը ուսումնասիրող մասնագետները: Նրանք հատկապես շեշտում են, որ վերահսկողության փոխում էական է ոչ թե դրա քաղաքացիական լինելու, այլ հենց ժողովրդավարական լինելու հանգամանքը: Սահմանադրությունը այս երկու տերմինները դիտում է որպես հոմանիշներ, ինչը, մեր կարծիքով, չի համապատասխանում վերահսկողության ժամանակակից չափանիշներին և ոլորտի պահանջներին:

զինված ուժերը գտնվում են ժողովրդավարական վերահսկողության ներքո, կարող ենք վստահորեն ասել, որ զինված ուժերի ապահովման նպատակով իրականացվող ֆինանսական բնույթի միջոցառումները ևս ժողովրդավարական վերահսկողության առարկա են:

Վերլուծելով ՀՀ-ում զինված ուժերի ապահովման ֆինանսական միջոցառումների նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմի կայացման պրոբլեմները՝ կարող ենք ասել, որ դրանք նույնական են զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության համատեքստում պաշտպանական ծախսերի վերահսկողության մեխանիզմի կայացմանը խոչընդոտող պրոբլեմների հետ: Դրանք են՝ գաղտնիության չհիմնավորված ռեժիմը, համապատասխան պետական կառավարման մարմինների լիազորությունների ոչ լիարժեք իրացումը, իրավատեր հասարակության բացակայությունը և այլն:

Ձինված ուժերի ֆինանսական ապահովումը հիմնականում իրականացվում է բյուջետային հատկացումների միջոցով: Դրա հիմքը «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի ա կետի նորմն է, որի համաձայն՝ պաշտպանությունը այն հիմնական ուղղություններից մեկն է, որը մտնում է պետական բյուջեի միջոցով ֆինանսավորվող պետական նշանակության ծրագրերի ու ծախսերի մեջ⁵⁹: Այդ հիմքով պաշտպանական բյուջեն, որոշակի առանձնահատկությունների հաշվառմամբ, պետք է անցնի պետական բյուջեի համար նախատեսված՝ ձևավորման, հաստատման, կատարման և վերահսկողության բոլոր փուլերը:

Հայաստանի Հանրապետությունում պաշտպանական բյուջեն ամբողջությամբ գաղտնագրված է, ինչն անհնարին է դարձնում դրա նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը: Չնայած այն հանգամանքին, որ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի հաստատման մասին օրենքում նշվում է, թե որքան են այդ տարվա համար բյուջետային հատկացումները, այնուամենայնիվ, անհայտ է մնում, թե ինչի վրա և ինչ եղանակով են դրանք ծախսվում:

Ինչպես և ամբողջ բյուջետային գործընթացում, պաշտպանական բյուջեն հաստատելիս ևս պետության խորհրդարանը բավականին մեծ դեր ունի: Ընդ որում, այդ դերը պետք է էական լինի բյուջետային ամբողջ գործընթացի, այլ ոչ միայն դրա առանձին փուլերի ժամանակ: Հենց դրանով է պայմանավորված այս ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության արդյունավետությունը:

ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածին համապատասխան՝ Ազգային ժողովը կառավարության ներկայացմամբ հաստատում է պետական բյուջեն:

«Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը բյուջեն սահմանում է որպես պետության՝ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրեր⁶⁰:

Սակայն օրենսդրության հետագա վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը. Ազգային ժողովը պետական բյուջեն հաստատում է բացառապես տնտեսագիտական դասակարգման հոդվածներով որոշակի հատկացումներ հաստատելու միջոցով՝ ըստ էության անտեղյակ լինելով, թե կոնկրետ ինչ միջոցներ են ձեռք բերվելու այդ ռեսուրսների հաշվին: Այսպես, օրինակ, «2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանվում է, որ ռազմական պաշտպանությանը հատկացվում է 130 322 810 500 ՀՀ դրամ, որից «Հետազոտական և նախագծային աշխատանքներ պաշտպանության ոլորտում» ծախսերը կազմելու են 950 640 000 ՀՀ դրամ և այլն⁶¹:

⁵⁹ Տե՛ս «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ 1997 թ. հուլիսի 21-ի ՀՕ-137 օրենք:

⁶⁰ Տե՛ս «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ 1997 թ. հուլիսի 21-ի ՀՕ-137 օրենք:

⁶¹ Տե՛ս «2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ 2009 թ. դեկտեմբերի 24-ի ՀՕ- 225 օրենք:

Մակայն այս թվերը որևէ կերպ հնարավորություն չեն տալիս պատասխանելու այն հարցին, թե կոնկրետ ինչ է ձեռք բերվելու այս միջոցներով: Այս դրույթին լրացնելու է գալիս «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը, որի համաձայն՝ «Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների անվանացանկը՝ բյուջետային ծախսերի գերատեսչական և գործառնական դասակարգմամբ, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը պետական բյուջեի կատարման եռամսյակային համամասնությունների հետ միասին, առանձին հավելվածով՝ ըստ գնման առարկայի, քանակի և ընդհանուր գնի»⁶²: Հարկ է նշել, որ բյուջեի զգալի մասը կատարվում է հենց բյուջետային միջոցների հաշվին գնումներ կատարելու միջոցով: Կարելի է եզրակացնել, որ գնումները բյուջեի կատարման էական մասն են կազմում, մինչդեռ ՀՀ Ազգային ժողովը դուրս է մնացել բյուջեի կատարման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու գործընթացից, ինչը բացասաբար է անդրադառնում զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմի կայացման վրա: Ասվածն ավելի ակնհայտ կդառնա, եթե նշենք, որ ռազմական կարիքների բավարարման համար իրականացվող բոլոր գնումները գաղտնագրված են: Մա արդեն իսկ նշանակում է, որ ո՛չ հասարակությունը, ո՛չ խորհրդարանը պարզապես ի վիճակի չեն վերահսկելու պաշտպանական բյուջեի միջոցների ծախսը:

Առանձին հարց է ռազմական կարիքների բավարարման նպատակով ձեռք բերվող որոշակի ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գաղտնագրման հիմնավորվածությունը: Մասնավորապես՝ ՀՀ պաշտպանության նախարարության կայքէջում տեղադրված հայտարարություններից կարող ենք կռահել, որ ռազմական կարիքների բավարարման նպատակով ձեռք են բերվում «պետական և ծառայողական գաղտնիք» պարունակող այնպիսի ապրանքներ, ինչպիսիք են ծաղիկները, ծաղկեպսակները, ՀՀ Նախագահի նկարները և այլն: Թե որքանով է հիմնավոր նշված ապրանքների վերաբերյալ տվյալները պետական կամ ծառայողական գաղտնիքների շարքին դասելը, դժվար է ասել:

Ձեռք բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցանկի նկատմամբ հսկողությունը կարևորվում է բյուջետային միջոցների ծախսման նպատակայնության տեսանկյունից: Մի շարք պետություններում, մասնավորապես՝ Գերմանիայում և Նիդեռլանդներում, որոշակի չափի գումարը գերազանցող գույքի պարագայում դրա ձեռքբերման անհրաժեշտությունը նախ համաձայնեցվում է խորհրդարանի հետ*, այնուհետև ներկայացվում են այդ գույքի տեխնիկական-տակտիկական բնութագրիչները՝ առաջադրված և խորհրդարանին նախապես ներկայացված խնդիրը դրա միջոցով լուծելու հիմնավորմամբ, որից հետո խորհրդարանի հետ համաձայնեցվում է ձեռք բերվող գույքի համար նախատեսվող գինը, այնուհետև խորհրդարանի հետ համաձայնեցվում է այն կազմակերպության թեկնածությունը, որից նախատեսվում է ձեռք բերել այդ գույքը: Ինչպես տեսնում ենք, որոշակի գումարը գերազանցող գույքի ձեռքբերումը այդ պետություններում անցնում է չորս փուլ, ինչը հնարավորինս բացառում է բյուջետային միջոցների աննպատակային ու անվերահսկելի ծախսումը:

Կարծում ենք, որ ՀՀ-ում պաշտպանական բյուջեի միջոցներով ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռքբերման գործընթացի գաղտնիացման չափանիշները լուրջ վերանայման կարիք ունեն: Անկասկած, որոշակի գնումներ, որոնք իսկապես առնչվում են պետական կամ ծառայողական գաղտնիքի հետ, պետք է գաղտնիացվեն: Կարծում ենք, որ այդպիսի գնումները տեսակարար մեծ կշիռ չեն կարող կազմել: Բացի այդ, արդյունավետ վերահսկողության համար

⁶² Տե՛ս «Գնումների մասին» ՀՀ 2004 թ. դեկտեմբերի 23-ի ՀՕ-160-Ն օրենք:

* Դա արվում է այն պահանջների մասին զեկույց ներկայացնելով, որոնց բավարարմանը ուղղված է նոր գույքի ձեռքբերումը:

հատկապես կարևոր է Ազգային ժողովին վերապահել ոչ միայն բյուջետային հատկացումները ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների հաստատելու իրավասություն, այլև նրան հնարավորություն տալ ավելի մանրամասնելու, թե ինչ գույք է ձեռք բերվելու այդ միջոցներով: Դրանից որոշ չափով կնվազի անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխությունների կատարման օպերատիվությունը, սակայն դա կստիպի պետական կառավարման մարմիններին առավել մանրամասնորեն և ուշադիր կերպով իրականացնել բյուջետային պլանավորումը:

ՀՀ օրենսդրությամբ ժողովրդավարական ինստիտուտներին վերապահված վերահսկողական գործառնությունների արդյունավետության համատեքստում կարելի է նշել ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածով սահմանված Ազգային ժողովի լիազորությունները: Այդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ: Վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ Ազգային ժողովը քննարկում և հաստատում է պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը: Սակայն պետք է նշել, որ թե՛ վերահսկիչ պալատի ստուգումները, թե՛ այս պարագայում Ազգային ժողովի կողմից պետական բյուջեի կատարման հաշվետվության հաստատումը վերահսկողության *a posteriori* ձևեր են, որոնք, ըստ էության, չեն կարող ապահովել այնպիսի արդյունավետություն, ինչպիսին անմիջականորեն իրականացնվելու պարագայում կարող է ունենալ այդ վերահսկողությունը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք անել հետևյալ եզրահանգումները.

- Անհրաժեշտ է վերանայել պաշտպանական բյուջեի միջոցներով բերվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գաղտնիացման չափանիշները,
- ժողովրդավարական վերահսկողության ինստիտուտներին և մասնավորապես խորհրդարանին վերապահել բյուջեի կատարման գործընթացի անմիջական վերահսկողի լիազորություններ:

Կարծում ենք, որ այս երկու պրոբլեմների լուծմամբ է նախ և առաջ պայմանավորված պաշտպանական ոլորտում ֆինանսական միջոցառումների նկատմամբ վերահսկողության արդյունավետ մեխանիզմի կայացումը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ՝ ՈՐՊԵՍ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏԱԱՄԲ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳ**

*ՌՈՒՍՏԱՄ ՄԱԽՍՈՒԴ-ՅԱՆ*⁶³

Պետության նկատմամբ քաղաքացիների վստահության հարցն առանցքային է ցանկացած իշխանության համար: Այն որոշվում է պետությունում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգերի զարգացածության աստիճանով: Հետևաբար, հայրենական իրավաբանական գիտության նորմաստեղծ գործունեության և իրավակիրառ պրակտիկայի խնդիրներից են մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության պետական-ազգային համակարգերի կատարելագործումը, արդեն գոյություն ունեցող իրավապաշտպան կառուցակարգերի արդյունավետության բարձրացումը, այդպիսի նոր կառուցակարգերի որոնումը:

Թեև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը ՀՀ բոլոր պետական մարմինների սահմանադրական պարտականությունն է, այնուամենայնիվ, դրա լրացուցիչ կառուցակարգերի գոյության արդյունավետությունը մեր հասարակությունում նույնպես նկատելի է: Իսկ մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները և դրանց պաշտպանության ինստիտուտները առանձնահատուկ չափորոշիչներ են՝ պետությունը իրավական տեսանկյունից բնութագրելու և, ընդհանրապես, տվյալ հասարակության քաղաքակրթության մակարդակը որոշելու համար:

Քաղաքացիական վերահսկողություն իրականացնող մարմինների շարքում առաջնային դերակատարությունը վերապահված է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմենի) ինստիտուտին, որը 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով ճանաչվեց որպես սահմանադրական ինստիտուտ: Մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետև՝ նաև Պաշտպան) հաստատությունը պետական իշխանության ինքնիրավ գործողություններից անձի իրավունքների պաշտպանության իրական դերակատարություն կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ պետական կառուցակարգում այն հաստատված է որպես իշխանություններից անկախ և քաղաքական, գաղափարական, շահադիտական նախահամոզվածությունից ազատ մարմին:

Ժողովրդավարական արժեքային համակարգում որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության առավել արդյունավետ միջոց՝ գրականության մեջ նշվում է նաև «հասարակական կամ արտապետական վերահսկողության» մասին: Ընդ որում, «արտապետական վերահսկողություն» տերմինը պայմանական է և նկատի ունի այնպիսի հաստատությունների վերահսկողական գործունեությունը, որոնք պետական իշխանության մաս չեն կազմում, սակայն ակտիվ կերպով մասնակցում են պետական քաղաքականության իրականացմանը⁶⁴:

Դա պայմանավորված է նաև նրանով, որ Պաշտպանի ինստիտուտը չի հակակշռում պետական համակարգի մյուս ինստիտուտներին, այլ գործում է համագործակցության սկզբունքով՝ որպես ՀՀ Սահմանադրությամբ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխավոր:

ՀՀ զինված ուժերում Պաշտպանի դերակատարությունն է՛լ ավելի արժևորվեց, երբ ՀՀ-ՆԱՏՕ անհատական գործընկերության գործողությունների ծրագրի շրջանակներում 2007 թվականին

⁶³ Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի վարիչ

⁶⁴ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս, Ա. Ռ. Ավետիսյան, Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հարցի շուրջ, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2-3 (56-57), 2008թ., էջ 80-83:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստեղծվել է ռազմական և զինծառայողների հարցերով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի խորհրդականի հաստիք⁶⁵:

Չնայած այն հանգամանքին, որ նշված ինստիտուտը նորամուծություն է ՀՀ պետական համակարգում, այն արդեն իսկ իր դերակատարությունն ունեցել է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով ստանալու մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը»:

Սահմանադրության մեկ այլ՝ 83.1-րդ, հոդվածն ամրագրում է Պաշտպանի նշանակման համար անհրաժեշտ ցենզերը (տարիք, քաղաքացիություն, նստակեցություն և այլն), պաշտոնավարման ժամկետը, նրա կողմից քննարկվող դիմում-բողոքների շրջանակը և այլն:

Օտարերկրյա պետությունների մեծ մասում գործադիր իշխանության գլուխը՝ պետության նախագահը, կառավարությունը դուրս են այդ ինստիտուտի վերահսկողական իրավասությունների շրջանակից: Միևնույն ժամանակ օմբուդսմենի լիազորությունների ծավալը տարբեր պետություններում կարող է տարբեր լինել՝ կախված այդ պետության իրավական և պետական կառավարման համակարգերի առանձնահատկություններից⁶⁶:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի* 8-րդ հոդվածով (այսուհետև՝ Օրենք) սահմանված է Պաշտպանին դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը. ֆիզիկական անձինք, այլ անձանց ներկայացուցիչներ, ձերբակալում, նախնական կալանք կամ քրեական պատիժն իրականացնող հիմնարկներում պատիժը կրող անձինք, իրավաբանական անձինք, խնամակալության և հոգաբարձության մարմիններ:

Համաձայն նույն հոդվածի՝ Պաշտպանին կարող է դիմել ցանկացած ֆիզիկական անձ՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, բնակության վայրից, սեռից, ռասայից, տարիքից, քաղաքական և այլ հայացքներից ու գործունակությունից:

Ուրիշի իրավունքների պաշտպանության նպատակով Պաշտպանին կարող են դիմել միայն այդ անձանց ներկայացուցիչները, ինչպես նաև մահացած անձանց ընտանիքների անդամներն ու ժառանգները (Օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մաս):

Այս առումով կարծում ենք, որ Օրենքում անհրաժեշտ է որոշակի բացառություն նախատեսել՝ հաշվի առնելով, որ մեր իրականության մեջ երբեմն որոշ կատեգորիայի անձինք, օրինակ՝ զինծառայողները, հետագայում անցանկալի հետևանքներից խուսափելու նպատակով նախընտրում են առկա պրոբլեմի մասին հայտնել ծնողներին կամ այլ մերձավոր անձանց, որոնք էլ այդ հարցով դիմում են Պաշտպանին: Օրենքի տրամաբանությունից ելնելով՝ քաղաքացիների նմանատիպ դիմումները չպետք է քննարկվեն, մինչդեռ հաճախ դրանցում նշված փաստերը անհետաձգելի արձագանք են պահանջում:

Այդ առումով առաջարկվում է 8-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ նախադասությամբ. «տվյալ դեպքում բացառություն են կազմում այնպիսի դիմում-բողոքները, որոնք խիստ կարևորություն են ներկայացնում, և դրանց քննարկելու կամ չքննարկելու նպատակահարմարության հարցը թողնվում է Պաշտպանի հայեցողությանը»:

⁶⁵ Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի «Տարեկան զեկույց 2008 թ.» Եր., 2009 թ, էջ 160:

⁶⁶ Տե՛ս Национальные омбудсмены: свод правовых положений /по состоянию на 01.01.1998/, Варшава Представитель по правам граждан Республика Польша; Biuro Rzecznika Praw Obywatelskich, Варшава 1999, 160-173 էջեր:

* Ընդունվել է 2003 թվականի հոկտեմբերի 23-ին, ուժի մեջ է մտել 2004 թվականի հունվարի 1-ին:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «Ձինված ուժերը Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության համակարգի հիմքը կազմող պետական ռազմական կառույցն է, որն ապահովում է ՀՀ անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության զինված պաշտպանությունը»: Հոդվածի բովանդակությունից բխում է, որ զինված ուժերը պետության ռազմական անվտանգության երաշխավորն են: Հետևաբար, նման առանձնահատուկ գործառույթներ իրականացնող մարմնում ընդգրկված անձանց իրավունքների պաշտպանությունն ու խախտված իրավունքների վերականգնումը պետք է համապատասխան ուշադրության արժանանան նաև Պաշտպանի կողմից:

Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչը պետք է երաշխավորվի գորամիավորումներում, ձերբակալման վայրերում, նախնական կալանք կամ քրեական պատիժ իրականացնող հիմնարկներում, ինչպես նաև՝ հարկադրական պահման այլ վայրերում գտնվող անձանց հետ առանձին, անարգել, մեկուսի հաղորդակցվելու հնարավորությամբ: Բացի այդ, գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով Օրենքն ամրագրում է, որ Պաշտպանի կամ նրա ներկայացուցիչների՝ այդ անձանց հետ խոսակցությունները ենթակա չեն միջամտության և գաղտնալսման:

Ձինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը կարևորվում է հիմնականում նրանով, որ շատ հաճախ զինվորական գաղտնիության ռեժիմի անվան տակ է՛լ ավելի են մեծանում մարդու իրավունքների խախտման ռիսկայնությունն ու հավանականությունը:

2004 թվականից ի վեր Պաշտպանն իր տարեկան զեկույցներում բազմիցս անդրադարձել է ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանվածությանն առնչվող մի շարք պրոբլեմներին: Իսկ 2008 և 2009 թթ. տարեկան զեկույցներում ներկայացվել են դրանց համակարգային լուծմանն ուղղված առաջարկություններ:

Ձինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում Պաշտպանի գործունեությունն ուղղված է իրավասու պետական պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններից զինծառայողների (ներառյալ սպայական, ենթասպայական և բարձրագույն հրամանատարական կազմը) իրավունքների և ազատությունների պաշտպանությանը, ինչպես նաև նրանց խախտված իրավունքների վերականգնմանն ուղղությամբ կոնկրետ միջոցների ձեռնարկմանը, այդ թվում՝ զինծառայողների շրջանում հանրային իրազեկմանն ուղղված ակտիվ աշխատանքների իրականացմանը:

Իր գործունեությունն իրականացնելու համար Պաշտպանը դիմում է նաև միջազգային հեղինակավոր կազմակերպությունների աջակցությանը. կազմակերպվում են ոլորտում առկա պրոբլեմների շուրջ համատեղ քննարկումներ, կատարվում է փորձի փոխանակում տարբեր պետությունների գործընկերների հետ:

Ձինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության գործին ակտիվորեն է մասնակցում ԵԱՀԿ երևանյան գրասենյակը, որի հետ ստորագրված փոխըմբռնման հուշագրում ամրագրված է, որ ԵԱՀԿ-ն փորձագիտական օժանդակություն է ցուցաբերելու Պաշտպանի աշխատակազմին⁶⁷:

Իր գործունեության ընթացքում Պաշտպանը զինծառայողների իրավունքների պաշտպանությունը մշտապես իրականացրել է երկու ձևով՝ դիմում-բողոքների (ներառյալ գրավոր և բանավոր) հիման վրա և իր նախաձեռնությամբ զինվորական ստորաբաժանումներ այցելություններ իրականացնելու միջոցով: Բացի այդ, Պաշտպանը ՀՀ պաշտպանության նախարարության մշակված օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացրել է դիտողություններ և առաջարկություններ: Վերջինիս այս լիազորությունն ամրագրված է ՀՀ Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի «ՀՀ Կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ

⁶⁷ Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցը «2009 թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման մասին», էջ 146 (www.ombuds.am):

մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» հմ. ՆՀ-174-Ն հրամանագրում: Համաձայն նշված կարգի 42-րդ կետի՝ մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող օրենքների նախագծերը նախքան կառավարություն ներկայացնելն ուղարկվում են Հաստատման Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին՝ կարծիքի:

Սա նշանակում է, որ օրենսդրական գործընթացին Պաշտպանի մասնակցությունը ոչ թե իրավասու մարմնի ցանկությունն է, այլ պարտականությունը:

Իհարկե, վերը թվարկված լիազորությունները դիսպոզիտիվ բնույթ են կրում և նկատի ունեն յուրաքանչյուր դեպքի համար զինծառայողների իրավունքների պաշտպանության վերը նշված ձևերից որևէ մեկի կիրառումը այն ժամանակ, երբ կա այդպիսի անհրաժեշտություն: Պաշտպանի գործառույթներն ու նրա առջև դրված խնդիրների լուծման իրավական բովանդակությունը անհրաժեշտ է քննարկել այն ծավալով, որը վերաբերում է ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում Պաշտպանի գործունեությանն ու դերին:

Սահմանադրության 8.2-րդ հոդվածի համաձայն՝ «Ձինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո»: Ասվածն ուղղակիորեն կապված է Պաշտպանի իրավական կարգավիճակի հետ. այս ինստիտուտի մանդատի հրամայականը ապաքաղաքականացված լինելն է, հետևաբար՝ Պաշտպանը, չլինելով այս կամ այն քաղաքական ուժի ներկայացուցիչ, ունի զինված ուժերում զինծառայողների իրավունքների պաշտպանության բոլոր պրոբլեմները օբյեկտիվորեն քննարկման առարկա դարձնելու ավելի լայն հնարավորություններ: Ընդ որում, խոսքը վերաբերում է ինչպես շարքային, այնպես էլ սպայական, ենթասպայական և բարձրագույն հրամանատարական կազմին, այսինքն՝ Պաշտպանի ուշադրության կենտրոնում է գտնվում ոչ միայն պարտադիր ժամկետային զինծառայողը, այլև այն սպան, որի՝ որպես քաղաքացու իրավունքները խախտել են նրա վերադաս հրամանատարները:

ՀՀ զինված ուժերի քաղաքացիական վերահսկողության ներքո գտնվելու ապացույց է ոչ միայն Պաշտպանի կամ նրա ներկայացուցիչների մուտքը այդ կառույց. դրա հնարավորությունն ունեն մաև մի շարք իրավապաշտպան հասարակական կազմակերպություններ:

Պաշտպանի գործունեության մեջ առանձնահատուկ տեղ է հատկացվում զինծառայողների իրավունքների պաշտպանության պրոբլեմներին, ինչը փաստում է, որ զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը բարդ և բազմակողմանի գործընթաց է, որում պետք է ներգրավվեն ոչ միայն զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը, գորամասերի հրամանատարները, այլև ամբողջ հասարակությունը և պետությունը՝ ի դեմս իր բոլոր ինստիտուտների:

Լինելով անկախ և անփոփոխելի մարմին՝ Պաշտպանն իր լիազորությունների շրջանակներում զինծառայողների իրավունքների պաշտպանությունն իրականացնում է հետևյալ եղանակներով՝

ա) զինծառայողների իրավունքների խախտման փաստերի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ մուտքագրված դիմում-բողոքների քննարկման,

բ) զինծառայողների իրավունքների խախտման փաստերի վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում (ՁԼՄ-ների, այլ անձանց ահազանգերի միջոցով և այլն) մնան իրավիճակներին արագ արձագանքելու և Պաշտպանի նախաձեռնությամբ գործի քննություն անցկացնելու,

գ) զինծառայողների իրավունքների հնարավոր խախտումները կանխարգելելու նպատակով զինվորական տարբեր մասեր և ստորաբաժանումներ պարբերաբար այցելություններ կատարելու, դրանցում առկա խնդիրները վեր հանելու և իրավասու մարմինների ուշադրությունը դրանց լուծմանը կենտրոնացնելու,

դ) զինծառայողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ հանդիպումներ կազմակերպելու և ոլորտի հիմնախնդիրները մաև հասարակական սեկտորի տեսակետից ուսումնասիրելու ու դրանց արձագանքելու:

Բացի այդ, 2007 թվականից Պաշտպանը ձեռնամուխ է եղել զինծառայողների իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրության ուսումնասիրմանը և դրա կատարելագործմանն ուղղված կոնկրետ առաջարկների մշակման շարունակական գործընթացի ապահովմանը: Նման ուսումնասիրության արդյունք է Պաշտպանի՝ 2009 թ. հրապարակված «Մարդու իրավունքների պաշտպանությունը ՀՀ զինված ուժերում կարգապահական քաղաքականություն իրականացնելիս» արտահերթ հրապարակային զեկույցը, որը պատրաստել էր ԵԱՀԿ երևանյան գրասենյակի և Պաշտպանի աշխատակազմի համատեղ աշխատանքային խումբը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ բողոքում քարճրացված հարցերի ուսումնասիրման նպատակով Պաշտպանն իրավասու է՝

- անարգել այցելել ցանկացած պետական հիմնարկ կամ կազմակերպություն, ներառյալ՝ զորամիավորումներ, անձանց հարկադրական պահման վայրեր, այդ թվում՝ նախնական կալանքի և ազատագրված վայրեր,
- ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջել և ստանալ բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր,
- պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից կամ դրանց պաշտոնատար անձանցից և պետական ծառայողներից ստանալ բողոքի ուսումնասիրման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ,
- իրավասու պետական մարմիններին հանձնարարել բողոքի ուսումնասիրության ընթացքում պարզելու ենթակա հարցերի վերաբերյալ անցկացնել փորձագիտական հետազոտություններ և պատրաստել եզրակացություններ,
- ծանոթանալ քրեական, քաղաքացիական, վարչական, կարգապահական, տնտեսական և այլ իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ դատավճիռները, վճիռները, որոշումներն օրինական ուժի մեջ են մտել,
- ծանոթանալ բողոքին առնչվող ցանկացած նյութի և փաստաթղթի:

Օրենքի 12-րդ հոդվածով, մասնավորապես՝ դրա 1-ին մասի 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված լիազորությունները Պաշտպանի գրավոր որոշմամբ կարող են իրականացնել նաև Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցները կամ փորձագետների խորհրդի անդամները:

Պաշտպանը, որպես կանոն, իր լիազորություններն իրականացնում է բողոքի հիման վրա, սակայն նա իրավասու է նաև իր նախաձեռնությամբ սկսել հարցի քննարկումը, հատկապես այն դեպքերում, երբ տեղեկություն կա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ հարցն ունի բացառիկ հասարակական նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն օգտագործելու իրենց պաշտպանության իրավական միջոցները:

Սրանք հիմնականում այն դեպքերն են, երբ մամուլում հրապարակված նյութը վերաբերում է իրավունքների խախտմանը կամ զինծառայողների, կալանավորների և դատապարտյալների իրավունքների խախտման վերաբերյալ տեղեկություններին: Ընդ որում, սկսած 2004 թ., Պաշտպանի նախաձեռնությամբ սկսված հարցերի քննարկումները հաճախակիացել են⁶⁸:

Անհրաժեշտ է նշել, որ Պաշտպանի նախաձեռնությամբ սկսված հարցի քննարկման մասին իրազեկվում է ինչպես «տուժող» անձը, այնպես էլ հասարակությունը՝ մամուլի միջոցով:

⁶⁸ Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի քաղաքացիների ընդունելության և նամակների բաժնի արխիվ:

Իհարկե, Պաշտպանի նախաձեռնությամբ քննարկվում են հասարակական հնչեղություն ստացած հարցերը, կամ եթե Պաշտպանը տեղեկություն ունի կատարված կամ կատարվելիք իրավունքի խախտման մասին, սակայն «տուժողը»^{*} հնարավորություն չունի Պաշտպանին դիմելու կամ առհասարակ տեղյակ չէ այս ինստիտուտի գոյության մասին:

Պաշտպանի նախաձեռնությամբ հարցի քննարկումը սկսվում է այն պահից, երբ ստացվում է համապատասխան տեղեկություն: Ընդ որում, շատ դեպքերում արագ արձագանքելու և կատարված իրավախախտման տեղում նախապես լինելու անհրաժեշտություն է առաջանում: Օրինակ, եթե ստացվել է տեղեկություն, որ սպան ծեծել է զինծառայողին, ապա Պաշտպանի հանձնարարությամբ նրա ներկայացուցիչները կարող են այցելել այն գորամաս, որտեղ գտնվում է զինծառայողը: Ընդ որում, գործող օրենքի համաձայն՝ Պաշտպանի ներկայացուցիչներն իրավունք ունեն առանձնազրույց ունենալու զինծառայողի հետ, արձանագրելու մարմնի վրա եղած կապտուկներն ու քերծվածքները, եթե այդպիսիք կան, և արդյունքները գրավոր ներկայացնելու Պաշտպանին: Այնուհետև, Պաշտպանն իրավասու է պաշտոնական նամակներով դիմելու համապատասխան մարմիններին՝ առաջարկելով պարզաբանումներ տալ նշված հարցերի կապակցությամբ կամ անցկացնել համապատասխան քննություն՝ մեղավորներին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու համար:

Պաշտպանի գործունեության ուղղություններից է մարդու (խախտված–ընդգծումը՝ Ռ. Մ.-ի) իրավունքների վերականգնումը:

Պաշտպանի կողմից դիմում-բողոքը քննարկման ընդունվելուց հետո կատարվում են օրենքով սահմանված մի շարք գործողություններ: Ընդ որում, բողոքի քննարկման արդյունքները քննարկման ավարտից հետո՝ տասնօրյա ժամկետում, հանձնվում են այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումը կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են: Վերջինս պարտավոր է իր դիրքորոշումն ու պարզաբանումները Պաշտպանին ուղարկել ուսումնասիրության արդյունքները ստանալուց հետո ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում, սակայն երբեմն Պաշտպանը կարող է երկարաձգել այդ ժամկետը:

Շատ պետություններում քննարկմամբ ընդունված որոշումների հիման վրա կատարված ուսումնասիրությունը կոչվում է «հետաքննության անցկացում»: Պաշտպանի՝ մարդու իրավունքների վերականգնմանն ուղղված ներգործության հիմնական միջոցը խորհրդատվական բնույթի գրավոր որոշում կայացնելն է: Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պաշտպանը պարտավոր է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.

ա) առաջարկել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումների կամ գործողությունների (անգործության) մեջ Պաշտպանը տեսնում է մարդու իրավունքների և ազատությունների խախտում, վերացնելու թույլ տրված խախտումները՝ նշելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերականգնման համար անհրաժեշտ և կատարման ենթակա հնարավոր միջոցառումները^{*},

բ) մարդու իրավունքների և ազատությունների խախտման բացակայության մասին, եթե բողոքի քննարկման ընթացքում չի բացահայտվել պետական կամ տեղական ինքնակառավարման

^{*} «Տուժող» տերմինն օգտագործվել է այն անձի վերաբերյալ, որի իրավունքների խախտմանն է վերաբերում տեղեկատվությունը:

^{*} Այս տեսակի որոշումների անվանումը հակիրճ ձևակերպելու նպատակով Պաշտպանի աշխատակազմում դրանք վերնագրվում են «խախտում հայտնաբերելու և այն կատարած պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու առաջարկ ներկայացնելու մասին» անվանմամբ:

մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում,

գ) օրենքով նախատեսված հիմքերով բողոքի քննարկումը դադարեցնելու մասին, եթե բողոքի քննարկման ընթացքում բացահայտվել են բողոքը չքննարկելու կամ քննարկումը դադարեցնելու վերաբերյալ հիմքեր»** ,

դ) մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները խախտող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի և դրա պաշտոնատար անձի՝ օրենքին և այլ իրավական ակտերին հակասող նորմատիվ իրավական ակտերն ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր ճանաչելու վերաբերյալ դատական հայց ներկայացնելու մասին, եթե խախտում թույլ տված պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար անձը սահմանված ժամկետում ամբողջովին կամ մասնակիորեն անվավեր չի ճանաչում իր համապատասխան իրավական ակտը:

Մարդու խախտված իրավունքների վերականգնմանն ուղղված գործունեության (ներգործության – ընդգծումը՝ Ռ. Մ.-ի) տեսակ է նաև Օրենքի 16-րդ հոդվածի համաձայն մարդու իրավունքների և ազատությունների մասին տեղեկատվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքների ամփոփման նպատակով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու դրանց պաշտոնատար անձանց խորհրդատվական բնույթի պարզաբանումներ և առաջարկություններ ներկայացնելը: Հարկ է նշել, որ Պաշտպանն այս ներգործության միջոցը սկսել է կիրառել 2004 թվականից:

Քանի որ Պաշտպանը չունի վարչական ներգործության որևէ իրավասություն, հանրային կառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց մոտ ի սկզբանե եղել է այն նախապաշարմունքը, որ Պաշտպանի կողմից իրենց ուղղված առաջարկը կամ իրենց հասցեին արված քննադատությունը կարող է անտեսվել, թողնվել անպատասխան և քննադատվողի համար հետևանք չունենալ:

Նման նախապաշարմունքների ու կարծրատիպերի հաղթահարմանն է ուղղված Պաշտպանի առօրյա աշխատանքը՝ նպատակ ունենալով ձևավորելու և ամրապնդելու այն համոզմունքը, որ Պաշտպանը, չլինելով իշխանության որևէ թևի բաղկացուցիչ մաս, պետականորեն լիազորված է մարդու իրավունքներին առնչվող հարցերում գնահատականներ տալու հանրային մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության վերաբերյալ, և Պաշտպանի առաջարկները ենթակա են պարտադիր կատարման, իսկ չկատարողը պարտավոր է իր անհամաձայնությունը հիմնավորել բացառապես մարդու իրավունքների ոլորտում միջազգային սկզբունքների ու նորմերի շրջանակներում:

Զինձառայողների իրավունքների հնարավոր խախտումները կանխարգելելու նպատակով Պաշտպանի հանձնարարությամբ ստեղծված աշխատանքային խմբերը նախապես հաստատված գրաֆիկի համաձայն այցելում են հանրապետության գրեթե ողջ մարզերի տարածքում տեղակայված զորամասեր: Այցի նպատակը ինչպես դիմում-բողոքների վերաբերյալ տեղում որոշ հարցերի պարզաբանումը, այնպես էլ Պաշտպանի նախաձեռնությամբ մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ ուսումնասիրություններ իրականացնելն է, մասնավորապես՝ զինձառայողների կենցա-

** Մեր կարծիքով՝ Պաշտպանի այս տեսակի որոշման օրենսդրական ամրագրման անհրաժեշտության թելադրանքով Օրենքում կատարված այս լրացումն անորոշ է: Պարզ չէ, թե որոնք են բողոքի քննարկումը դադարեցնելու հիմքերը: Մեր պատկերացմամբ, այդպիսիք են իրավունքի խախտման փաստը բացահայտելու բոլոր միջոցների սպառման, իր բողոքի հետագա քննարկումը դադարեցնելու մասին դիմումատուի կողմից լրացուցիչ դիմում ներկայացնելու և նմանաբնույթ այլ դեպքերը:

դային և սանիտարահիգիենիկ պայմաններին ծանոթանալը, նրանց հետ իրենց իրավունքների վերաբերյալ առանձնագրույցներ ունենալն ու իրավաբանական խորհրդատվություն տրամադրելը: Բացի դրանից՝ աշխատանքային խմբի ուշադրության կենտրոնում է իրավահավասարության, խտրականության արգելքի և այլ սկզբունքների պահպանումը: Ընդ որում, հարցերի ու խնդիրների մասին կարող են բարձրաձայնել ոչ միայն պարտադիր ժամկետային զինծառայողները, այլև սպաները: Իրավակիրառական պրակտիկան ցույց է տալիս, որ բազմաթիվ խախտումներ հայտնաբերվում են հենց նմանատիպ այցելությունների ընթացքում: Ուսումնասիրության արդյունքները գրավոր, ամփոփ կերպով ներկայացվում են Պաշտպանին, որից հետո վերջինս ձեռնամուխ է լինում զինծառայողների իրավունքների պաշտպանությանը՝ միաժամանակ իրավասու պետական մարմինների ուշադրությունը հրավիրելով այդ խնդիրների վրա՝ առաջարկելով լուծման իրավական կոնկրետ ուղիներ: Այնուամենայնիվ, Պաշտպանի կարծիքով ՀՀ զինված ուժերում նախորդ տարիներին սկիզբ առած և դեռևս չլուծված պրոբլեմներից հիշարժան է հետևյալը⁶⁹. ապագա զինծառայողների իրավագիտակցության պատշաճ մակարդակը անհասանելի է մնում, մինչդեռ դրա ապահովման համար իրավասու պետական մարմինները պետք է համապատասխան գործունեություն ծավալեն դեռևս դպրոցական շրջանում: Պաշտպանի կարծիքով՝ այստեղ մեծ անելիքներ ունեն ինչպես կրթության ոլորտի պատասխանատուները, այնպես էլ տարածքային զինկոմիսարիատները, որոնց պատշաճ հսկողության դեպքում արդյունավետ կլինեն դպրոցներում դասավանդվող թե՛ ռազմագիտություն և թե՛ իրավագիտություն առարկաները: Կարևորելով այս խնդիրը՝ Պաշտպանը և/կամ աշխատակազմի աշխատակիցները տարբեր գործառնաբեր կազմակերպած այցելությունների ընթացքում, զինծառայողների հետ ունեցած առանձնագրույցից բացի, նրանց ներկայացնում են նաև զինծառայությանը և զինակոչիկների իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրության դրույթները:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության արդյունավետությունն ապահովելու նպատակով մշտապես կարևորվում է այն հանգամանքը, թե որքանով է Պաշտպանը համագործակցում իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հետ: Նշվածը հիմնավորվում է նաև նրանով, որ հասարակական կազմակերպությունները, ավելի մոտ կանգնած լինելով բնակչությանը, մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ տեղեկություն ստանալու, հետևաբար և դրանք նաև Պաշտպանին փոխանցելու հնարավորություն ունեն: Այդ առումով, Պաշտպանն իր բոլոր մարզային այցելություններն սկսում է տեղական հասարակական կազմակերպությունների հետ հանդիպումներով և, նրանցից ստանալով նաև լրացուցիչ տեղեկություններ, դրանք հետագայում քննարկման առարկա է դարձնում տեղական իշխանությունների հետ: Իհարկե, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում նման հասարակական կազմակերպություններն այնքան էլ շատ չեն, այնուամենայնիվ, իր ամբողջ գործունեության ընթացքում Պաշտպանը սերտորեն համագործակցում է այդպիսի կազմակերպությունների հետ: Երբեմն զինծառայողների իրավունքների խախտման մասին տեղեկությունը Պաշտպանին հասանելի է դառնում հենց դրանց միջոցով:

Տեղեկությունը աշխատակազմում պատշաճ կերպով ձևակերպելուց հետո սկսվում է հարցի քննարկումը Օրենքի շրջանակներում:

⁶⁹ Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2009 թ. տարեկան զեկույցի «Զինակոչիկների և զինծառայողների իրավունքներ» բաժինը, էջ 148 (www.ombuds.am):

Պաշտպանն Օրենքով իրեն վերապահված լիազորություններն իրականացնում է ակտեր ընդունելու միջոցով: Դրանք, մեր կարծիքով, երեք տեսակի են՝ 1) որոշում, 2) առաջարկություն և 3) զեկույց:

Որոշումը վերաբերում է Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքի ընդունելիությանը, ինչպես նաև կատարված ուսումնասիրության հիման վրա կատարված հետևություններին:

Առաջարկությունը Պաշտպանն ընդունում է մարդու իրավունքների և ազատությունների մասին տեղեկատվության արդյունքների հիման վրա՝ ուսումնասիրության արդյունքների ամփոփման նպատակով պետական մարմիններին ու դրանց պաշտոնատար անձանց խորհրդատվական բնույթի պարզաբանումներ ուղարկելու ձևով:

Չեկույցը մարդու իրավունքների և ազատությունների խախտման վիճակի վերաբերյալ ուսումնասիրության ամբողջական արդյունքների, ինչպես նաև Պաշտպանի գործունեության ամփոփ ներկայացումն է: Չեկույցները լինում են տարեկան (պարտադիր) և արտահերթ:

Տարեկան կամ, այլ կերպ ասած, պարտադիր զեկույցը յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Պաշտպանը ներկայացնում է Օրենքով թվարկված պետական իշխանության մարմիններին, իսկ զարմանալին նստաշրջանի ընթացքում՝ նաև Ազգային ժողով: Պաշտպանը կարող է հանդես գալ արտահերթ հրապարակալի կամ հատուկ զեկույցներով հասարակական հնչեղություն ունեցող առանձին հարցերի վերաբերյալ կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների, ինչպես նաև խախտումները զանգվածաբար չվերացնելու դեպքերում⁷⁰:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ Պաշտպանի ակտերի հստակ տարանջատում գոյություն չունի: Դրանք բոլորն էլ ունեն ինչպես խորհրդատվական, այնպես էլ բարոյական բնույթ, հետևաբար չեն կարող հանգեցնել մեղավոր պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելուն:

Հակառակ դրան՝ Վ. Այվազյանը կարծում է, որ Օրենքը Պաշտպանին լիազորում է իրականացնել մի շարք գործողություններ, որոնք կարող են նպաստել նրա որոշումների կատարմանը⁷¹: Մասնավորապես, Պաշտպանը անհրաժեշտության դեպքում իր գործունեության վերաբերյալ հատուկ զեկույց է ներկայացնում ՀՀ Նախագահին և Ազգային ժողով՝ այս կերպ նրանց ևս ներգրավելով մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործում:

Պաշտպանի՝ խորհրդատվական բնույթ ունեցող ակտերի կատարման արդյունավետությունը կարող է մեծանալ նաև Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի ուժով, որի համաձայն՝ նա կարող է զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել իր միջնորդությանը չպատասխանած կամ միջնորդության պահանջները չկատարած կամ անբավարար կատարած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց վերաբերյալ՝ վերջիններիս պատասխանների հետ միասին, եթե սպառվել են Պաշտպանի՝ պետական մարմիններում պրոբլեմը լուծելու բոլոր հնարավորությունները:

Ե՛վ նշված հոդվածի բովանդակության, և՛ միջազգային փորձի վերլուծությունը հիմք են տալիս հանգելու հետևյալին. թեև Պաշտպանի ակտերը (որոշումները) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց համար պարտադիր իրավաբանական ուժ չունեն, այնուամենայնիվ, այդ ակտերը ներկայացնում են նշված մարմինների ու պաշտոնատար անձանց գործելաոճն ու բարոյական կերպարը և հանրային կարծիք են ձևավորում նրանց գործունեության վերաբերյալ, ինչը կարող է մեծ վնաս հասցնել իրավախախտ մարմինների ու

⁷⁰ Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը:

⁷¹ Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ պարզաբանումներ, հեղինակ՝ Վ. Ն. Այվազյան, խմբագիր՝ Ռ. Գ. Պետրոսյան, Երևան 2004 թ., էջ 27:

դրանց պաշտոնատար անձանց հեղինակությանն ու վարկին: Իսկ տարեկան զեկույցն էլ, իր հերթին, առկա հիմնախնդիրների լուծման վրա է կենտրոնացնում ոչ միայն պետական իշխանության մարմինների, այլև ամբողջ հանրության ուշադրությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ, մեկ անգամ ևս կարող ենք փաստել, որ Պաշտպանի ինստիտուտը ոչ թե լրացուցիչ, այլ այլընտրանքային միջոց է մարդու իրավունքների պետական պաշտպանության համակարգում⁷²:

Մեր կարծիքով՝ Պաշտպանի իրավական կարգավիճակի ինքնուրույնությունը և իշխանության մյուս թևերից անկախ լինելն արտացոլելու նպատակով Պաշտպանի մասին օրենսդրության մեջ կարելի է ձևակերպել առանձին դրույթ, ինչի փորձն արդեն ունեն Ուկրաինան, Ռուսաստանի Դաշնությունը և այլ պետություններ⁷³:

⁷² Այդ մասին տե՛ս նաև Хаманаева Н.Ю., Специфика правового статуса Уполномоченного по правам человека в Российской Федерации и проблемы законодательного регулирования его деятельности //Государства и права, 2007, И9, с 22:

⁷³ Տե՛ս «Մարդու իրավունքների լիազորի մասին» Ուկրաինայի օրենքի 4-րդ հոդվածը: Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմեն) ազգային հաստատություններ, (Սահմանադրական օրենսդրական ակտերի ժողովածու), կազմողներ՝ Լ. Հակոբյան, Գ. Հովհաննիսյան, Երևան, «Նժար» 2005թ., էջ 237: Տե՛ս նաև Федеральный Конституционный закон от 26.02.97, И1-ФКЗ "Об Уполномоченном по правам человека в Российской Федерации" //Собрание законодательства РФ, 1997, И9, с 1011: Российская газета, 1997, И43, с 44:

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ**

ՄՀԵՐ ՓԱՐՎԱՆՅԱՆՆԵՐ⁷⁴

Ժողովրդավարության հիմքը մարդու արժանապատվության, ազատության և հիմնարար իրավունքների գերակայությունն է, մեծամասնության շահերի և կարծիքի գերակայությունը փոքրամասնության նկատմամբ:

Ժողովրդավարության հիմնական գրավականներից է ժողովրդի կամքի նկատմամբ ցանկացած ուժի, այդ թվում՝ ազգային բանակի, հնարավոր ոտնձգության բացառումը կամ այդպիսի ռիսկերի նվազեցումը:

Պատմությունը ցույց է տալիս, որ ժողովրդին պաշտպանելու կոչված ազգային բանակը որոշակի հանգամանքներում կարող է դառնալ այդ ժողովրդի դեմ ուղղված ամենախրական սպառնալիք: Դրա բացառման գլխավոր նախապայմաններից է զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը, որը ընդհանուր առմամբ կարելի է սահմանել որպես զինված մարդկանց կողմից չզինված մարդկանց «հրամանների» կատարում:

Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ձևերից մեկը զինված ուժերի կառավարման գործընթացում հասարակության ուղղակի ներգրավածությունն է, որի նպատակը հակակշիռների և զսպումների մեխանիզմներ պարունակող համակարգի գործադրման միջոցով զինված ուժերն այլ նպատակներով օգտագործելու բացառումն է:

Որպես այդպիսին՝ ՀՀ-ում կիրառվում է պետական ծառայության մաս կազմող քաղաքացիական հատուկ ծառայության համակարգը, որը կոչված է պաշտպանական ոլորտի կառավարման համակարգում պաշտպանության իրականացման և պաշտպանության իրականացման ապահովման՝ բնույթով իրարից էականորեն տարբերվող գործառույթների կազմակերպական-կառուցվածքային և մասնագիտական տարանջատման միջոցով ապահովելու դրանց արդյունավետության բարձրացումն ու վերահսկելիությունը: Դա ենթադրում է պաշտպանության նախարարության կազմակերպական-կառուցվածքային տարանջատում գորային կառույցից (գործեր և գլխավոր շտաբ), ինչպես նաև զինվորականության և քաղաքացիական ծառայողների դասերի տարանջատում ըստ ռազմական և ոչ ռազմական գործունեության, ինչը կնպաստի ոչ միայն վերջիններից յուրաքանչյուրի մասնագիտական մակարդակի բարձրացմանը, այլև զինվորականության կողմից հնարավոր չարաշահումների բացառման հակակշիռների ստեղծմանը:

Հետևաբար, քաղաքացիական ծառայության համակարգի ներդրումը պաշտպանության բնագավառում միտված է լուծելու ազգային անվտանգային երկու կարևոր խնդիր. առաջինը զինված ուժերը որպես ազգային անվտանգության դեմ ուղղված ներքին սպառնալիք դառնալու հավանականության բացառումը կամ նվազարկումն է, իսկ երկրորդը զինված ուժերի՝ որպես ազգային անվտանգության դեմ ուղղված արտաքին սպառնալիքներին դիմակայող հիմնական և գլխավոր օղակի գործունեության արդյունավետության բարձրացումն է:

Սույն հոդվածում կքննարկվի քաղաքացիական հատուկ ծառայությունը՝ որպես զինված ուժերը ազգային անվտանգության դեմ ուղղված ներքին սպառնալիք դառնալու հավանականության բացառման կամ նվազարկման գործոն:

⁷⁴ ՀՀ ՊՆ Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ֆինանսական մասի պետ

Քաղաքացիական ծառայությունը կարելի է բնութագրել հետևյալ փոխկապակցված սահմանումներով⁷⁵.

- պետական ինստիտուտների և կառավարման համակարգի կատարելագործման մեխանիզմ,
- պետական իշխանության և պետական կառավարման իրականացման գործիք,
- պետության, քաղաքացիական հասարակության և անհատի միջև հարաբերությունների իրացման միջոց և ձև,
- հասարակական-իրավական հարաբերությունների ամբողջություն քաղաքացու՝ որպես աշխատողի և պետության՝ որպես գործատուի միջև:

«Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ Օրենք) համաձայն՝ քաղաքացիական հատուկ ծառայությունը քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխությունից անկախ մասնագիտական գործունեություն է⁷⁶: Քաղաքացիական հատուկ ծառայության՝ որպես զինված ուժերի նկատմամբ վերահսկողության ձևերից մեկի դիտարկումը անհրաժեշտ է կատարել երկու ուղղությամբ. քաղաքացիական հատուկ ծառայության համակարգի՝ հակակշիռների միջոցով ժողովրդավարական արդյունավետ վերահսկողության իրականացման հնարավորության և այդ համակարգի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության արդյունավետության:

Առաջին՝ հակակշիռների միջոցով ժողովրդավարական արդյունավետ վերահսկողության իրականացման հնարավորության ուղղությամբ դիտարկումը կատարենք քաղաքացիական հատուկ ծառայության համակարգի պաշտպանվածության և արդյունավետորեն գործելու հնարավորության համատեքստում:

Համակարգի պաշտպանվածությունը ֆորմալ և ոչ ֆորմալ ճնշումներից նրա զերծ մնալու հնարավորությունն է, ինչը պայմանավորված է քաղաքացիական հատուկ ծառայողի իրավական երաշխիքներով և դրանց խոցելիության աստիճանով:

Այդ երաշխիքների ապահովման մասնապայմանները քաղաքացիական հատուկ ծառայության՝ Օրենքով սահմանված հիմնական սկզբունքներն են, որոնցից կարելի է նշել.

- քաղաքացիական հատուկ ծառայության կայունությունը,
- քաղաքացիական ծառայողներին ներկայացվող հիմնական պահանջների միասնականությունը և օրենքի առջև քաղաքացիական ծառայողների իրավահավասարությունը,
- քաղաքացիական ծառայողների իրավական և սոցիալական պաշտպանվածությունը:

Քաղաքացիական ծառայողի երաշխիքների կամ դրանց ապահովման պայմանների՝ Օրենքով սահմանված համախումբը, ինչպես նաև քաղաքացիական ծառայողի՝ որպես մարդու և քաղաքացու այլ իրավունքներն ու ազատությունները ընդհանուր առմամբ ապահովում են քաղաքացիական հատուկ ծառայության համակարգի բավարար պաշտպանվածությունը:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ քաղաքացիական ծառայողի երաշխիքները կամ դրանց ապահովման պայմանները միշտ չէ, որ բացառում են սուբյեկտիվ գործոնի դերը, որը կարող է հանգեցնել նաև խտրականության դրսևորումների:

Մասնավորապես՝ Օրենքի 32-րդ հոդվածով խրախուսանքի ներկայացումը վերապահված է համապատասխան ղեկավարներին, մինչդեռ հայեցողականության և սուբյեկտիվիզմի նվազարկման

⁷⁵ *Տե՛ս* В. В. Черепанов, В. П. Иванов. Основы государственной службы и кадровой политики. ЮНИТИ-ДАНА, Закон и право, М; 2008, сс. 57-73:

⁷⁶ Տե՛ս «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՀ 2007 թվականի նոյեմբերի 28-ի հմ. ՀՕ-286-Ն օրենք, ՀՀ ՊՏ 2007/66(590):

նպատակով կարելի էր դա անել կարգապահական տույժ տալու գործընթացի նմանությամբ՝ ծառայողական քննության արդյունքների հիման վրա: Չէ՞ որ անարդարացի խրախուսումը կարող է վերածվել մյուս քաղաքացիական ծառայողներին ճնշելու և նրանց նկատմամբ խտրական վերաբերմունքի գործիքի:

Որոշակի խնդրահարույց է նաև Օրենքի 21-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով գործուղման դեպքում քաղաքացիական ծառայողի վարձատրության պահպանումը նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (մարմնի) հայեցողությանը թողնելը: Մեր կարծիքով՝ քաղաքացիական ծառայողի վարձատրությունը պետք է բոլոր դեպքերում պահպանել:

Կարելի է եզրակացնել, որ քաղաքացիական ծառայողը իրավական տեսանկյունից հիմնականում պաշտպանված է : Սակայն այս համատեքստում հարկ է նաև քննարկել քաղաքացիական ծառայողի հնարավորությունը՝ լիարժեքորեն օգտվելու Օրենքով նախատեսված իր իրավունքներից : Այս հանգամանքը կարող են խոչընդոտել ղեկավար-ենթակա շղթայում միջանձնային հարաբերությունների բնույթը, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների մասնագիտական ոչ բավարար հատկանիշները:

Ղեկավար-ենթակա շղթայում միջանձնային հարաբերությունները պետք է կառուցված լինեն մասնագիտական պարտականությունների և լիազորությունների շրջանակում: Այս առումով որոշակի խոչընդոտ է նախկին զինծառայողների անցումը քաղաքացիական ծառայության համակարգ: Բանն այն է, որ նույն ստորաբաժանումը նույն կազմով զինվորական ծառայության համակարգից քաղաքացիականի անցնելու պարագայում դեռևս երկար ժամանակ պահպանվելու են կորպորատիվ և միջանձնային սոցիալ-հոգեբանական կապերը, հարաբերությունները, կախվածությունները: Ուստի նման ստորաբաժանումն ամբողջովին չի կարող կայանալ որպես քաղաքացիական կառույց, քանի որ զգալիորեն կպահպանի զինվորական կոլեկտիվի տարրերը: Տարիներ շարունակ նույն մարդուն որպես զինվորական պետ ընդունած և նրա հրամանները որպես զինվորականներ կատարած ենթակաների համար քաղաքացիականի վերածված այդ ստորաբաժանման նույն ղեկավարը հաճախ կարող է իներցիայով ընկալվել որպես քաղաքացիական հագուստով զինվորական հրամանատար՝ այդտեղից բխող հետևանքներով:

Մասնագիտական ոչ բավարար հատկանիշները կարող են խոչընդոտ դառնալ այն առումով, որ քաղաքացիական ծառայողը, որը չունի իր պաշտոնեական պարտականություններին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ և հմտություններ, կարող է ենթարկվել ոչ միայն ղեկավարի, այլև գործընկերների ճնշումներին:

Քաղաքացիական հատուկ ծառայության՝ որպես ժողովրդավարական վերահսկողության միջոցի արդյունավետությունը որոշվում է այդ համակարգի՝ ժողովրդավարական վերահսկողության հայեցակարգային խնդիրները լուծելու հնարավորությամբ: Այդ տեսակետից արդյունավետությունը գնահատելիս անհրաժեշտ է դիտարկել քաղաքացիական ծառայության համակարգի կազմակերպական կառուցվածքը, համակարգի կառավարման և կազմակերպման ձևն ու սկզբունքները, ինչպես նաև համակարգի՝ իր առջև դրված խնդիրները լուծելու մասնագիտական ներուժը:

Ժողովրդավարական վերահսկողության համատեքստում քաղաքացիական ծառայության համակարգի կազմակերպական կառուցվածքի քննարկումը միտված է բացահայտելու այդ տարրի ներգրավվածության աստիճանը այն ոլորտներում, որոնք առնչվում են ժողովրդավարական վերահսկողության հայեցակարգային խնդիրների լուծման հետ: Այդ խնդիրների շարքին կարելի է դասել՝

- զինված ուժերում ժողովրդավարական նորմերի և սկզբունքների պահպանումը,
- գործադիր և օրենսդիր իշխանության մարմինների պաշտպանությանն ուղղված պլանների մշակումը,
- հասարակությանը, պետական իշխանության այլ մարմիններին Սահմանադրությանը, միջազգային իրավունքի նորմերին, օրենսդրությանը համապատասխան զինված ուժերի գործունեության վերաբերյալ ընդհանրական տեղեկատվության տրամադրումը,
- ռեսուրսների ոչ ռացիոնալ ծախսի կանխարգելումը
- հոգուտ առանձին անհատների, սոցիալական խմբերի և կուսակցությունների շահերի զինված ուժերի օգտագործման հավանականության սահմանափակումը կամ կանխումը,
- մարդու իրավունքների խախտման դեպքերի բացառումը:

Կազմակերպական կառուցվածքի առումով ՀՀ պաշտպանության նախարարությունում խնդիրը լուծված է: Քաղաքացիական հատուկ ծառայությունը ներդրված է այն ստորաբաժանումներում (ֆինանսաբյուջետային, հասարակության հետ կապերի, պլանավորման, ռազմական կրթության, կադրային և այլն), որոնք անմիջականորեն չեն զբաղվում ռազմական գործունեությամբ, այլ առնչվում են ժողովրդավարական վերահսկողության վերը նշված խնդիրներին:

Ուստի հարկ է նաև ուսումնասիրել տվյալ ոլորտներում քաղաքացիական ծառայության համակարգի ներգրավվածության որակական կողմը, ինչը պայմանավորված է այդ համակարգի՝ խնդիրներ լուծելու և որոշումներ կայացնելու կարողությամբ ու հնարավորությամբ: Նշված ոլորտներում ուսումնասիրելով քաղաքացիական պաշտոններն ըստ մասնագիտական գործունեության, պատասխանատվության և լիազորությունների, դրանք կարող ենք դասակարգել ըստ հետևյալ ենթախմբերի՝

- ղեկավար գործունեություն, որևէ ստորաբաժանման կամ գործընթացի անմիջական ղեկավարում,
- օժանդակ գործունեություն, որը կոչված է հիմնականում մտավոր դաշտում ղեկավար պաշտոնյաների գործունեությանը աջակցելու,
- վարչա-կազմակերպական գործունեություն, որտեղ կատարվում են ռազմավարական բնույթի որոշումները, և ընդունվում են օպերատիվ բնույթի որոշումներ,
- ապահովման գործունեություն, որը կոչված է մի կողմից ապահովելու հենց ՊՆ ապարատի գործունեությունը, մյուս կողմից՝ հասարակության և բնակչության պահանջմունքների բավարարումը:

Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ ժողովրդավարական արդյունավետ վերահսկողություն իրականացնելու համար հայեցակարգային առումով ՊՆ-ում առկա է համապատասխան կազմակերպական կառուցվածք:

Ղեկավարման և կազմակերպման առումով՝ քաղաքացիական հատուկ ծառայության համակարգը քաղաքացիական ծառայության հայեցակարգային մոդելի* համեմատ ավելի կենտրոնացված, մասնավորապես՝ քաղաքացիական հատուկ ծառայության խորհրդի լիազորությունները հիմնականում վերապահված են պաշտպանության նախարարին:

Որակական մասնագիտական ներուժի առումով՝ համակարգի արդյունավետությունը գնահատելու համար այն պետք է դիտարկել քաղաքացիական ծառայողների՝ Օրենքով սահմանված

* Որպես հայեցակարգային մոդել ուսումնասիրվել է ՀՀ-ում քաղաքացիական ծառայությունը: Տե՛ս «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ 2001 թվականի դեկտեմբերի 4-ի հմ. ՀՕ-272 օրենք, ՀՀ ՊՏ 2002/1 (176):

պրոֆեսիոնալիզմի սկզբունքի պահպանման տեսակետից: Պրոֆեսիոնալիզմը գործատուի և աշխատանքային միջավայրի պահանջներն առավելագույնս բավարարելու աշխատողի ունակությունն է⁷⁷: Պրոֆեսիոնալիզմը ուղղակիորեն որոշում է տվյալ համակարգի առջև ծառայած խնդիրների լուծման որակական կողմը, ինչպես նաև քաղաքացիական ծառայողին օգնում է գերծ մնալու այլ ճնշումներից:

Պրոֆեսիոնալի և պրոֆեսիոնալիզմի հիմնական հատկանիշներ կարելի է համարել.

- պաշտոնական պարտականությունների պատշաճ կատարումը,
- կազմակերպության գործունեության սկզբունքները, նպատակները և խնդիրները պրոֆեսիոնալի աշխատանքային կերպարի գլխավոր հիմնասյուների վերածելը⁷⁸:

ՊՆ համակարգում քաղաքացիական հատուկ ծառայության համակարգի պրոֆեսիոնալիզմը խոչընդոտում են մի շարք հանգամանքներ:

Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնները հիմնականում համարվել են նախկին զինծառայողներով: Ըստ Օրենքի՝ նրանք ենթակա են պարտադիր ատեստավորման: Սակայն մրցույթով տվյալ պաշտոնի համար պահանջվող մասնագիտական ունակությունները և հմտությունները մասամբ չեն համապատասխանում ատեստավորման ընթացակարգին: Այսպես, մրցույթով որոշ պաշտոնների համար պահանջվում է օտար լեզվի իմացություն, որի համար քաղաքացիներկայացնում է հայտարարություն, մինչդեռ ատեստավորման կարգով քաղաքացիական հատուկ ծառայողից նման հայտարարություն չի պահանջվում⁷⁹, ինչի հետևանքով այդ պաշտոնին չհամապատասխանող անձր կարող է շարունակել զբաղեցնել այն:

Բացի այդ, ՀՀ կառավարության որոշմամբ՝ զինծառայության պաշտոնները քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոններին հավասարեցնելիս ենթասպայական պաշտոնները հավասարեցվել են քաղաքացիական հատուկ ծառայության կրտսեր պաշտոններին⁸⁰: «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ենթասպայական պաշտոններ կարող են զբաղեցնել նաև միջնակարգ կրթություն ունեցող անձինք⁸¹, մինչդեռ քաղաքացիական հատուկ ծառայողները, ըստ Օրենքի, պարտադիր պետք է ունենան բարձրագույն կրթություն:

Պրոֆեսիոնալիզմի բարձրացման առումով կարևորվում է կադրային քաղաքականության արդյունավետ ծրագրավորման համակարգի ներդրումը, որի նպատակն է մի կողմից ավելացնել և զարգացնել ծառայողի մասնագիտական հատկանիշները, ինչպես նաև համապատասխան պաշտոններում ճիշտ ընտրության կազմակերպումը, մյուս կողմից՝ համակարգը պրոֆեսիոնալ կադրերով ապահովելու գործընթացի շարունակականության ապահովումը:

Պրոֆեսիոնալ քաղաքացիական ծառայողները նաև ազգային անվտանգային ռեսուրս են, քանի որ նրանց կայացրած մարտավարական կամ օպերատիվ որոշումներով, ինչպես նաև դրանց

⁷⁷ Տե՛ս В. В. Черепанов, В. П. Иванов, նշ. աշխ., ս. 57-84:

⁷⁸ Տե՛ս “Подготовка кадров государственной службы: учебно-методическое пособие”/под. ред. Е.А. Яблоковой, 2-е изд, Москва, “Флинта” 2005, с. 10-24:

⁷⁹ Տե՛ս ՀՀ պաշտպանության նախարարի 2008 թվականի մայիսի 14-ի «Քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» հմ. 579-Ն հրաման, ՀՀ ԳՆԱՏ 2008/20 (294) և ՀՀ պաշտպանության նախարարի 2008 թվականի մայիսի 14-ի «Քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ և այդ պաշտոնները զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող մրցույթային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին» հմ. 580-Ն հրաման, ՀՀ ԳՆԱՏ 2008/20 (294):

⁸⁰ Տե՛ս ՀՀ կառավարության 2008 թվականի ապրիլի 4-ի «Քաղաքացիական հատուկ ծառայության և զինվորական ծառայության հավասարազոր պաշտոնների ցանկը հաստատելու մասին» հմ. 320-Ն որոշում, ՀՀ ՊՏ 2008/24 (614):

⁸¹ Տե՛ս «Զինվորական ծառայության անցնելու մասին» ՀՀ 2002 թվականի հուլիսի 3-ի հմ. ՀՕ-272 օրենք, ՀՀ ՊՏ 2002/26 (201):

իրագործման որակով են նաև պայմանավորված ազգային անվտանգությանը վերաբերող քաղաքական ռազմավարական ծրագրերի իրականացումը: Ուստի առաջնային անհրաժեշտություն է կադրային ռեսուրսների ինչպես ընթացիկ, այնպես էլ հեռահար ճիշտ պլանավորումը: Ընթացիկ պլանավորումը միտված է բացահայտելու, թե ինչ մասնագիտություններով, որքան և որտեղ են անհրաժեշտ համապատասխան կադրերը, ինչպես արդյունավետորեն օգտագործել նրանց մասնագիտական հատկանիշները, ինչպես ներկայացվող առաջադրանքներին համապատասխան կատարելագործել կադրերի գիտելիքներն ու հմտությունները⁸²: Հեռահար պլանավորումը վերաբերում է որակյալ կադրերի շարունակական վերարտադրությանը, ինչը ենթադրում է կադրերի պահուստային կազմի ձևավորում և դրա հետ արդյունավետ աշխատանքի իրականացում:

Կադրային ներգրավման հարցում ռեալ խոչընդոտ է համարժեք վարձատրության գործոնը: Պրոֆեսիոնալ մասնագետը համեմատում է պետական հատվածում աշխատանքի վարձատրության վալենտականությունը մասնավոր հատվածի հետ: Ընդ որում, բացասական տարբերության դեպքում բարդանում է ոչ միայն որակյալ կադրերի ներգրավման խնդիրը, այլև հաճախ կարող է ստացվել այնպես, որ պետական հատվածում աշխատող հմուտ մասնագետը աշխատանք փնտրի մասնավոր հատվածում:

Երկրորդ՝ քաղաքացիական հատուկ ծառայության համակարգի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության արդյունավետության ուղղությամբ դիտարկումը կատարենք այդ համակարգի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության չափի և դրա հետ կապված՝ քաղաքացիների մասնակցության հնարավորության համատեքստում:

Քաղաքացիների մասնակցության հնարավորությունը շատ էական է, քանի որ անկախ ցանկացած համակարգի արդյունավետությունից՝ դրա թափանցիկ չլինելը բացառում է արդյունավետ ժողովրդավարական վերահսկողությունը:

Այս իմաստով կարևոր է քաղաքացիական հատուկ ծառայության համակարգում կադրերի ընտրության ընթացակարգի դիտարկումը հայեցակարգային մոդելի հետ համեմատությամբ:

Հայեցակարգային իմաստով՝ կադրերի ընտրությունը պետք է իրականացվի հետևյալ սկզբունքների զուգակցմամբ.

- օրինականության սկզբունք, ինչը ենթադրում է կադրային քաղաքականության համապատասխանությունը Սահմանադրությանը, օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին,
- ժողովրդավարության սկզբունք, ինչը ենթադրում է առանց որևէ խտրականության կադրերի օպիտիմալ և ռացիոնալ ընտրությունը,
- մարդասիրության սկզբունք, ինչը ենթադրում է սոցիալական արդարության հաստատման ձգտումը, անձի արժանապատվության հարգումը,
- հրապարակայնության սկզբունք, ինչը ենթադրում է քաղաքացիական ծառայության վերաբերյալ տեղեկատվության հնարավորինս առավելագույն մատչելիությունը,
- կադրային քաղաքականության ապաքաղաքականացվածության սկզբունք⁸³:

Օրենքի համաձայն՝ պաշտպանության բնագավառում քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների կարող են նշանակվել.

82 Տե՛ս Աշոտ Ալեքսանյան, Բյուրոկրատիայի տեսություն, Ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Ե., Վան Արյան, 2008 թ., էջ 116-130:

83 Տե՛ս В. В. Черепанов, В. П. Иванов, նշ. աշխ., сс. 380-403.

- քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններ զբաղեցնող աշխատողները՝ փաստորեն քաղաքացիական հատուկ ծառայության համակարգի ներդրման պահից նրանց քաղաքացիական ծառայողներ համարելու միջոցով,
- քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոնն արտամրցութային կարգով կամ մրցույթով զբաղեցնելու միջոցով:

Ընդհանուր առմամբ, Օրենքով սահմանված ընթացակարգը համապատասխանում է վերոնշյալ հայեցակարգային սկզբունքներին, սակայն առկա են մի շարք պրոբլեմներ, որոնք քննարկման կարիք ունեն: Մասնավորապես՝ կադրերի ընտրության հարցում արդեն իսկ սահմանափակում կա: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ հաստիքները համալրվել են մեծամասնությամբ նախկին զինծառայողներով: Այս հանգամանքը, բացի արդեն քննարկված հետևանքներից, խոչընդոտում է նաև քաղաքացիների ներգրավածությունը, քանի որ թափուր հաստիքներ չլինելու պատճառով տեխնիկապես և ֆիզիկապես զգալիորեն նվազում է նրանց մասնակցության հնարավորությունը:

Սակայն այս պրոբլեմը երկարաժամկետ հեռանկարում ինքնաբերաբար կլուծվի:

Այսպիսով, կարող ենք փաստել, որ ՀՀ-ում քաղաքացիական հատուկ ծառայության համակարգը՝ որպես զինված ուժերի ժողովրդավարական վերհսկողության միջոց, հայեցակարգային առումով համապատասխանում է ընդունված չափանիշներին ու սկզբունքներին: Սակայն կան նաև զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության համատեքստում համակարգի արդյունավետությունը խոչընդոտող մի շարք պրոբլեմներ, մասնավորապես՝

- քաղաքացիական ծառայողների խրախուսման, ինչպես նաև մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով գործուղման ժամանակ վարձատրության պահպանման մեխանիզմները պարունակում են սուբյեկտիվ վերաբերմունքի դրսևորման հնարավորություններ,
- կան պրոֆեսիանալիզմին հասնելը և դրա մակարդակը բարձրացնելը խոչընդոտող գործոններ,
- քաղաքացիական հատուկ ծառայության համակարգի համադրումը հայեցակարգային մոդելի հետ բացահայտում է այդ համակարգում կառավարման առավել կենտրոնացված լինելը:

Հաշվի առնելով քաղաքացիական հատուկ ծառայության համակարգում առկա վերոնշյալ պրոբլեմները՝ առաջարկում ենք.

1. Քաղաքացիական հատուկ ծառայողների շահերի պաշտպանության նպատակով ստեղծել արհեստակցական միություն: Ընդ որում, հնարավոր է նաև քաղաքացիական ծառայողին դրա միջոցով խրախուսման ներկայացնելու տարբերակը, ինչը կնվազեցնի խտրականության հավանականությունը:
2. Մեղմել քաղաքացիական հատուկ ծառայության համակարգի կենտրոնացված կառավարումը՝ որոշ լիազորություններ վերապահելով քաղաքացիական ծառայության խորհրդին, քանի որ քաղաքացիական հատուկ ծառայության համակարգի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է նաև կենտրոնացված և ապակենտրոնացված կառավարման սկզբունքների օպտիմալ համադրմամբ: Այս սկզբունքների զուգակցումը մի կողմից համակարգը զերծ է պահում սուբյեկտիվ գործոնից, մյուս կողմից՝ նպաստում է մասնագիտացված կառույցի կողմից կազմակերպական որոշ գործառույթների լիարժեք իրականացմանը:

3. Քաղաքացիական ծառայության ոլորտում պրոֆեսիանալիզմը բարձրացնելու նպատակով մշակել և ներդնել քաղաքացիական ծառայողի մասնագիտական բնութագիրը գնահատող բազմագործոն համակարգ*:
4. Կադրային քաղաքականության ծրագրավորման համակարգի ներդրում և ռազմավարական նպատակների զարգացման և փոփոխման հաշվառմամբ գիտական սկզբունքների հիման վրա կադրային ռեսուրսների ընթացիկ և հեռահար պլանավորում:

* Նմանատիպ համակարգը կարող է ներառել այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ առաջադրանքները ժամանակին կատարելը, փաստաթղթաշրջանառության ծավալը, ներկայացուցչական ունակությունները, տեսական գիտելիքները և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ 2001 թվականի դեկտեմբերի 4-ի հմ. ՀՕ-272 օրենք, ՀՀ ՊՏ 2002/1 (176):
2. «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ի հմ. ՀՕ-286-Ն օրենք, ՀՀ ՊՏ 2007/66(590):
3. «Զինվորական ծառայության անցնելու մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի հմ. ՀՕ-272 օրենք, ՀՀ ՊՏ 2002/26 (201):
4. ՀՀ կառավարության 2008 թ.-ի ապրիլի 4-ի «Քաղաքացիական հատուկ ծառայության և զինվորական ծառայության հավասարազոր պաշտոնների ցանկը հաստատելու մասին» հմ. 320-Ն որոշում, ՀՀ ՊՏ 2008/24 (614):
5. ՀՀ պաշտպանության նախարարի 2008 թվականի մայիսի 14-ի «Քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» հմ. 579-Ն հրաման, ՀՀ ԳՆԱՏ 2008/20 (294) :
6. ՀՀ պաշտպանության նախարարի 2008 թվականի մայիսի 14-ի «Քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ և այդ պաշտոնները զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատելու մասին» հմ. 580-Ն հրաման, ՀՀ ԳՆԱՏ 2008/20 (294):
7. Հայաստանի Հանրապետության պաշտպանության բնագավառի կառավարման հիմնահարցերը, «Իրավական հետազոտությունների ազգային կենտրոն» հասարակական կազմակերպություն, Ե., 2009 թ.:
8. Քոչարյան Տիգրան Տոնիկի, Զինվորական ծառայության իրավական ինստիտուտը Հայաստանի Հանրապետությունում, Ե., 2008 թ.:
9. Ալեքսանյան Աշոտ, Բյուրոկրատիայի տեսություն, Ուսումնական ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Ե., «Վան Արյան», 2008 թ.:
10. Черепанов В. В., Иванов В. П.. Основы государственной службы и кадровой политики. ЮНИТИ- ДАНА, Закон и право, М; 2008.
11. "Подготовка кадров государственной службы: учебно-методическое пособие"/под. ред. Е.А. Яблоковой, 2-е изд, Москва, "Флинта" 2005.
12. "Государственная Служба", Научно-политический журнал, N4 (54), июль-август 2008.

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՐԱ ԳԱԲՈՒԶՅԱՆ⁸⁴**

ՀՀ պաշտպանունակությունը մեծապես կախված է ՀՀ զինված ուժերի մարտունակությունից, որն ապահովվում է ոչ միայն դրանց քանակով, զինվածությամբ և պատրաստվածությամբ, այլև կարգապահությամբ: Ձինվորական կարգապահության ապահովումը խիստ անհրաժեշտ է, քանի որ դրա անկումը հղի է ծանր հետևանքներով: Ձինվորական կարգապահության ապահովման առավել խիստ միջոցներից է քրեական օրենքը, որը քրեական պատասխանատվություն է նախատեսում զինվորական կարգապահության խախտումների առավել վտանգավոր դրսևորումների՝ զինվորական հանցագործությունների համար:

I. Ձինվորական հանցագործությունների համար նախատեսված քրեական պատասխանատվությունը

Ձինվորական հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 12-րդ բաժնի 32-րդ գլխի հոդվածներով:

Ըստ տեսակային օբյեկտի՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված զինվորական հանցագործությունները կարելի է դասակարգել ութ խմբերի:

1. Ձինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնադրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործություններ: Այս խմբին են պատկանում.

- ա) հրամանը չկատարելը (356-րդ հոդված),
- բ) պետին դիմադրելը կամ նրան զինվորական ծառայության պարտականությունները խախտելուն հարկադրելը (357-րդ հոդված),
- գ) պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելը (358-րդ հոդված),
- դ) զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում (359-րդ հոդված),
- ե) զինծառայողին վիրավորանք հասցնելը (360-րդ հոդված):

2. Ձինվորական ծառայությունից այս կամ այն կերպ խուսափելով դրսևորվող հանցագործություններ: Այս խմբին են պատկանում.

- ա) զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը (361-րդ հոդված),
- բ) դասալքությունը (362-րդ հոդված),
- գ) անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունից խուսափելը (363-րդ հոդված),
- դ) զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելը (364-րդ հոդված):

3. Ռազմական գույքն օգտագործելու և պահպանելու կարգի դեմ ուղղված հանցագործություններ: Այս խմբին են պատկանում.

- ա) ռազմական գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը (369-րդ հոդված),

⁸⁴ Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի վարիչ

- բ) ռազմական գույքն անգգուշությամբ ոչնչացնելը կամ վնասելը (370-րդ հոդված),
- գ) ռազմական գույքը վատնելը (371-րդ հոդված),
- դ) ռազմական գույքը կորցնելը կամ փչացնելը (372-րդ հոդված):

4. Ձեռքի, ռազմամթերքի, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնների խախտման հետ կապված հանցագործություններ: Այս խմբին են պատկանում.

ա) զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը (373-րդ հոդված),

բ) զենքը, ռազմամթերքը, ռազմական այլ գույքը, ինչպես նաև շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող նյութերը կամ առարկաները մեկ ուրիշին հանձնելը (374-րդ հոդված):

5. Ռազմական տեխնիկայի շահագործման կարգի դեմ ուղղված հանցագործություններ: Այս խմբին են պատկանում.

ա) մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը (377-րդ հոդված),

բ) թռիչքների կամ դրանց նախապատրաստման կանոնները խախտելը (378-րդ հոդված):

6. Հատուկ ծառայությունների կրման կարգի դեմ ուղղված հանցագործություններ: Այս խմբին են պատկանում.

ա) մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը (365-րդ հոդված),

բ) սահմանապահ ծառայություն կրելու կանոնները խախտելը (366-րդ հոդված),

գ) պահակային կամ կայագորային ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը (367-րդ հոդված),

դ) ներքին ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը (368-րդ հոդված):

7. Ջինվորական պաշտոնեական հանցագործություններ: Այս խմբին են պատկանում.

ա) իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը (375-րդ հոդված),

բ) անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ (376-րդ հոդված):

8. Հատուկ պայմաններում զինվորական պարտքի կատարման կարգի դեմ ուղղված հանցագործություններ: Այս խմբին են պատկանում.

ա) մարտ վարելու միջոցները հակառակորդին հանձնելը կամ թողնելը (379-րդ հոդված),

բ) մարտադաշտն ինքնական լքելը կամ զենքով գործելուց հրաժարվելը (380-րդ հոդված),

գ) կամովին գերի հանձնվելը (381-րդ հոդված),

դ) հանցավոր գործողությունները գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից (382-րդ հոդված),

ե) դիակապտությունը (383-րդ հոդված):

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ զինծառայողների կողմից կատարվող որոշ հանցատեսակներ նախատեսված են ՀՀ քր. օր.-ի 13-րդ բաժնի 33-րդ գլխում (խաղաղության և մարդկության անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ): Դրանցից են պատերազմ վարելու արգելված միջոցներ ու մեթոդներ կիրառելը (387-րդ հոդված), միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումները զինված ընդհարումների ժամանակ (390-րդ հոդված), անգործությունը կամ հանցավոր հրաման արձակելը զինված ընդհարման ժամանակ (391-րդ հոդված):

II. Չհնվորական ծառայության կարգի դեմ ուղղված՝ հանրության համար վտանգավոր արարքների քրեականացման ծավալի պրոբլեմը

Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունները կարելի է հասկանալ երկու իմաստով. նեղ իմաստով՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ, որոնք նախատեսված են ՀՀ քր. օր.-ի 32-րդ գլխում, և լայն իմաստով՝ ՀՀ քր. օր.-ի 32-րդ գլխում նախատեսված զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններից բացի՝ նաև ՀՀ քրեական օրենսգրքի այլ գլուխներում նախատեսված հանցագործություններ, որոնք զինծառայողների կողմից կատարվելու դեպքում ոտնձգություն են զինվորական ծառայության կարգի դեմ: Ընդ որում, շատ քրեագետների կարծիքով զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների ցանկի ընդլայնումը քրեական օրենսդրության զարգացման միտումներից է: Ասվածի ապացույցն է, մասնավորապես, ՀՀ քր. օր.-ի 32-րդ գլխի 373-րդ հոդվածի ընդլայնված կիրառումը: Այդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսվում զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելու համար: Միևնույն ժամանակ, այս հանցակազմով, ըստ էության, որպես զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություններ են ամրագրվում հանրության համար վտանգավորության տարբեր աստիճաններ ունեցող այնպիսի արարքներ, որոնք նախատեսված են ՀՀ քր. օր.-ի տարբեր գլուխներում: Այսպես՝ ՀՀ քր. օր.-ի 233-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում ռադիոակտիվ նյութերի ապօրինի շրջանառության համար, 240-րդ հոդվածը՝ դյուրավառ կամ այրիչ նյութերի պահպանման, հաշվառման, փոխադրման, առաքման կամ օգտագործման կանոնները խախտելու համար: Դրանք հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործություններ են, սակայն զինծառայողի կողմից կատարվելու դեպքում որակվում են 373-րդ հոդվածով: Նույնն է վիճակը նաև զինվորական պաշտոնեական հանցագործությունների պարագայում: Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ քր. օր.-ի 32-րդ գլխում պատասխանատվություն է նախատեսվում իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության (375-րդ հոդված) և ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքի (376-րդ հոդված) համար, որոնք շատ դեպքերում նույնանում են ընդհանուր պաշտոնեական հանցագործությունների հետ: Սակայն զինվորական ծառայության պարագայում առկա են որոշ առանձնահատկություններ: Ընդ որում, կարծում ենք, որ զինվորական պաշտոնեական հանցագործությունների որոշ դրսևորումներ քրեական օրենսգրքի համապատասխան նորմերի առկա ձևակերպումների պատճառով դուրս են մնացել քրեականացումից:

Այսպես՝ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող 29-րդ գլխի 309-րդ հոդվածի երկրորդ մասով որպես պաշտոնեական լիազորություններն անցնելու հանցակազմի ծանրացնող հանգամանք է նախատեսված բռնության, զենքի կամ հատուկ միջոցների գործադրումը, մինչդեռ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված պաշտոնեական հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող հոդվածում այդպիսի ծանրացնող հանգամանք նախատեսված չէ, մինչդեռ զինվորական պաշտոնեական հանցագործությունների դեպքում նշված միջոցների ու եղանակների կիրառումն ավելի տարածված է:

Ըստ էության, զինվորական պաշտոնեական հանցագործություն պետք է համարվի նաև ապօրինի հրաման տալը, մինչդեռ քր. օր.-ի 375-րդ հոդվածը չի ընդգրկում այն: Բացի այդ, կարծում ենք, որ ապօրինի հրաման տալը հանրության համար վտանգավորության ավելի բարձր աստիճան ունի, ուստի ճիշտ կլիներ այն առանձնացնել և դրա համար ավելի խիստ քրեական պատասխանատվություն նախատեսել: Ապօրինի հրաման տալու մասնակի դրսևորում է 391-րդ հոդվածով նա-

խատեսված անգործությունը կամ ապօրինի հրաման տալը զինված ընդհարման ժամանակ, որը, սակայն, չի ընդգրկում ապօրինի հրաման տալու բոլոր դրսևորումները: Բացի այդ, ՀՀ քր. օր.-ը պատասխանատվություն է նախատեսում զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու համար միայն նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, այնինչ հրամանատարի կամ պետի կողմից ենթակայի նկատմամբ ոչ կանոնագրքային ներգործությունն ըստ էության քրեականացված չէ:

Վերոգրյալի հետ կապված՝ առաջարկում ենք ՀՀ քր. օր.-ի 32-րդ գլխում նախատեսել քրեական պատասխանատվություն նախատեսող երկու նոր հանցակազմեր՝ ապօրինի հրաման տալը և ենթակայի նկատմամբ ոչ կանոնագրքային ներգործության միջոցներ կիրառելը (վերջինս իր մեջ կընդգրկի ենթակաների նկատմամբ բռնություն և այլ ապօրինի միջոցներ գործադրելու դեպքերը ու կամքողջացնի զինվորական ենթակայության կարգի և զինծառայողների կանոնագրքային փոխհարաբերությունների դեմ ուղղված հանցագործությունների համակարգը), ինչպես նաև 375-րդ հոդվածում որպես իշխանության չարաշահման և իշխանազանցության ծանրացնող հանգամանք նախատեսել բռնության, զենքի կամ հատուկ միջոցների գործադրումը:

Արարքների քրեականացման հիմք կարող է լինել ևս մեկ հանգամանք: Վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ մասնավորապես ոստիկանության գործերի զինծառայողները ավելի ու ավելի հաճախ են ընդգրկվում հասարակական կարգի ու հասարակական անվտանգության պահպանության գործում: Ընդ որում, մնան դեպքերում չի բացառվում զինծառայողների կողմից այնպիսի արարքների կատարումը, որոնք կարող են ոտնահարել մարդու իրավունքներն ու ազատությունները և էական վնաս պատճառել դրանց շահերին: Կարծում ենք, որ մի շարք այլ պետությունների օրինակով, ՀՀ քրեական օրենսգրքում ևս պետք է պատասխանատվություն նախատեսվի զինծառայողի կողմից հասարակական կարգի և հասարակական անվտանգության պահպանության ծառայության կանոնները խախտելու համար, ինչը էական վնաս է պատճառել մարդու իրավունքներին կամ ազատություններին:

III. Չինվորական հանցագործությունների սուբյեկտի հետ կապված պրոբլեմները

ՀՀ քր. օր.-ի 356-րդ հոդվածի հիմնգերոդ մասի համաձայն՝ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտներն են ՀՀ զինված ուժերում և այլ զորքերում զորակոչի հիման վրա կամ պայմանագրով զինվորական ծառայություն անցնող անձինք, ինչպես նաև ռազմական հավաքներ անցնելու ժամանակ՝ զինապարտները:

Որոշելու համար, թե երբ է քաղաքացին համարվում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ, անհրաժեշտ է պարզել զինվորական ծառայության սկիզբը և ավարտը: «Չինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների համար զինվորական ծառայության սկիզբ է համարվում ծառայության վայր մեկնելու համար զինվորական կոմիսարիատ ներկայանալու օրը, իսկ ավարտ՝ զորամասի անձնակազմի ցուցակներից հանելու օրը: Չինծառայողի՝ կոմիսարիատ ներկայանալու օրվանից սկսվում են զինվորական-իրավական հարաբերություններ քաղաքացու և պետության միջև: Պայմանագրային զինվորական ծառայության ընդունվող քաղաքացիների համար զինվորական ծառայության սկիզբ է համարվում պայմանագիրն օրինական ուժի մեջ մտնելու օրը, իսկ ծառայության ավարտ՝ պայմանագրի ժամկետը լրանալու կամ պայմանագրի գործողությունը դադարեցնելու օրը: Ռազմական հավաքներ անցնող զինապարտների համար զինվորական ծառայության սկիզբ է համարվում ռազմական հավաքի առաջին օրը, իսկ ավարտ՝ վերջին օրը: Ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների համար զինվորական ծառայության սկիզբ է համարվում այդ հաստատություններում սահմանված կարգով որպես կուր-

սանտ գրանցվելու օրը: «Ձինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ զինծառայող են համարվում զինված ուժերում և այլ զորքերում պետական ծառայություն անցնող քաղաքացիներն ու ռազմատուսումնական հաստատությունների կուրսանտները: Փաստորեն, ռազմատուսումնական հաստատությունների կուրսանտները զինծառայողի կարգավիճակ ունեն և այդ հիմքով ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցագործությունների սուբյեկտ են: Ուստի զինվորական հանցագործության սուբյեկտ կարող է լինել ոչ միայն 18, այլև 16 տարին լրացած մեղսունակ ֆիզիկական անձը:

«Ձինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ զինծառայողը զորամասի կամ զինվորական կառավարման մարմնի անձնակազմի ցուցակներից հանվում է զինվորական ծառայության ավարտի օրը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այս առումով հարց է ծագում, թե արդյո՞ք անձը կարող է զինվորական հանցագործության սուբյեկտ համարվել և զինվորական հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե զինծառայության ժամկետը լրացել է, և չկան օրենքով նախատեսված բացառություններ, սակայն նա զորամասի կամ զինվորական կառավարման մարմնի անձնակազմի ցուցակներից չի հանվել: Իրավաբանական գրականության մեջ կարծիք կա, թե նման դեպքերում անձը չի կարող զինվորական հանցագործության սուբյեկտ համարվել և քրեական պատասխանատվության ենթարկվել զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործության համար, քանի որ անօրինական կերպով կամ սխալմամբ է պահվում զինվորական-իրավական հարաբերությունների մեջ: Եթե վերջինիս կատարած արարքը քրեական օրենսգրքի մեկ այլ հոդվածով նախատեսված հանցագործություն է, ապա նա պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի ընդհանուր հիմունքներով:

Նման մոտեցման կողմնակիցների կարծիքով՝ նույն սկզբունքը պետք է կիրառվի նաև դատական պրակտիկայում վեճերի տեղիք տված մեկ այլ իրադրության պարագայում: Խոսքը հետևյալի մասին է. արդյո՞ք զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործության սուբյեկտ է այն անձը, որը սխալմամբ է զորակոչվել ծառայության: Վերը նշված քրեագետների կարծիքով նման դեպքերում անձը պետք է ազատվի զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործության համար քրեական պատասխանատվությունից, քանի որ տվյալ անձը, ըստ էության, զինծառայող չէ և սխալմամբ կամ անօրինական կերպով է դարձել այս ոլորտում առաջացող իրավահարաբերությունների սուբյեկտ:

Կարծում ենք, սակայն, որ խնդրին նման լուծում տալը ճիշտ չէ և անհարկի նվազեցնում է քրեաիրավական միջոցներով զինվորական կարգապահության, զինված ուժերի մարտունակության և պետության պաշտպանունակության ապահովման արդյունավետությունը: Օրինակ՝ ինչպե՞ս կարելի է պատասխանատվության չենթարկել մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտած և այդ արարքով ծանր վնաս պատճառած այն անձին, ով թեկուզ անօրինական կերպով կամ սխալմամբ է զորակոչվել: Կարծում ենք, որ չի կարելի գուտ այդ փաստը դնել նման դեպքերում անձին զինվորական հանցագործության համար քրեական պատասխանատվությունից ազատելու հիմքում: Բանն այն է, որ չնայած տեղի ունեցած սխալին կամ սպօրինությանը՝ նշված անձը տվյալ պահին դե ֆակտո զինծառայողի կարգավիճակում է և շատ լավ գիտակցում է դրանից բխող իր իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև պարտականությունները չկատարելու հետևանքները: Ընդ որում, նրա արարքի հասարակական վտանգավորությունը ոչ մի բանով չի զիջում մյուս զինծառայողների համանման արարքների հասարակական վտանգավորությանը: Բացի այդ, եթե նշված անձանց պատասխանատվության չենք ենթարկում զինվորական հանցագործության համար, ապա չենք կարող նրանց պատասխանատվության ենթարկել քրեական օրենսգրքի որևէ այլ հոդվածով, որովհետև նույնատիպ օրբյեկտիվ

կողմ ունեցող որևէ այլ հանցակազմ քրեական օրենսգրքում նախատեսված չէ: Ուստի կարծում ենք, որ վերը նշված դեպքերում անձը պետք է պատասխանատվության ենթարկվի զինծառայության կարգի դեմ ուղղված հանցագործության համար: Իհարկե, նման պարագայում անձին քրեական պատասխանատվության ենթարկելու կարևոր պայման է, թե արդյոք անձը տվյալ իրադրությունում ի վիճակի է եղել կատարելու զինծառայության պարտականությունները:

Պետք է նշել նաև, որ նշված անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հետ մեկտեղ պետք է բարձրացվի նաև այն անձանց պատասխանատվության ենթարկելու հարցը, ովքեր տվյալ անձանց սխալմամբ են զորակոչել ծառայության կամ զինծառայության ժամկետը լրանալուց հետո չեն հանել զորամասի կամ զինվորական կառավարման մարմնի անձնակազմի ցուցակներից:

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված որոշ հանցագործությունների սուբյեկտ կարող է լինել հատուկ կարգավիճակ ունեցող անձը: Նման դեպքերում փաստորեն գործ ունենք հատուկ սուբյեկտի հատուկ տեսակի հետ: Մասնավորապես՝ 366-րդ հոդվածով նախատեսված սահմանապահ ծառայություն կրելու կանոնները խախտելու սուբյեկտ կարող է լինել սահմանապահ վերակարգի մեջ մտնող կամ սահմանապահ ծառայության այլ պարտականություններ կատարող անձը, իսկ 367-րդ հոդվածով նախատեսված պահակային կամ կայագորային ծառայության կանոնադրային կանոնները խախտելու սուբյեկտ կարող է լինել պահակախմբի կամ պարեկախմբի կազմի մեջ մտնող անձը և այլն:

Վերը թվարկված անձանց շարքին չդասվող անձինք զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների այս խմբի սուբյեկտ չեն և կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել միայն զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցանքի կատարմանը հանցակցելու՝ դրդելու, օժանդակելու կամ կազմակերպելու համար: Նույն կերպ պետք է լուծվի նաև այն անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը, ովքեր հատուկ պաշտոններ են զբաղեցնում զինված ուժերում կամ ովքեր զինծառայող չեն, սակայն զինված ուժերում ընդգրկված են հատուկ աշխատանքների մեջ:

IV. Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտիվ կողմի հետ կապված պրոբլեմները

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզգուշությամբ: Մի շարք հանցակազմերում սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանցագործության շարժառիթը կամ նպատակը (օրինակ՝ դասալքության դեպքում՝ զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակը):

Զինվորական հանցագործությունների սուբյեկտիվ կողմի օրենսդրական բնորոշման հետ կապված հիմնական պրոբլեմն այն է, որ շատ հանցակազմերում որպես ծանրացնող հանգամանք նախատեսվում է ծանր հետևանքների առաջացումը: Ընդ որում, այդ հետևանքների նկատմամբ, որպես կանոն, մեղքի ձևը չի նշվում (այն նշված է միայն 375-րդ հոդվածի երկրորդ մասում): Դա նշանակում է, որ այդ հետևանքների նկատմամբ հանցավորը դրսևորում է դիտավորություն, որով հետև չէ քրեական օրենսգրքի 28-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ անզգուշությամբ կատարված արարքը հանցագործություն է, եթե դա հատկապես նախատեսված է քրեական օրենսգրքի Հատուկ մասով: Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ գլխի հոդվածների մեծ մասում առկա են մեղքի ձևի ճիշտ սահմանման և մեկնաբանության պրոբլեմներ: Բնորոշ սխալներից մեկն այն է, որ որոշ հոդվածներում որպես հանցագործության տվյալ տեսակի յուրա-հատուկ դրսևորում է նախատեսվում հանցանքի կատարումը ծառայության նկատմամբ անփույթ

կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, որն առաջացրել է ծանր հետևանքներ: Նման ձևակերպում առկա է 356-րդ հոդվածի չորրորդ մասում (հրամանը չկատարելը ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, որն առաջացրել է ծանր հետևանքներ), 365-րդ հոդվածի 2-րդ մասում (մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտումը դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, որն առաջացրել է ծանր հետևանքներ), 366-րդ, 367-րդ 368-րդ հոդվածների երկրորդ մասերում: Նշված նորմերում ծանր հետևանքների նկատմամբ մեղքի ձևը նշված չէ, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ դրանց նկատմամբ դրսևորվում է դիտավորություն: Բայց քրեաիրավական տեսանկյունից դա անհեթեթ է, որովհետև «ծառայության նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով» հասկացությունը բնութագրական է մեղքի անգույշ ձևին, երբ անձը չի նախատեսում վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը կամ նախատեսում է, սակայն առանց բավարար հիմքերի ինքնավստահորեն հույս է ունենում, որ դրանք կկանխվեն: Ուստի ճիշտ կլիներ նշված հոդվածներում սահմանել ծանր հետևանքների նկատմամբ մեղքի ձևը («... անգույշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ»): Օրենքի նման սխալ մոտեցումը հանգեցնում է նաև այս հանցագործությունների համար նախատեսված սանկցիաների կառուցման սխալների: Նշված հոդվածների երկրորդ մասերով նախատեսված հանցակազմերի համար ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան նույն հանցակազմերի հիմնական տեսակների համար, որոնք դիտավորությամբ կատարվող հանցագործություններ են: Այսպիսի մոտեցման հիմքում դրվել է զուտ այն հանգամանքը, որ հիմնական հանցակազմի հատկանիշ հանդիսացող հետևանքները ծանր չեն: Սակայն բանն այն է, որ դիտավորյալ հանցագործությունները և հատկապես դրանք կատարող անձինք ավելի մեծ հասարակական վտանգավորություն ունեն, ուստի դրանց համար նախատեսված պատասխանատվությունը չի կարող անգույշությամբ կատարվող հանցագործությունների համար նախատեսվածից ավելի մեղմ լինել, եթե նույնիսկ վերջիններս ավելի մեծ վնաս պատճառեն:

Բացի այդ, մեր կարծիքով, օրենքի բացթողում է նաև այն, որ ինչպես նշված հոդվածներում, այնպես էլ մնացած այն բոլոր հոդվածներում, որոնցում որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք նախատեսված է ծանր հետևանքների առաջացումը, դրանց նկատմամբ մեղքի ձևերը տարբերակված չեն: Ինչպես արդեն նշել ենք, բացի 375-րդ հոդվածի երկրորդ մասից՝ մնացած հոդվածներում ծանր հետևանքների նկատմամբ մեղքի ձև նշված չէ, ինչը հանգեցնում է այն մեկնաբանությանը, որ դրանք դիտավորությամբ կատարվող արարքներ են: Բայց նշված հետևանքների նկատմամբ կարող է դրսևորվել նաև անգույշություն: Ուստի ճիշտ կլիներ անգույշությամբ ծանր հետևանքների առաջացումը նախատեսել որպես հիմնական հանցակազմի ծանրացնող հանգամանք, իսկ դիտավորությամբ ծանր հետևանքների առաջացումը՝ որպես առավել ծանրացնող հանգամանք:

V. Ձինվորական հանցագործությունների համար նախատեսված սանկցիաների պրոբլեմը

Ձինվորական հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետության համար կարևոր է նաև դրանց սանկցիաների հարցը: Հանցագործության որոշակի տեսակի համար օրենքով նախատեսված պատիժը պետք է համապատասխանի հանցագործության այդ տեսակի՝ հանրության համար վտանգավորության աստիճանին: Քրեական օրենսգրքում պատիժները պետք է տարբերակված լինեն, և տարբեր հանցատեսակների համար նախատեսված պատիժները պետք է համամասնության մեջ լինեն: Այս տեսակետից կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 32-րդ գլխում այս սկզբունքները լիովին պահպանված չեն:

Այսպես, ՀՀ քր. օր.-ի 357-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում պետին դիմադրելու կամ նրան զինվորական ծառայության պարտականությունները խախտելուն հարկադրելու համար, որի երկրորդ մասում որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է առողջությանը միջին ծանրության կամ ծանր վնաս պատճառելը: Նշված ծանրացնող հանգամանքով հանցագործության համար նախատեսված է պատիժ՝ երկուսից ութ տարի ժամկետով ազատազրկում: Քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսված՝ առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու հասարակ տեսակի համար նախատեսված է պատիժ՝ երեքից յոթ տարի ժամկետով ազատազրկում, իսկ ծանրացնող հանգամանքներով տեսակի համար՝ հինգից տասը տարի ժամկետով ազատազրկում (113-րդ հոդվածով նախատեսված՝ առողջությանը դիտավորությամբ միջին ծանրության վնաս պատճառելու հասարակ տեսակի համար առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկում է նախատեսված, իսկ ծանրացնող հանգամանքներով տեսակի համար՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով ազատազրկում): Փաստորեն, զուտ անձի դեմ ուղղված հանցագործությունների համար հաճախ ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան այն հանցագործությունների համար, որոնք վնաս են պատճառում ոչ միայն անձին, այլև զինվորական ծառայության կարգին և, վերջին հաշվով, պետության պաշտպանունակությանը:

Նույնն է իրավիճակը նաև 359-րդ հոդվածի պարագայում: Նշված հոդվածը պատասխանատվություն է նախատեսում զինծառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում խախտելու համար: Այս հանցագործությունը շատ մեծ է խուլիգանությանը: Հավանաբար դրա հաշվառմամբ է օրենսդիրը այս երկու հանցակազմերի հասարակ և ծանրացնող հանգամանքներով տեսակների համար նույն առավելագույն սանկցիաները նախատեսել: Մինչդեռ, մեր կարծիքով, նշված զինվորական հանցագործության հասարակական վտանգավորությունն ավելի մեծ է, քան խուլիգանությանը, որովհետև այն, փաստորեն, ոտնձգություն է զինվորական ծառայության կարգի, զինված ուժերի մարտունակության և պետության պաշտպանունակության դեմ: Կարելի է էլի օրինակներ բերել, բայց այսքանն էլ բավական է ցույց տալու համար, որ օրենսդիրը զինվորական հանցագործությունների համար սանկցիաները սահմանելիս հաճախ անհարկի մեղմ մոտեցում է դրսևորել, հաշվի չի առել հանցագործությունների շատ տեսակների իրական հանրային վտանգավորությունը: Սրա հետ կապված կարծում ենք, որ զինվորական հանցագործությունների համար պատիժներ նախատեսելիս որպես հիմք պետք է ընդունել այն գաղափարը, որ զինվորական հանցագործությունն ավելի մեծ հասարակական վտանգավորություն ունի, քան նույն օբյեկտիվ կողմով դրսևորվող ընդհանուր քրեական հանցագործությունը, ուստի դրա համար սանկցիան պետք է ավելի խիստ լինի:

Մեկ այլ պրոբլեմ է 32-րդ գլխում նախատեսված տարբեր հանցագործությունների, ինչպես նաև նույն հանցագործության տարբեր տեսակների համար նախատեսված սանկցիաների անհամասնությունը:

Այսպես՝ 382-րդ հոդվածի առաջին մասը պատասխանատվություն է նախատեսում գերության մեջ գտնվող զինծառայողի կողմից ռազմական նշանակություն ունեցող աշխատանքներին կամ այնպիսի միջոցառումներին կամովին մասնակցելու համար, որոնք ակնհայտ կերպով կարող են վնաս պատճառել Հայաստանի Հանրապետությանը կամ նրա դաշնակից պետություններին, եթե բացակայում են պետական դավաճանության հատկանիշները: Այս հանցագործության համար ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան նույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված հանցագործության, այն է՝ մյուս ռազմագերիների նկատմամբ բռնություն գործադրելու կամ ավագի դիրքում գտնվող ռազմագերու կողմից նրանց հետ դաժանորեն վարվելու համար: Ստացվում է, որ

ռազմագերիների նկատմամբ բռնությունն ու դաժանությունը պակաս վտանգավոր են, քան, ասենք, ինչ-որ շինարարական աշխատանքներին մասնակցելը:

Սեկ այլ օրինակ. ՀՀ քր. օր.-ի 372-րդ հոդվածով պատասխանատվություն է սահմանված ռազմական գույքը կորցնելու կամ փչացնելու համար, իսկ 377-րդ հոդվածի առաջին մասով՝ մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելու համար, որը մարդու առողջությանն անգոյություն բերող պատճառով է միջին ծանրության վնաս կամ ծանր վնաս կամ առաջացրել է այլ ծանր հետևանքներ: Առաջին հանցագործության համար նախատեսված է առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկում, իսկ երկրորդի համար՝ առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկում: Ստացվում է, որ գույքը ավելի մեծ արժեք է, քան մարդու առողջությունը:

Ոչ պակաս խնդրահարույց է ժամկետային զինծառայողների նկատմամբ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ կիրառելու պրոբլեմը:

ՀՀ քր. օր.-ի 58-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանցանք կատարած ժամկետային ծառայության զինծառայողների նկատմամբ կարգապահական գումարտակում պահելը երեք ամսից երեք տարի ժամկետով կարող է նշանակվել ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար սույն օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում, ինչպես նաև այն դեպքերում, երբ դատարանը, հաշվի առնելով գործի հանգամանքները և դատապարտյալի անձնավորությունը, նպատակահարմար գտնի առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկման փոխարեն կիրառել կարգապահական գումարտակում պահելը՝ նույն ժամկետով»:

Ըստ ՀՀ քր. օր.-ի 49-րդ և 50-րդ հոդվածների՝ «կարգապահական գումարտակում պահելը» քրեական պատժի հիմնական տեսակ է:

Միևնույն ժամանակ հարկ է հաշվի առնել, որ կարգապահական գումարտակը զինված ուժերի ստորաբաժանում է, որտեղ իրականացվում է զինվորական ծառայություն՝ ավելի խիստ սահմանափակումների պայմաններում: Կարգապահական գումարտակում զինվորական ծառայության ժամկետը լրացուցիչ ժամկետ է, այն չի հաշվանցում ծառայության սահմանված ժամկետը, այլ գումարվում է դրան: Փաստորեն, «կարգապահական գումարտակում պահելը» զինվորական ծառայության կազմակերպման ձև է, իսկ կարգապահական գումարտակում ծառայելու ժամկետը զինվորական ծառայության ժամկետի երկարաձգումն է ավելի խիստ սահմանափակումների պայմաններում:

Ասվածից միանգամայն ակնհայտ է դառնում, որ ՀՀ քր. օր.-ի իմաստից բխում է զինվորական ծառայության շարժառիթավորման և դրանով պայմանավորված շատ գործոնների, այդ թվում՝ մարտունակության համար խիստ վտանգավոր մի գաղափար՝ «զինվորական ծառայությունը պատիժ է»:

VI. Արժևորող հասկացությունների պրոբլեմը

Զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված շատ հանցագործություններում որպես հանցակազմի հատկանիշ նախատեսված է որոշակի հետևանքների առաջացումը: Ընդ որում, այդ հետևանքները նկարագրված են արժևորող հասկացությունների միջոցով (էական վնաս, ծանր հետևանքներ): Բնական է, որ շատ դեպքերում այս հասկացությունների էությունը կարող է բացահայտվել միայն դատական պրակտիկայում՝ կոնկրետ գործի հանգամանքները հաշվի առնելով, որովհետև վտանգավոր հետևանքների շատ դրսևորումներ պարզապես հնարավոր չէ օրենքում նկարագրել: Խոսքը այնպիսի հետևանքների մասին է, ինչպիսիք են մարդու իրավունքների ու ազատությունների ոտնահարումը, դրանց սահմանափակումը, բարոյական վնասը, պետի կամ պաշտոնատար անձի հեղինակազրկումը, գորամասի գործունեության կազմալուծումը և այլն: Սա-

կայն գույքային վնասն այնպիսի բնույթ ունի, որ դրա նկարագրությունը հնարավոր է: Պետք է նշել, որ որոշ հանցակազմերում գույքային վնասի բովանդակությունը օրենքում բացահայտված է, ինչի մասին կարելի է փաստել 375-րդ (իշխանությունը չարաշահելը, իշխանագանգությունը կամ իշխանության անգործությունը) և 376-րդ (անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ) հոդվածների օրինակով: Սրա հետ կապված հարց է ծագում, թե ինչու է օրենսդիրը միայն այս երկու հանցակազմերում բացահայտում գույքային վնասի բովանդակությունը: Բանն այն է, որ 32-րդ գլխում նախատեսված մի շարք այլ հանցագործությունների հետևանքով ևս կարող է գույքային վնաս պատճառվել: Մասնավորապես՝ ծանր հետևանքները գույքային բնույթ կարող են ունենալ ռազմական գույքը դիտավորությամբ կամ անզուգուրությամբ ոչնչացնելու կամ վնասելու, մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելու, թռիչքների կամ դրանց նախապատրաստման կանոնները խախտելու դեպքերում: Կարծում ենք, որ օրենսդիրը այս հարցում հետևողական մոտեցում չի դրսևորել: Սակայն սրա հետ կապված մեկ այլ հարց է ծագում. իսկ որքանով է ճիշտ զինվորական հանցագործությունների հետևանքով առաջացած գույքային վնասի բովանդակությունը օրենքում բացահայտելը: Կարծում ենք, որ նման մոտեցումը ճիշտ չէ: Ջինվորական հանցագործությունների դեպքում գույքային վնասի էական լինելը կամ ծանր հետևանք ունենալը չեն կարող թվաբանական արտահայտություն ունենալ, առավել ևս դրանք չեն կարող նույն բովանդակություն ունենալ, ինչ ընդհանուր քրեական հանցագործությունների դեպքում: Մինչդեռ վերը նշված երկու հանցակազմերում գույքային վնասի թվաբանական արտահայտությունը (նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ արժեքը) նույնանում է քր. օր.-ի 308-րդ (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) և 309-րդ (պաշտոնեական լիազորություններն անցնելը) հոդվածներում սահմանվածի հետ: Մինչդեռ 500.000 դրամից պակաս վնասը մի դեպքում կարող է էական վնաս չպատճառել զինվորական ծառայության շահերին, մեկ այլ դեպքում՝ պատճառել: Ամեն ինչ կախված է կոնկրետ դեպքում վնասված առարկայի կամ բարիքի՝ տվյալ պահի համար անհրաժեշտությունից: Ուստի, կարծում ենք, որ զինվորական հանցագործությունների, այդ թվում՝ զինվորական պաշտոնեական հանցագործությունների հետևանքով առաջացած գույքային վնասի բովանդակությունը չպետք է բացահայտել, և յուրաքանչյուր դեպքում պրոբլեմը պետք է լուծել գործի կոնկրետ հանգամանքների հիման վրա:

VII. Հանցակազմերի օրենսդրական նկարագրության հետ կապված որոշ պրոբլեմներ

Արդեն նշել ենք, որ զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված շատ հանցակազմերի օրենսդրական կառուցման մեջ մեղքի ձևի նկարագրության սխալներ են տեղ գտել: Բացի այդ, մեր կարծիքով, անհրաժեշտ է որոշ ճշգրտումներ կատարել հանցակազմերի օբյեկտիվ կողմի օրենսդրական բնորոշումների մեջ:

Այդ պատճառով, մասնավորապես, ՀՀ քր. օր.-ում քրեականացված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ պետին սպառնալը, ինչը, մեր կարծիքով, բացթողում է: Ճիշտ է, 357-րդ հոդվածում նշվում է բռնություն գործադրելու սպառնալիքի մասին, սակայն դա կապված է պետին դիմադրելու կամ նրան իր պարտականությունները խախտելուն հարկադրելու հետ: Մինչդեռ բռնություն գործադրելու սպառնալիքը կարող է տրվել նաև այլ շարժառիթներով:

Առկա է նաև քննարկվող հանցակազմի լեզվական և տրամաբանական մեկնաբանության պրոբլեմ: Հոդվածի տեքստից այնքան էլ պարզ չէ, թե ում կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ է գործադրվում բռնությունը:

Հարց է ծագում մաս, թե ինչու է պետին ծեծելը առանձին նշվում. չէ՞ որ ծեծը բռնության մասնակի դրսևորում է:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք 358-րդ հոդվածի դիսպոզիցիայի հետևյալ տարբերակը. «Պետի նկատմամբ բռնություն գործադրելը կամ պետի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքը՝ նրա կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ կամ այդ պարտականությունները կատարելու ժամանակ»:

Համանման պրոբլեմներ են առաջանում 359-րդ հոդվածի կապակցությամբ, որը պատասխանատվություն է նախատեսում զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու համար: Հոդվածի դիսպոզիցիայում հանցակազմը բնորոշվում է հետևյալ կերպ. «Ձինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ զուգորդվել է բռնություն գործադրելով»:

Այս հանցակազմի հետ կապված առաջին պրոբլեմն այն է, որ, մեր կարծիքով, այն տարածական մեկնաբանության տեղիք է տալիս: Բանն այն է, որ զինծառայողների փոխհարաբերությունները մանրամասնորեն կանոնակարգված են, ուստի դրանցից յուրաքանչյուր շեղում որակվում է որպես զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնների խախտում: Ճիշտ է, 359-րդ հոդվածը նշում է նման խախտումը անձի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ բռնություն գործադրելով զուգորդված լինելու հանգամանքը, սակայն, պրոբլեմն անլուծելի է մնում այն առումով, որ ի վերջո պարզ չի դառնում, թե արդյոք բռնության գործադրման կամ հոդվածում նշված այլ արարքների կատարման յուրաքանչյուր դեպքում առկա է քննարկվող հանցակազմը: Եթե հիմնվենք օրենքի տառացի մեկնաբանության վրա, ապա հարցին պետք է դրական պատասխան տալ: Սակայն, կարծում ենք, որ այս հանցատեսակի էությունը այլ է: Նախ՝ պետք է հստակ սահմանել, որ այս հանցագործությունը զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործություն է, ուստի արարքը կարող է որակվել 359-րդ հոդվածով այն դեպքում, եթե անձի պատվի ու արժանապատվության ստորացումը, ծաղրուծանակը, բռնությունը, հալածանքը գործադրվեն տուժողի կողմից իր զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ կամ այդ պարտականություններից որևէ մեկը կատարելու ժամանակ: Ըստ էության, այս դեպքում մենք գործունենք խուլիզանության յուրահատուկ տեսակի հետ, ուստի պետք է նշել, որ հանցակազմը առկա է մաս այն դեպքում, երբ թեև նշված արարքների կատարումը կապված չէ տուժողի կողմից իր պարտականությունները կատարելու հետ, սակայն հանցավորի համար ակնհայտորեն զուգորդվել է զինծառայության հարաբերությունների կարգի խախտման հետ, և ակնհայտ անհարգալից վերաբերմունք է դրսևորվել զինվորական կոլեկտիվի նկատմամբ: Եթե բռնությունը կամ հոդվածում նշված մյուս արարքները կատարվել են անձնական շարժառիթներով, կապված չեն տուժողի կողմից իր պարտականությունները կատարելու հետ և զինվորական կոլեկտիվի նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով չեն ուղեկցվել (կատարվել են այլ զինծառայողների բացակայության պայմաններում, մեկուսի վայրում, կամ թեկուզ այլ զինծառայողների ներկայությամբ, սակայն պահի ազդեցության տակ, գայրույթի, տուժողի անիրավաչափ վարքագծի հետևանքով ծագած վրեժի շարժառիթով և այլն, ու չեն խախտել ստորաբաժանման ներքին կարգը), ապա քննարկվող հանցակազմը բացակայում է: Օրինակ՝ 359-րդ հոդվածով չի կարող որակվել այն զինծառայողի արարքը, ով ծառայակցին դուրս է հրավիրել զորանոցից և նրա նկատմամբ բռնություն է գործադրել՝ վերջինիս կասկածելով իր գույքի գողության մեջ: Պետք է նշել, որ արարքի սխալ ո-

րական դեպքերը պայմանավորված են հենց այն հանգամանքով, որ 359-րդ հոդվածը լայն է մեկնաբանվում, ինչը հետևանք է հոդվածի դիսպոզիցիայի ոչ ճիշտ և ոչ հստակ սահմանման:

Վերոգրյալի հետ կապված՝ առաջարկում ենք 359-րդ հոդվածի դիսպոզիցիայի հետևյալ տարբերակը. «Ձինձառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջև ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է տուժողի կողմից իր զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ կամ այդ պարտականությունների կատարման ժամանակ նրա պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով, նրան ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ նրա նկատմամբ բռնություն գործադրելով կամ արտահայտվել է նույն արարքներից որևէ մեկի կատարմամբ, որը թեև կապված չի եղել տուժողի կողմից իր զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ, սակայն ակնհայտորեն զուգորդվել է զինծառայության հարաբերությունների կարգի խախտման հետ և ակնհայտ անհարգալից վերաբերմունք է դրսևորել զինվորական կոլեկտիվի նկատմամբ»:

Մեր կարծիքով՝ այդ առումով խնդրահարույց է նաև ՀՀ քր. օր.-ի 361-րդ հոդվածը, որը պատասխանատվություն է նախատեսում զորամասը կամ ծառայության վայրը ինքնակամ թողնելու, ինչպես նաև առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալու համար: Ընդ որում, հոդվածում նշվում է, որ հանցակազմն առկա է այն դեպքում, երբ զինծառայողը զորամասը կամ ծառայության վայրը ինքնակամ թողել է կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չի ներկայացել երեք օրից ավելի, բայց մեկ ամսից ոչ ավելի տևողությամբ, ինչպես նաև, եթե երեք ամսվա ընթացքում այդ արարքը կատարել է երեք և ավելի անգամ՝ մինչև երեք օր տևողությամբ: Այս հանցագործությունը տարբերվում է ՀՀ քր. օր.-ի 362-րդ հոդվածով նախատեսված դասալքությունից նրանով, որ կատարվում է զինծառայությունից ոչ թե վերջնականապես, այլ ժամանակավորապես խուսափելու համար: Այս առումով հարց է ծագում, թե ինչպես պետք է որակել արարքը, եթե զորամասը կամ ծառայության վայրը ինքնակամ թողնելը կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալը տևում է մեկ ամսից ավելի: Կարելի է ենթադրել, որ նման դեպքերում առկա է դասալքության հանցակազմը, և օրենսդիրն առաջնորդվել է այն տրամաբանությամբ, որ զորամասը կամ ծառայության վայրը ինքնակամ թողնելը կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալը մեկ ամսից ավելի տևողությամբ վկայում է զինծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակի մասին, որը դասալքության հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշն է, և որով, ինչպես արդեն նշել ենք, վերջինս տարբերվում է 361-րդ հոդվածով նախատեսված հանցակազմից: Սակայն օրենքի տառացի մեկնաբանությունը նման եզրակացության հիմք չի տալիս, որովհետև զորամասը կամ ծառայության վայրը ինքնակամ թողնելը կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալը մեկ ամսից ավելի տևողությամբ նույնպես կարող է կատարվել զինծառայությունից ժամանակավորապես խուսափելու նպատակով: Կարծում ենք, որ օրենքի այս բացթողումը լրացնելու համար ճիշտ կլիներ 362-րդ հոդվածում որպես դասալքության ինքնուրույն տեսակ նախատեսել զորամասը կամ ծառայության վայրը ինքնակամ թողնելը կամ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալը մեկ ամսից ավելի տևողությամբ: Այդ դեպքում դասալքությունը կբնորոշվեր հետևյալ կերպ՝ մեկ ամսից ավելի տևողությամբ զորամասը կամ ծառայության վայրը ինքնակամ թողնելը կամ ծառայության չներկայանալը, ինչպես նաև զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով զորամասը կամ ծառայության վայրը ինքնակամ թողնելը կամ նույն նպատակով ծառայության չներկայանալը: Հնարավոր է նաև այլ տարբերակ. մեկ ամսից ավելի տևողությամբ զորամասը կամ ծառայության վայրը ինքնա-

կամ թողնելը կամ ծառայության չներկայանալը նախատեսել որպես դասալքության ինքնուրույն տեսակ՝ նախատեսելով ավելի մեղմ սանկցիա:

VIII. Խրախուսական նորմերի պրոբլեմները

ՀՀ քր. օր.-ի 361-րդ և 362-րդ հոդվածներով նախատեսված են նորմեր, որոնք թույլ են տալիս քրեական պատասխանատվությունից ազատել դասալքություն կատարած կամ գործմասը կամ ծառայության վայրը ինքնակամ թողած անձին: Նշված հոդվածների համաձայն (361-րդ հոդվածի յոթերորդ մաս և 362-րդ հոդվածի չորրորդ մաս)՝ դրանցով նախատեսված հանցանքները առաջին անգամ կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքը կատարել է ծանր հանցանքների զուգորդման հետևանքով: Կարծում ենք, որ նորմի ձևակերպումը դատական հայեցողության տեղիք է տալիս, որովհետև միանշանակ լուծում չի պարունակում: Փաստորեն, հանցանք կատարած զինծառայողը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, կարող է և չազատվել: Հարց է ծագում, թե ինչ չափանիշների հիման վրա պետք է կայացվի անձին քրեական պատասխանատվության ենթարկելու կամ դրանից ազատելու մասին որոշումը: Այստեղ նույնպես հստակություն չկա: Մեր կարծիքով՝ ճիշտ կլիներ միանշանակ լուծումը, ինչն առկա է մի շարք այլ պետությունների քրեական օրենսգրքերում. հանցանքն առաջին անգամ կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքը կատարել է ծանր հանցանքների զուգորդման հետևանքով:

Մեկ այլ պրոբլեմ է ծանր հանցանքների հարցը. ի՞նչը համարել ծանր հանցանք, ինչը՝ ոչ: Կարծում ենք՝ ճիշտ կլիներ օրենքում հատուկ պարզաբանում տալ սրա վերաբերյալ: Մեր կարծիքով՝ ծանր հանցանքներ կարող են համարվել մերձավորի մահը, մերձավորի այնպիսի հիվանդությունը, որը հանցավորի կողմից նրան խնամելու անհրաժեշտություն է առաջացրել, ինչպես նաև այլ զինծառայողի կողմից նրան սպանելու կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու սպառնալիքը: Այլ հանցանքները չեն կարող համարվել ծանր: Պետք է նկատի ունենալ նաև, որ ծանր հանցանքներ չեն կարող համարվել ծայրահեղ անհրաժեշտությունը և անհատապաշտպանության ուժը, որոնք արարքի հանցավորությունը բացառող ինքնուրույն հանցանքներ են:

